# ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

34ՐԴ. ՏԱՐԻԹԻՒ 15 (1665) ՇԱԲԱԹ, ԱՊՐԻԼ 26, 2014
VOLUME 34, NO. 15 (1665) SATURDAY, APRIL 26, 2014

Պաշտօնաթերթ Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allan Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

### ՄԻՇՏ ԽՈՒՆԿ ԵՒ ԽՈՅԱՆՔ ԴԷՊԻ ԼԻՆԵԼԻՈՒԹԻՒՆ

ՏՕՔԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Կանգնած ենք հայոց Ցեղասպանութեան 99-րդ սգատօնի ոգեկոչման եւ մեր անժամանցելի դատը հետապնդելու ուխտի վերանորոգման ազգային դիրքերու վրայ:

Մեր 1.5 միլիոն նահատակներուն արեան կանչը վերստին կը խռովէ մեր հոգիները:

Այդ կանչը աւելի քան մէկ ու կէս միլիոն հաշուող մեր անմեղ նահատակներուն մնայուն պատգամն է մեզի: Այդ պատգամը՝ Ճանաչում, Դատապարտում եւ Հատուցում պահանջող կանչն է, որոնց ամբողջական կենսագործումը միայն պիտի հանգստացնէ անոնց անթաղ ոսկորները:

Տարակոյս չկայ՝ ապրիլեանյիշատակարժան տարելիցի օրերուն, ամէն հայ ինքնութիւն կ'ապրի ներքին խորը դառնութիւն, ժայթքող բողոք, վրիժառութեան պատուէր եւ անարդարութեան մշտանորոգ իրթեհում:

Ինչպէ՞ս կարելի է մոռնալ Ատանայի աւելի քան 30 հազար հայորդիներու սպանդը եւ դառնութիւն չ'զգալ: Ինչպէս կարելի է մոռնալ հայոց դէմ իրագործուած Ցեղասպանութիւնը, որուն զոհ գացին մէկ ու կէս միլիոն հայեր, բռնագրաւուեցան մեր պատմական հողերը: Հրոյ ճարակ դարձան մեր շէները: Փլատակ եղան մեր ճարտարապետական հրաշագործ կոթողները: Փճացան մեր մշակութային անգնահատելի գանձերը եւ մագաղաթէ փրկուողները, դարձած մէյ մէկ պանդուխտ, ցրուեցան աշխարհով մէկ եւ դարձան աշխարհաքաղաքացի...:

Ինչպէս չի վրդովուի հայը, չի բողոքէ, ցասումի ու վրիժառութեան զգացումներու մէջ չի տուայտի՝ երբ այդ բոլորէն ետք, կը տեսնէր ցեղասպան Թուրքիան, որ յամառաբար կ'ուրանար իր գործած աղէտը: Կը մնար անպատիժ: Եւ այդ բոլորի վրայ՝ ան կ'ունենար աշխարհի հոյլ մը գերզօր եւ դաշնակից տէրութիւններու զօրակցութիւնը, անտեսելով իրենց իսկ շեփորած ամէն բարոյական արժանիք:

Ի՞նչն էր արդեօք հայոց յանցանքը...

Առանց մտնելու Օսմանեան գահավէժ կայսրութեան ազգային, ընկերային, քաղաքական, քանթուրքական եւ ցեղապաշտական քաղաքականութեան ոլորտներէն ներս, բաւարարուինք պարզ մէկին՝ հետեւեալ պատասխանով, որովհետեւ անոնք «ՀԱՅ ԷԻՆ», ինչպէս պիտի ըսէր համաշխարհային հռչակ վայելող երգահան եւ երգիչ՝ Շարլ

Շար.ը էջ 18

# Նշելով Հայոց Ցեղասպանութեան 99-Ամեակը

## Հայութիւնը Կը Մերժէ Էրտողանի «Ցաւակցական» Խօսքերը

### Նախագահ Օպամա Դարձեալ Խօսեցաւ Մեծ Եղեռնի Մասին

*Հայկական Ցեղասպանութեան 100-ամեակէն տարի մը առաջ, հայութիւնը ամենուրեք հաւաքուեցաւ նշելու համար իր նահատակներու 99-րդ տարելիցը ու աշխարհին դարձեալ ներկայացաւ որպէս պահանջատէր՝ իր արդար իրաւունքներուն:*



Ծիծեռնակաբերդի Եղեռնի Յուշարձանին առջեւ

#### Երեւան

*Մայրաքաղաք Երեւանի մէջ բազմահազար ժողովուրդ, որոնց շարքին Հայաստանի պետական եւ հոգեւոր իշխանութեան ներկայացուցիչներ, Ամերիկեան Գոնկրէսի անդամներ, Թուրք մտաւորականութեան ներկայացուցիչներ, օտար երկիրներու դեսպաններ եւ սփիւռքէն ժամանած հայեր Ապրիլ 24-ի օրը այցելեցին Ծիծեռնակաբերդի Յուշահամալիր՝ յարգանքի տուրք մատուցելու 20-րդ դարու առաջին Ցեղասպանութեան զոհ դարձած աւելի քան մէկուկէս միլիոն հայերու յիշատակին:*

*Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.-ի գլխաւորութեամբ Յուշարձանի մօտ կատարուեցաւ հոգեհանգստեան արարողութիւն եւ ապա ժողովուրդը, խումբ առ խումբ մօտենալով ծաղիկներ զետեղեցին անմար կրակին շուրջ:*

*Հայաստանի Նախագահ Սերժ Սարգսեան յիշեցուց Թուրքիոյ,*




Տեսարան մը Փասատինայի հանդիսութենէն

*որ մենք Հայոց ցեղասպանութեան 100-րդ շեմին ենք եւ այս ապաշխարելու եւ պատմութեան խարանը մէկ կողմ դնելու հնարաւորութիւն կրնայ ըլլալ Թուրքիոյ համար, եթէ հարեւան երկիրը կարողանայ ուժ գտնել եւ ազատել իրենց պետութեան ապագան՝ այս ծանր բեռէն:*

#### Թուրքիոյ Վարչապետի «Ցաւակցականը»

*Ապրիլ 24-ի նախօրեակին Թուրքիոյ Վարչապետ Ռեջեփ Էրտողան, պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով հանդէս եկաւ յայտարարութեամբ, ուր Թուրք պետութեան անունով ցաւակցութիւն յայտնեց «այն հայերու թոռներուն, որոնք կորսնցուցին իրենց կեանքը 20-րդ դարու սկզբին»:*

*Ութը լեզուներով, որոնց շարքին արեւելահայերէն եւ արեւմտահայերէն հրապարակուած յայտարարութեան մէջ նաեւ ըսուած է- - «Ապրիլի 24-ը ամբողջ աշխարհի հայերուն համար պատմական հարցի շուրջ ազատօրէն խօսելու լաւ առիթ է: Անվիճելի է, որ Օսմանեան կայսրութեան վերջին տարիները, անկախ կրօնէն՝ թուրք, հայ, քուրդ, արաբ եւ այլ միլիոնաւոր մարդկանց համար եղած են դժուարին ժամանակաշրջան էր»: Սակայն Էրտողան իր խօսքին մէջ կը շեշտէ, թէ անընդունելի կը նպաստէ 1915 թուականի իրադարձութիւնները որպէս քաղաքական լարուածութեան միջոց օգտագործելը:*

*Միացեալ Նահանգներու Պետական Քարտուղարութիւնը, իր բանբեր՝ Ճէն Փսաքիի միջոցաւ եկաւ ողջունելու «1915-ին հայերու վերապրած տառապանքներու հրապարակային ճանաչումը վարչապետ Էրտողանի կողմէ»:*

*«Մենք կ'ողջունենք իրադարձութիւնը: կ' ողջունենք յայտարարութիւնը: կը կարծենք, որ այն դրական քայլ էր», - լրագրողներուն ըսաւ Փսաքին*

*Սակայն, Էրտողանի այս «ցաւակցութիւնը» անընդունելի նկատուեցաւ հայ հասարակութեան եւ կազմակերպութիւններուն կողմէ, որոնք անգամ մը եւս պահանջեցին որ Թրքական կառավարութիւնը պաշտօնապէս ճանչնայ Հայոց Ցեղասպանութիւնը:*

#### Պարաք Օպամայի Յայտարարութիւնը

*Ապրիլ 24-ի առթիւ Միացեալ Նահանգներու նախագահ Պարաք Օպամա այս տարի եւս հանդէս եկաւ պաշտօնական յայտարարութեամբ ու դարձեալ խօսեցաւ Մեծ Եղեռնի մասին:*

*«Այսօր մենք կը յիշատակենք Մեծ Եղեռնը եւ անոնց, որոնք զոհուեցան 20-րդ դարու ծանրագոյն նախճիրներէն մէկուն ընթացքին», -ըսուած է Օպամայի ուղերձին մէջ:*

*Օպամա նաեւ կը շեշտէ - «Ես հետեւողականօրէն յայտարարած եմ 1915-ին կատարուածի վերաբերեալ իմ սեփական տեսակէտը, եւ իմ տեսակէտը չէ փոխուած: Փաստերու լիակատար, շիտակ եւ արդարացի ճանաչումը կը բխի մեր շահերէն:*

#### Լոս Անճելըս

*Այս տարի եւս Լոս Անճելըսի ու շրջակայքի հայութիւնը բազմաթիւ միջոցառումներով յիշա-*

Շար.ը էջ 5

# Ո՞ր ուղղութեամբ է շարժւում Հայաստանը Ցեղասպանութեան հարիւրամեակին ընդառաջ

*ՄԵՏԱՔՍԻԱ ՇԱԼՈՒՆՑ*

*2011թ. Ապրիլի 23-ին ստեղծուել է Ցեղասպանութեան 100-ամեակի միջոցառումները համակարգող պետական յանձնաժողով՝ Սերժ Սարգսեանի հրամանագրով, որի նպատակն է՝ Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման եւ դատապարտման գործընթացը խթանելու եւ Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին նուիրուած միջոցառումները համակարգելը: Յանձնաժողովի նախագահը Սերժ Սարգսեանն է, որի հրամանագրով, մի շարք յանձնարարականներ էին տրուել դեռ երեք տարի առաջ ՀՀ նախարարութիւններին, գերատեսչութիւններին, ՀՀ դիւանագիտական ներկայացուցչութիւններին, ՀՀ գիտութիւնների ազգային ակադեմիային: Օրինակ՝ ՀՀ ԱԳՆ-ին յանձնարարուել էր աջակցել սփիւռքում Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին նուիրուած միջոցառումները համակարգող տարածաշրջանային յանձնախմբերի ձեւաւորմանը, իրականացուող աշխատանքների համադրմանը՝ ապահովելով պետական յանձնաժողովի հետ դրանց արդիւնաւէտ փոխգործակցութիւնը: ՀՀ դեսպանութիւններին, գլխաւոր հիւպատոսութիւններին եւ միջազգային կազմակերպութիւններում ՀՀ մշտական ներկայացուցչութիւններին յանձնարարուել էր՝ ակտիւացնել ջանքերը Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման ուղղութեամբ, ապահովել պատշաճ աջակցութիւն եւ մասնակցութիւն իրենց հաւատարմագրման երկրներում ու կառոյցներում կազմակերպուող, Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին նուիրուած միջոցառումներին:*

*Սերժ Սարգսեանը գրեթէ մէկ տարի առաջ մի առիթով նշել էր հետեւեալը. «Համարել ու շարունակում եմ համարել, որ Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանութեան ճանաչումը կարեւոր ու հնարաւոր է հենց այսօր, միգուցէ հենց 100-ամեակի շրջանակներում: Այս առումով մենք իհարկէ մեծ գործ ունենք անելու: Մենք կարող ենք Թուրքիայի հասարակութեան, Թուրքիայի իշխանութիւնների հետ միասին համնել Ցեղասպանութեան 100-րդ տարելիցի հանգրուան, մենք կարող ենք օգնել նրանց գտնելու անցեալի բեռից ազատուելու ճանապարհը ու լինելու իրենց կողքին այդ շատ դժուարին գործընթացում: Կարծում եմ, որ սա շատ կարեւոր ուղղութիւն է մեր յանձնաժողովի աշխատանքներում, եւ մենք առանձնակի ուշադրութիւն պէտք է դարձնենք այդ հանգամանքին: Կարծում եմ, որ որեւէ մէկը ինձ միամիտ տեղ չի դնում: Կարծում եմ, որ որեւէ մէկը չի կարծում, որ ես մեծ յոյս ու հաւատ ունեմ՝ առաւել եւս Թուրք իշխանութիւնների նկատմամբ: Բայց այս ուղղութեամբ աշխատանքները ես մշտապէս կարեւորել եմ, կարեւորում եմ եւ կարեւորելու եմ»:*

*Ստացւում է այնպէս, որ ամէն տարի Ապրիլի 24-ից առաջ Հայոց Ցեղասպանութեան հարցը դառնում է տարբեր երկրների համար, մի տեսակ շահարկման առարկայ: Մենք էլ ակամայից մտնում ենք այդ խաղի մէջ:*

*Ցեղասպանութեան միջազգային ճանաչման գործընթացին, անշուշտ, Հայաստանի իշխանութիւնները պէտք է աջակցեն: Իհարկէ, Թուրքիայի գործող էրդողանական իշխանութիւններից՝ Ցեղասպանութեան ճանաչում ակնկալելը՝ միամտութիւն է: Բայց ի՞նչ է անում, ո՞ր ուղղութեամբ է շարժւում Հայաստանը Ցեղասպանութեան հարիւրամեակին ընդառաջ: Աւելի կոնկրետ՝ 2011թ. Ապրիլի 23-ին ստեղծուած Ցեղասպանութեան 100-ամեակի միջոցառումները համակարգող պետական յանձնաժողովը ի՞նչ է արել երեք տարիների ընթացքում: Որեւէ ձեռքբերում, առհասարակ, կա՞յ այս յանձնաժողովի գործունէութեան արդիւնքում:*

*Մեզանում, կարծես, սովորութիւն է դարձել, Ապրիլի 24-ին հաւաքուելը, ճառեր կարդալը Ցեղասպանութեան մասին եւ ամէն տարի սրտի թրթիռով լսելը, թէ ինչ կ'ասեն այլ երկրների խորհրդարանականներն ու պաշտօնեաները Ցեղասպանութեան մասին, սակայն ինքներս մեր երկրի համար առաջնահերթութիւններ ներկայացնելու ու որեւէ նպատակ իրագործելու հարցում որեւէ քայլ չենք անում:*

*Օրինակ, Հայաստան-Թուրքիա սահմանի փակ լինելը թշնամական գործողութիւն է, միջազգային նորմերի խախտում: Հայկական կողմը ողջ աշխարհին այս հարցում ինչ-որ բան ապացուցելու կարիք չունի, սա ակնյայտ փաստ է, անվիճելի իրողութիւն, որի մասին բոլորը գիտեն: Հետեւաբար, գոնէ Ցեղասպանութեան հարիւրամեակին ընդառաջ Հայաստանը կարո՞ղ է խնդիր դնել միջազգային հանրութեանն առջեւ, որպէսզի պահանջ ներկայացնեն Թուրքիային բացել Հայաստանի հետ սահմանը:*

*Թուրքիան, սահմանի բացումը կապել է ու կապում է Լեռնային Ղարաբաղի հարցի հետ եւ բաւական դժուար է նրան այդ դիրքորոշումից հետ կանգնելու մէջ համոզել, բայց այդ ուղղութեամբ քարոզչութիւն ու աշխատանք գոնէ պէտք է տանել, միջազգային հանրութեան հետ պէտք է աշխատել օրինակ այդ հարցում: Հաւանաբար, կարող են լինել այլ հարցեր, որոնք թէկուզ՝ Ցեղասպանութեան «միջազգային ճանաչում» գրոյից փոքր են, բայց գուցէ աւելի կոնկրետ եւ որոնք բոլորովին էլ չեն խանգարի Ցեղասպանութեան միջազգային ճանաչման մեր ձգտումներին, աւելին՝ գուցէ աւելի օգնեն:*

*Իսկ որեւէ երկրի խորհրդարանում Ցեղասպանութեան վերաբերեալ բանաձեւի ընդունմամբ երջանկանալը բոլորովին էլ մեր կատարած աշխատանքի… արդիւնքը չէ, այդ երկրները Թուրքիայի հետ իրենց յարաբերութիւններում կոնկրետ խնդիրներ են լուծում եւ շատ յաճախ նաեւ Հայոց ցեղասպանութեան հարցով:*

*ՀԱՅԵԼԻ*

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժներ հոն արտայայտուող բոլոր միտքերը

# «Ռեժիմը» 20 տարի նոյնն է: Փոխւում են դրա «վերնագրերը»…

*ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ*

*Անկախ Հայաստանի պատմութեան առնուազն 20 տարում ընդդիմադիր գործիչներն ու մեկնաբանները մշտապէս խօսում են «ռեժիմի» մասին՝ այդ գոյականի կողքը դնելով տուեալ պահին նախագահի աթոռը զբաղեցնող անձի անուն ազգանունը: Նկատի է առնւում, որ ռեժիմը մարմնաւորող անհատի իշխանութիւնից հեռացումը կը բերի այդ ռեժիմի, այսինքն՝ քաղաքական համակարգի փոփոխութեան: Ընդհանրապէս հրապարակախօսութեան մէջ «ռեժիմ» եզրը սովորաբար օգտագործւում է բացասական իմաստով. որքան գիտեմ, ոչ ոք չի ասում «Օբամայի ռեժիմը» կամ «Օլանդի ռեժիմը»՝ հաւանաբար, այն պատճառով, որ այդ երկրներում պետական իշխանութիւնն իրականացւում է քաղաքացիների, ոչ թէ յիշեալ անձանց կամքով: Եւ այդ պատճառով կարելի է ասել՝ «Պուտինի ռեժիմ», «Լուկաշենկոյի ռեժիմ», «Նազարբաեւի ռեժիմ» եւ այլն: Ջնայած Բելառուսի եւ Ղազախստանի քաղաքացիները, որոնք հրապարակաւ կ'արտաբերեն համապատասխան բառակապակցութիւնները, կարող են խնդիրներ ունենալ: «Ռեժիմ» բառն, այսպիսով, ժողովրդավարական երկրների նկատմամբ սովորաբար չի կիրառւում, սակայն միանգամայն կիրառելի է տոտալիտար կամ աւտորիտար համակարգերի նկատմամբ: Հայաստանը, ինչպէս յայտնի է, երկրորդ դէպքն է: Աւտորիտար ռեժիմի գլխաւոր յատկանիշներից մէկն է, մասնաւորապէս, ազատ ընտրութիւնների բացակայութիւնը, ինչը բերում է բազմաթիւ բացասական հետեւանքների, որոնց թւում՝ զուտ քաղաքական մրցակցութեան, գաղափարական պայքարի բացակայութիւն, կուսակցութիւններ չկայացած վիճակ եւ այլն: Աւտորիտար ռեժիմները նոյնպէս տարբեր են լինում:*

*1993-ին «Երկրապահ կամաւորական միութեան» («ՀՀՇ-ի ռազմական թեւի») ստեղծումից յետոյ մեր աւտորիտարիզմն աւելի հակուեց ռազմաբիւրոկրատական տարատեսակին: 2000-ականներից սկսած Հայաստանեան աւտորիտար ռեժիմում ընդգծւում էին անձնիշխանութեան տարրերը: Եւ վերջապէս, 2011 թուականին գարնանից եւ յատկապէս Յովիկ Աբրահամեանի՝ վարչապետ նշանակելուց յետոյ մեզ մօտ ձեւաւորւում է այն, ինչ մասնագէտներն անուանում են «կորպորատիւ աւտորիտարիզմ», որտեղ առկայ է տնտեսական եւ սոցիալական բաւականին զարգացած պլիւրալիզմ, եւ որտեղ վերնախաւը պայմանաւորւում է կորպորատիւ ներկայացուցչութեան մասին: Այդպիսի ռեժիմներ իրենց բազմազանութեան մէջ ներկայացուած են Լատինական Ամերիկայի պետութիւններում: Հայաստանում ռեժիմը մշտապէս աւտորիտար էր: Վերագրել որեւէ նախագահին դրա «հեղինակային իրաւունքը», իհարկէ, կարելի է, բայց դա արդէն զուտ քաղաքական պայքարի շրջանակներում է: Ընդ որում, հետաքրքիր է, որ նախորդ աւտորիտար ռեժիմի գլխին կանգնած մարդկանց կողմնակիցները «ռեժիմային» մեղադրանքներ են հնչեցնում յաջորդների հասցէին: 20 տարի առաջ ինձ թւում էր, որ այդպիսի ռեժիմի պայմաններում հնարաւոր է հասնել տնտեսութեան արդիւականացման եւ բարձր ցուցանիշների՝ Սինգապուրի կամ Հարաւային Կորեայի օրինակով: Բայց քանի որ վիճակն արդէն ձգւում է երկու տասնամեակ, ակնյայտ է դառնում, որ Հայաստանի դէպքում քաղաքական ռեժիմը խոչընդոտում է տնտեսական զարգացմանը: Հետեւաբար, զուտ պրագմատիկ անհրաժեշտութիւն կայ, որ Հայաստանը պէտք է դառնայ ժողովրդավարական երկիր: Ինչպէ՞ս: Առնուազն երկու քաղաքական ուժեր պնդում են, որ այդ խնդիրը հնարաւոր է լուծել՝ Սերժ Սարգսեանին իշխանութիւնից հեռացնելով: Նրանք, իհարկէ, այնքան միամիտ չեն, որ հաւատան սեփական պնդմանը: Մասնաւորապէս, նրանք շատ լաւ գիտեն, որ այս պահիս Հայաստանում հնարաւոր չէ անցկացնել ազատ ընտրութիւններ, եւ նրանք, ում ձեռքին այդ հրաժարականի պահին լինեն վարչական լծակներն ու փողը, կը կեղծեն ընտրութիւններն իրենց օգտին: Բայց մարդկանց գլուխներում լինում են սեւեռուն գաղափարներ, որոնցից դժուար է հրաժարուել: Բացի այդ, 20 տարուայ քաղաքական աւանդոյթը պնդում է. եթէ դուք չէք պայքարում Սերժ Սարգսեանի (Լեւոն Տէր-Պետրոսեանի, Ռոբերտ Քոչարեանի) հրաժարականի համար, ուրեմն դուք՝ ուզում էք, որ ամէն ինչ մնայ նոյնը եւ… Բայց եթէ այդ «աւանդական» դիրքորոշումը ճիշդ է, ապա կարելի է գրել նոր քաղաքագիտական վերլուծութիւն, ըստ որի՝ ընդդիմութիւնը պէտք է համագործակցի ՀՀԿ-ի հետ, որպէսզի Յովիկ Աբրահամեանի միջոցով տապալի Սերժ Սարգսեանի ռեժիմը: Միայն թէ պարզ չէ՝ Սերժ Սարգսեանի՞ն, թէ՝ ռեժի՛մը:*

*«ԱՌԱՒՕՏ»*

**ՄԱՍԻՍ** ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

**MASSIS Weekly**

Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA

1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $80.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

### Հայաստանի Վարչապետը Արձագանքում է Ռոբերտ Քոչարեանի հարցազրոյցին

Ինձ զարմանալի թուացին Սահմանադրական բարեփոխումների անհրաժեշտութեան բացակայութեան վերաբերեալ Ռոբերտ Քոչարեանի դիտարկումները: Այս մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում յայտարարել է Հայաստանի նորանշանակ վարչապետ Յովիկ Աբրահամեանը՝ անդրադառնալով Ռոբերտ Քոչարեանի վերջին հարցազրոյցին:

Նա մասնաւորապէս ասել է. «Անշուշտ, ուշադիր ընթերցել եմ Ռոբերտ Քոչարեանի հարցազրոյցը: Ես իսկապէս շնորհակալ եմ երկրորդ նախագահին ՀՀ վարչապետի պաշտօնում նշանակուելու առթիւ բարեմաղթանքների եւ իմ նախկին աշխատանքը դրական գնահատելու համար: Ինձ միայն զարմանալի թուացին Սահմանադրական բարեփոխումների անհրաժեշտութեան բացակայութեան վերաբերեալ պարոն Քոչարեանի դիտարկումները: Ակնյայտ է, որ դրանց անհրաժեշտութեան մասին Հայաստանի քաղաքական ուժերը խօսում են արդէն տարիներ շարունակ, իսկ մեր երկրի առջեւ ծառացած մի շարք կարեւորագոյն խնդիրների արդիւնաւէտ լուծումները պայմանաւորուած են Սահմանադրութեան փոփոխութեամբ:

Նախագահ Սերժ Սարգսեանը բաց, ի լուր աշխարհի յայտարարեց իր ծրագրերի մասին՝ զերծ պահելով սահմանադրական բարեփոխումները անձնաւորումից: Սա արդար է, ազնիւ ու ճիշդ: Վստահ եմ, որ եթէ մեր քաղաքական ուժերն ու գործիչները հետեւեն Սերժ Սարգսեանի օրինակին, յստակ, առանց տողատակերի բացեն իրենց ապագայ ծրագրերը, ապա մենք, որպէս երկիր, իսկապէս կը կարողանանք կարճ ժամանակահատուածում նաեւ սահմանադրական բարեփոխումների միջոցով լուրջ դրական տեղաշարժ արձանագրել հետագայ զարգացման ճանապարհին:

Ինչ վերաբերում է իշխանութիւնների գործունէութեան արդիւնքների գնահատականին, ապա այն տալու է ժամանակը, որն օբիեկտիւ է, լայն տեսնել գիտի ու զերծ է չարախնդութիւնից»:

### «Ռոբերտ Քոչարեանն «Ափաշքարա» Ասաց, Որ Իշխանութիւն է Վերադառնու»

Ռոբերտ Քոչարեանն իր հարցազրոյցում «ափաշքարա» (բացէիբաց խ.) ասաց այն, ինչ մտածում է: NEWS.am-ի հարցին՝ արդեօք ենթատեքստ կար Քոչարեանի տուած վերջին հարցազրոյցում, այսպէս պատասխանեց քաղտեխնոլոգ Կարէն Քոչարեանը:

«Աւելի «ափաշքարա» չի լինում, Քոչարեանն ասում էր, որ Սերժ Սարգսեանն իրեն պիտի «գարանտիա» տա, որ անպայման հեռանալու է: Բացի դրանից Հայաստանի երկրորդ նախագահը նաեւ իշխանութիւններին եւ հասարակութեանը հասկացնում էր, որ ինքը վերադառնալու է իշխանութեան եւ լինի քաղաքական դաշտում»,- ասաց նա:

Քաղտեխնոլոգը համոզուած է, որ հենց իշխանութեան գալու համար է Ռոբերտ Քոչարեանը դէմ Սահմանադրական բարեփոխումներին:

«Սակայն պէտք է հաշուի առնել, որ բարեփոխումների վերաբերեալ Հայաստանի նախկին եւ ներկայիս նախագահներն ունեն նոյն կարծիքը, բարեփոխումների դէմ են նաեւ խորհրդարանական ուժերը, բայց Դաշնակցութիւնից»,- աւելացրեց Կարէն Քոչարեանը:

Նշենք, որ Ապրիլի 22-ին 2rd.am-ին տուած հարցազրոյցում Հայաստանի երկրորդ նախագահն անդրադարձել էր Սահմանադրական բարեփոխումներին՝ նշելով, որ ինքը դէմ է դրանց:

«Ներկայումս առաջարկւում է երկրի պետական կառավարման մոդելի արմատական փոփոխութիւն եւ անհրաժեշտ են միանշանակ երաշխիքներ առ այն, որ բարեփոխումն ուղղուած չէ կառավարող էլիտայի շահերի սպասարկմանը եւ չի դառնայ դրա վերարտադրման գործիք: Սահմանադրութեան ցանկացած վերաձեւում յանուն քաղաքական գործիչների ընթացիկ շահերի՝ երկրի քաղաքական դեգրադացման նշանն է»,- ասել էր նա:

### Սերժ Սարգսեանին Զայրացրեց Ակադեմիկոսի Խօսքը Սեւանի Ջրի Մասին

Սերժ Սարգսեանին զայրացրեց ակադեմիկոս Ռուբէն Ջրբաշեանի այն յայտարարութիւնը, թէ չի կարելի թոյլ տալ, որ Սեւանից մեծ ծաւալով ջրի բացթողումներ կատարուեն:

Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի տարեկան ժողովում Ջրբաշեանը, մասնաւորապէս, կոչ արեց Ակադեմիային արգելել Սեւանից ջրի բացթողումը՝ ընդգծելով, որ Սեւանայ լիճը ոչ միայն բնապահպանական, այլ նաեւ ռազմավարական, հայ ժողովրդի գոյատեւման օբիեկտն է:

«Մեր ժողովուրդը կարող է այստեղից վերանալ, եթէ չունենալ ջուր: Յարգելի ընկերներ, յարգելի դեպուտատներ, ինչպիսի հեշտութեամբ դուք ձեր՝ անկարողութիւն ասեմ, անընդունակութիւն ասեմ, շատ կարճ ժամանակային հարցերը լուծելու համար այսպիսի հեշտութեամբ դնում էք Սեւանի ջրի աւելցուկը բացելու հարցը», - յայտարարեց ակադեմիկոսը:

Նշենք, որ Կառավարութեան Յունուարի 30-ի որոշմամբ, որն առաջիկայում պէտք է հաստատուի Ազգային ժողովի կողմից, առաջարկւում է մինչեւ 2019 թուականը աւելի քան 40 տոկոսով աւելացնել Սեւանի ջրի բացթողման տարեկան ծաւալները:

«Մենք աւելացնում ենք Սեւանի հօսքը, որից կ՚օգտագործենք մի 20-30 տոկոս, 70 տոկոսը կ՚ուղարկենք Նախիջեւան: Ջուրը պահել չենք կարողանում: Եթէ գիւղացին փող չունի, ենթադրենք, ջուր չենք տալիս նրան ջրելու, էդ ջուրն ինչ է լինում՝ գնում է Ադրբեջան», - ասաց Ջրբաշեանը՝ շարունակելով- - «Մենք զրկում ենք, թէկուզ անվճար տալուց, զրկում ենք մեր գիւղացուն ջրից՝ ջուրն ուղարկում ենք Ադրբեջան»:

Սերժ Սարգսեանին ակնյայտօրէն դուր չեկան Ջրբաշեանի այս խօսքերը:

«Եթէ պրոբլեմներ են առաջացել՝ կապուած բնակլիմայական պայմանների հետ եւ այլն, ի՞նչ էք առաջարկում, որպէսզի Արարատեան դաշտավայրը չորանայ՞, էս տարի բերք չունենա՞նք, ինչ է թէ 100 խորանարդ մետր ջուր չպիտի վերցնենք էն աւելցուկից, որ կուտակել ենք: Դե էդ դէպքում ամէն ինչը փակենք, ընդհանրապէս, ոչ հանք օգտագործենք, ոչ ջուր օգտագործենք, ոչինչ չօգտագործենք, ասենք՝ էս ամբողջը պահում ենք, վաղը կարող է պէտք գայ», - ասաց Նախագահը:

### Ազատամարտիկներին ՀՀԿ Գրասենեակի Մօտ Դիմաւորեցին Մի Քանի Շարք Ոստիկաններ



Ազատամարտիկները հաւաքուած՝ ՀՀԿ կենտրոնական գրասենեակի առջեւ

Դաշտային հրամանատարների խորհրդի անդամ-ազատամարտիկները Հանրապետութեան հրապարակից Ապրիլի 23-ին, ոստիկանների ուղեկցութեամբ երթով գնացել են ՀՀԿ կենտրոնական գրասենեակ՝ պահանջելու ազատ արձակել խարդախութեան համար մեղադրուող ազատամարտիկ, պահեստազօրի գնդապետ Վոլոդիա Աւետիսեանին եւ Նոյեմբերի 5-ին ոստիկանների հետ բախումների ժամանակ կալանաւորուած Շանթ Յարութիւնեանին:

Ազատամարտիկներին գրասենեակի առջեւ դիմաւորել են մի քանի շարքով պատ կազմած ոստիկանները:

«Մենք բազմաթիւ անգամ ապացուցել ենք, որ մի ծաղկով գարուն կը գայ եւ մի ձեռքն էլ ծափ կը տայ, եւ հիմա մենք ենք այդ ծաղիկն ու մէկ ձեռքը: Մեզ ոչ մի դահլիճ պէտք չի եւ եթէ նոյնիսկ Սերժ Սարգսեանը գայ եւ ասի, որ մեզ դահլիճ է տրամադրում, մեզ ոչ մի դահլիճ պէտք չի»,- յայտարարեց ազատամարտիկ Խաչիկ Աւետիսեանը:

Նշենք, որ ազատամարտիկները բողոքում են, որ որ իրենց արդէն չորս ամիս համերգասրահների տնօրէնները խոստանում են դահլիճ տրամադրել, սակայն երկու օր անց զանգում եմ, ասում, որ ընտանիք ունեն, չեն ուզում աշխատանքից զրկուել, ու եթէ իմանային, որ ազատամարտիկ են, չէին համաձայնի: Այսօր Հանրապետութեան հրապարակում նրանք նոյնիսկ սպառնացին, որ եթէ նոյնիսկ դահլիճ չտրամադրեն, իրենք կը դիմեն ծայրայեղ միջոցների՝ փակելով Աբովեան փողոցը:

NEWS.am-ի թղթակիցը հաղորդում է, որ ելոյթ ունեցող ազատամարտիկները կանգնած էին գրասենեակի դիմաց գտնուող հիմնադրամի աստիճաններին, իսկ մի քանի շարքով պատ կազմած ոստիկանները՝ հենց գրասենեակի մուտքի մօտ:

### «Դէմ Եմ»-ը Չի Շտապում Ուրախանալ Յովիկ Աբրահամեանի Յայտարարութիւնից

«Դէմ Եմ» քաղաքացիական նախաձեռնութիւն չի շտապում ուրախանալ Հայաստանի նորանշանակ վարչապետ Յովիկ Աբրահամեանի Ապրիլի 23-ին, կառավարութեան նիստում արուած յայտարարութեանը, թէ այս պահին «պարտադիր» բաղադրիչը դե ֆակտօ կասեցւում է: Այս մասին NEWS.am-ին ասաց նախաձեռնութեան անդամ Գէորգ Գորգիսեանը:

«Մեր դառը փորձը հաշուի առնելով՝ չենք շտապում ուրախանալ: Երբ որ յստակ կ՚ասուի, որ «պարտադիր» բաղադրիչը հանւում է, այդ ժամանակ էլ կ՚ուրախանանք եւ կը յայտարարենք մեր յաղթանակի մասին»,- ասաց նա:

Ամէն դէպքում նախաձեռնութիւնն Ապրիլի 28-ին ամենայն հաւանականութեամբ կը հաւաքուի Ազգային ժողովի մօտ, որտեղ քննարկուելու է կառավարութեան ներկայացրած նախագիծը՝ կուտակային կենսաթոշակների մասին նոր օրէնքի վերաբերեալ:

Յիշեցնենք, որ Ապրիլի 18-ին Հայաստանի նախագահի նստավայրի մօտ հաւաքուած «Դէմ Եմ» շարժման հետ հանդիպման եկած Յովիկ Աբրահամեանը խոստացել էր կայացնել որոշում, որը կը բխի քաղաքացիների շահերից, բացի դրանից առաջարկել էր 10 հոգանոց պատուիրակութեան հետ հանդիպում՝ քննարկելու կուտակայինի հարցը, սակայն հաւաքուածները հրաժարուել էին: Ապրիլի 22-ին նորանշանակ վարչապետը կուտակայինի հարցը քննարկել էր խորհրդարանական 5 ուժերի հետ: Հայ ազգային կոնգրէսը հրաժարուել էր հանդիպումից:

## ԼՈՒՐԵՐ

# «Թուրքական Լոբբիստների Ազդեցութիւնը Թուլացել է»

«Թուրքիան պէտք է գիտակցի, որ հիմա աշխարհում ընդհանուր առմամբ ընդունուած է այն տեսակէտը, որ 1915 թուականին թուրքերը հայերի նկատմամբ ցեղասպանութիւն են իրականացրել», - Today's Zaman-ին տուած հարցազրոյցում ասել է ամերիկեան Մարշալի հիմնադրամի Անկարայի գրասենեակի տնօրէն, միջազգային յարաբերութիւնների եւ քաղաքացիական հասարակութեան հարցերով փորձագէտ Օզգիւր Ունլյուհիսարջիքլին:

«Այլ երկրներում արդէն իսկ նման ընկալում գոյութիւն ունի, իսկ 2015 թուականին, քանի որ իրադարձութիւնների հարիւրամեակն է եւ այն պատճառով, որ զանգուածային լրատուամիջոցները լայնօրէն կը կիրառուեն, այդ տեսակէտը է՛լ աւելի կ՚ամրապնդուի ողջ աշխարհում», - յաւելել է նա:

Բացի այդ, ըստ փորձագէտի, հնարաւոր է, որ որոշ կառավարութիւններ հարիւրամեակին ընդառաջ բանաձեւեր ընդունեն՝ 1915 թուականի իրադարձութիւնները որպէս ցեղասպանութիւն ճանաչելով:

Ինքը վերլուծաբանը անձնապէս 1915 թուականի իրադարձութիւնները ցեղասպանութիւն չի համարում, ասում է՝ զանգուածային կոտորած եղել է, բայց ցեղասպանութիւն բառը չի կիրառում: Ունլյուհիսարջիքլին կարծում է, որ այդ բնորոշումը տալու կամ չտալու հարցը պէտք է պատմաբաններն ու իրաւագէտները քննարկեն: Այնուամենայնիւ, ըստ նրա, երկու կողմերն էլ պէտք է պատրաստ լինեն դուրս գալ պաշտօնական պատմութեան եւ սեփական նախապաշարումների սահմաններից: Հայերը պէտք է պատրաստ լինեն վերանայել իրենց դերակատարութիւնը 1915 թուականի եւ դրան նախորդած դէպքերում, թուրքերը եւս պէտք է պատրաստ լինեն փոխել իրենց կարծիքն ու քննարկումների համար ազատ մթնոլորտ պէտք է ապահովեն:

«Նրանք, ովքեր կարծում են, որ 1915 թուականին ցեղասպանութիւն է տեղի ունեցել, չպէտք է պիտակաւորուեն որպէս ազգի դաւաճաններ», - կարծում է Օզգիւր Ունլյուհիսարջիքլին, - «Հարցը պէտք է բաց եւ ազատ քննարկուի, մինչդեռ մենք անցեալում ականատես ենք եղել, որ մարդիկ, ովքեր գիտաժողովների ընթացքում 1915 թուականի իրադարձութիւնները ցեղասպանութիւն են անուանել, մեղադրուել են պետական դաւաճանութեան մէջ: Նման բան չպէտք է լինի»:

Թուրքերը պէտք է պատրաստ լինեն վերանայել այն, ինչ տեղի է ունեցել 1915 թուականին, հասարակական կարծիք ձեւաւորող գործիչներն ու գիտական շրջանակների ներկայացուցիչները պէտք է պատրաստ լինեն իրենց կարծիքը փոխել:

«Մինչ երկու երկրների միջեւ սահմանները բացելը, երկու կողմի ժողովուրդները պէտք է ջանքեր գործադրեն իրենց հոգում եւ մտքում սահմանները բացելու ուղղութեամբ», - յայտարարել է Ունլյուհիսարջիքլին:

Անդրադառնալով Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին ընդառաջ հայկական կազմակերպութիւնների եւ լոբբիստների ձեռնարկելիք քայլերին՝ թուրք վերլուծաբանը կարծիք է յայտնել, որ թուրքերը չափազանցուած մօտեցում ունեն հարցի նկատմամբ, թէեւ երբեմն չափազանց մեծ աղմուկը մարտավարական բնոյթ է կրում՝ թոյլ չտալու համար, որ բարեկամ կառավարութիւններն այս հարցով բանաձեւեր ընդունեն:

Այս տարի Միացեալ Նահանգների Կոնգրէսում հայանպաստ բանաձեւի ընդունման հաւանականութիւնը վերլուծաբանն առաւել հաւանական է համարում նախորդ տարիների համեմատութեամբ, քանի որ այժմ Անկարայի եւ Վաշինգտոնի յարաբերութիւնները լաւագոյնը չեն: Հարիւրամեակին ընդառաջ հայկական կազմակերպութիւնները աւելացնում են ճնշումը, ու թէեւ նրանց աջակցութեամբ Կոնգրէսի յանձնաժողովներում յայտնուած բանաձեւերը թուրքական լոբբին հիմնականում կարողացել է կանխել եւ դրանք չեն հասել Ներկայացուցիչների պալատ կամ Սենատ, սակայն վերջերս Սենատի արտաքին յարաբերութիւնների յանձնաժողովն ընդունեց Հայոց ցեղասպանութիւնը յիշատակող բանաձեւ՝ այսպիսով ճանապարհ հարթելով Սենատում դրա քուէարկութեան համար, ինչը, ըստ վերլուծաբանի, վկայում է, որ թուրքական լոբբիստների ազդեցութիւնը Վաշինգտոնում թուլացել է:

«Սակայն Թուրքիան կարող է քայլեր ձեռնարկել՝ Միացեալ Նահանգներում իր բարեկամների համար առաւել դիւրացնելով նման բանաձեւի ընդունման կասեցումը, ամենակարեւորը այս հարցում, իհարկէ, Թուրքիայի յարաբերութիւններն են Հայաստանի հետ»,- շեշտել է Ունլյուհիսարջիքլին: Ընդհանուր առմամբ, ըստ փորձագէտի, Թուրքիան չպէտք է կենտրոնանայ հարիւրամեակի վրայ, այլ դրա փոխարէն պէտք է պատրաստուի 2015 թուականից յետոյ սպասուող իրավիճակին, քանի որ ինչ էլ տեղի ունենայ 2015 թուականին՝ Թուրքիայի համար արդէն չափազանց ուշ է դա կանխելը:

Մարշալի հիմնադրամի Անկարայի գրասենեակի ղեկավարի կարծիքով՝ թուրք - հայկական մերձեցումը չի կարող մի տարուայ ընթացքում կայանալ, աւելի շատ ժամանակ է անհրաժեշտ թէ՛ թուրքերին, թէ՛ հայերին՝ վստահութեան ամրապնդման միջոցներ ձեռնարկելու համար:

Հայկական լոբբին ակտիւացնում է իր գործողութիւններն ու մեծացնում ճնշումը, իսկ ինչ է անում թուրքական լոբբին: Թուրք վերլուծաբանն ասում է, որ թուրքական լոբբին աշխատում է երկու ուղղութեամբ՝ նախ, փորձում է ամերիկեան պաշտօնեաներին համոզել, որ Թուրքիայի հետ ռազմավարական յարաբերութիւնները Միացեալ Նահանգների համար առաւել կարեւոր են, քան առանձին լոբբիի շահերը, եւ երկրորդ՝ Միացեալ Նահանգներում թուրքական կազմակերպութիւնները քննարկման են դնում այլ պետութիւնների կողմից Օսմանեան կայսրութեան մահմեդականների կոտորածների հարցը՝ ցանկանալով ընդգծել, թէ միայն հայերը չեն, որ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ սպանդի են ենթարկուել:

# Քուրդ եւ Ալաւի Մտաւորականների Հանդիպումը ՍԴՀԿ Ղեկավարութեան Հետ



Քուրդ եւ ալաւի գործիչներ ՍԴՀԿ Երեւանի գրասենեակէն ներս

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան Հայաստանի վարչութեան ատենապետ Նարեկ Գալստեանն ու վարչութեան անդամները հիւրընկալեցին այս օրերին Հայաստանում գտնուող քուրդ եւ ալաւի գործիչներին, ովքեր մեր երկիր են այցելել Ցեղասպանութեան զոհերի յիշատակը յարգելու նպատակով:

Պատուիրակութեան կազմում էին Քրդական Ազգային Կոմիտէի Գերմանիայի ներկայացուցիչ Եքսիլ Քոչը, Եւրոպայի Խաղաղութեան եւ Դեմոկրատական Մեջլիսի նախագահ Ռոժա Եըլդըրըմը, Եւրոպայի Ալաւիների Կոնֆեդերացիայի ներկայացուցիչ Ալի Էքբեր Բեքթաշը, Եւրոպայի Գաղթականների Կոնֆեդերացիայի նախագահ Շաֆակ Արապաճը, Նոր Զարթօնք հայկական կազմակերպութեան Եւրոպայի ներկայացուցիչ Ալեքսիս Քալքը, Իսթանպուլի Նոր Զարթօնքի բանբեր Սայաթ Թեքիրը:

Քուրդ եւ ալաւի գործիչները հանդիպման ընթացքում միաբերան իրենց աջակցութիւնը յայտնեցին հայ ժողովրդին, դատապարտեցին Թուրքիայի պաշտօնական քաղաքականութիւնը՝ ուղղուած Հայոց Ցեղասպանութեան ժխտմանը:

Քուրդ եւ ալաւի գործիչները նշեցին, որ Հայոց Ցեղասպանութեան ճանաչումն ու դատապարտումը ոչ միայն հայերի, այլ նաեւ Թուրքիայում բնակուող բոլոր ազգային փոքրամասնութիւնների պայքարն ու նպատակն է:

Նարեկ Գալստեանը նկատեց, որ ՍԴՀԿ-ի պայքարն ուղղուած է ոչ թէ թուրք ժողովրդի, այլ Թուրքիայի պետական քաղաքականութեան դէմ, որ արդէն շուրջ 100 տարի է ուրանում է Հայոց Ցեղասպանութիւնը, շարունակում հակահայ քաղաքականութիւն:

# Նալբանդեան. «Ճանապարհային Քարտէզը Գործնականում Կատարուած է»

Հայաստանի արտգործնախարար Էդուարդ Նալբանդեանը եւ Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն Մինսկում կայացած հանդիպման ժամանակ քննարկել են Մաքսային Միութեան ընդլայնման եւ յետխորհրդային եւրասիական ինտեգրման հեռանկարները, հաղորդում է «Ռեգնում» լրատուական գործակալութիւնը:

Ռուսաստանեան գործակալութեան փոխանցմամբ, Լուկաշենկոն Նալբանդեանի ուշադրութիւնը հրաւիրել է երեք առանցքային հարցերի վրայ՝ միջազգային հիմնախնդիրներ, հայ - բելառուսական երկկողմ յարաբերութիւններ եւ Ռուսաստանի, Բելառուսի ու Ղազախստանի ինտեգրացիոն միաւորումներին Հայաստանի անդամակցութիւն:

Մասնաւորապէս, քննարկուել է Մաքսային Միութեանը եւ Եւրասիական տնտեսական տարածքին Հայաստանի լիիրաւ անդամակցութեան հեռանկարը այն պայմաններում, երբ «ինտեգրացիոն եռեակի» ղեկավարները պատրաստւում են Ապրիլի 29-ին Մինսկում Եւրասիական բարձրագոյն տնտեսական խորհրդի նիստի ժամանակ ստորագրել Եւրասիական միութեան ստեղծման մասին պայմանագիրը:

Հայաստանի արտգործնախարարը յայտնել է, որ պաշտօնական Երեւանը իրականացնում է Մաքսային Միութեանը անդամակցութեան ուղղութեամբ իր ստանձնած պարտաւորութիւնները, եւ արդէն «գործնականում կատարուած է [Մաքսային Միութեանը Հայաստանի անդամակցութեան] ճանապարհային քարտէզը», ինչի մասին կը զեկուցուի Ապրիլի 29-ին Մինսկի գագաթնաժողովում:



## Հայոց Ցեղասպանութեան 99-Ամեակը




Տեսարան մը Հոլիվուտի ցոյց

Շարունակուած էջ 1-էն

տակեց Ցեղասպանութեան տարելիցը:

Ապրիլ 24-ի առաւօտեան Հոլիվուտի մէջ տեղի ունեցաւ Միացեալ Հայ Երիտասարդութեան կազմակերպած ցոյցը, որու ընթացքի հազարաւոր հայեր քալեցին «Փոքր Հայաստան»-ի բողոցներով:

տարելիցի միջոցառում տեղի ունեցաւ նաեւ Պոլսոյ կեդրոնական Թաքսիմ հրապարակին վրայ:

### Լիբանան

Ապրիլ 23-ին Հազարաւոր Լիբանանահայեր միասնական շարքերով քալեց դէպի Կեդրոնական Պէյրութի Նահատակաց հրապարակ, որ ինքնին ականատեսն է ցեղասպան




Տեսարան մը Պոլսոյ միջոցառումէն

Նոյն ժամուն Փասատինայի քաղաքապետարանին առջեւ տեղի ունեցաւ տպաւորիչ հանդիսութիւն մը, որու ընթացքին ելոյթ ունեցան ԱՄՆ Գոնկրէսական ճուտի Ջու, Հայ Կաթողիկէ առաջնորդ Հայր Անտոն Ադամեան, ՍԴՀԿ Կեդրոնական վարչութեան անդամ Ընկ. Տօքթ. Համբիկ Սարաֆեան եւ ուրիշներ:

Հանդիսութիւնը վարեց Պրն. Լեւոն Քէշիշեան: Դրօշակներու

Թուրքիոյ չարիքներուն: Երեխաներ, պատանիներ, երիտասարդներ, կիներ, տղամարդիկ ու երէցներ հայահոծ շրջաններէն մոմերով ուղղուեցան Պէյրութի Նահատակաց հրապարակ, ուր տեղի ունեցաւ հաւաք՝ կազմակերպութեամբ Հայոց Ցեղասպանութեան 100 ամեակի Լիբանանի Երիտասարդական Մարմինին:

Երիտասարդական Մարմինին անունով արաբերէնով խօսք առաւ



Տեսարան մը Պէյրութի Նահատակաց հրապարակի միջոցառումէն

արարողութիւնը կատարեցին ՀԲԸՄ-ի սկաուտները:

Կեսօրէ ետք հանդիսութիւն տեղի ունեցաւ նաեւ Մոնթեպելլոյի Եղեռնի Յուշարձանին առջեւ:

### Պոլիս

Թուրք մտաւորականներու կազմակերպութեամբ Ցեղասպանութեան

Արամ Գարատաղլեան:

Երիտասարդներուն հայերէն խօսքը փոխանցեց Աշոտ Բագրատունի:

Նախկին ներքին գործոց նախարար Զիատ Պարուտ յիշեցուց, որ 1915-ին տարածաշրջանը ականատես դարձած էր ջարդերու, որոնց զոհ գացին անմեղ անձեր: Պարուտ շեշտեց

## ՉԵՆՔ ԱՂԵՐՍԵՐ, ԱՅԼ՝ ԿԸ ՊԱՀԱՆՋԵՆՔ

99 տարիներ մեզ կը բաժնեն այն ահասարսուռ Թուականէն, որ անկիւնադարձայի նշանակութիւն ունեցաւ մեր պատմութեան համար, հոգեբանական ցնցում առաջացուց հայ մարդու հոգեկերտուածքին մէջ եւ դառն դաջուածքով դրոշմուեցաւ Թեան մտապաստառին վրայ:

Այսօր, իւրաքանչիւր հայորդի եթէ մէկ կողմէ կը սգայ Մեծ Եղեռնի նահատակներու անմեռ յիշատակը, եթէ կը խոնարհի անշիրիմ զոհերու խնկելի յիշատակին դիմաց, ապա միւս կողմէ վրիժառութեան ցասումին կը միացնէ պահանջատիրութեան ոգին, լինելութեան կամքը եւ արդար ու իրաւ պայքարին հուրը: Ոչ տարիներու Թաւալքը եւ ոչ սերունդներու փոփոխութիւնները կարողացան ընկրկումի եւ յուսաբեկութեան մատնել մեր ժողովուրդին իրաւատիրութեան գիտակցութիւնն ու վճռականութիւնը: Եւ ահա դէպի հարիւրամեակ՝ նոր Թափ ու եռանդ կը ստանայ մեր պահանջատիրական երթը եւ ահա լի ու բուռն բնոյթ կը կրէ ցեղասպան Թուրքիոյ ուրացման դէմ մեր գայրոյթն ու անտեղիտալի զուպարը:

Անտարակոյս, անհնար է ճիշդ չափորոշել հայոց կորուստներուն քանակն ու որակը՝ մարդկային զոհերէ մինչեւ նիւթական արժէքներ, մշակութային անգնահատելի գանձերէ մինչեւ ազգային-հոգեւոր կառոյցներ, բռնի Թրքացած ու իսլամացած մարդկային տարրերէ մինչեւ անապատներու աւազուտներուն վրայ ոսկրացած ու կմախքացած խլեակներ: Սակայն, մեծագոյնը հայրենիքի բռնագաւթումն է, պատմական հողերէ արմատախիլ ըլլալու եւ աշխարհով մէկ ցաքուցրիւ դառնալու հրէշային ծրագիրը, զոր մտայղացան ու գործադրեցին Թուրքիոյ վարիչները, զայն կ'ուրանան այսօրուան նորագոյն եւ ամբարտաւան Թուրք ղեկավարները:

Այսօր, ոչ միայն հայկական սուգն ու ցեղասպանութիւնը խորհրդանշող Թուականն է, այլ՝ համամարդկային առումով՝ «ցեղասպանութիւն» սադայէլական եզրին առաջին անգամ կիրար-կումին եւ գործնականացման անմարդկային արարքին տարեթիւը: Հետեւաբար, ողջ մարդկութիւնը յուզող, սթափութեան եւ ահազանգի կոչող մարտահրաւէր մը: Արդարեւ, Մեծ Եղեռնը միայն հայուն վէրքը չէ, այլ՝ մարդկութեան խիղճին ու բարոյա-կանութեան ուղղուած զգաստութեան արդարացի ճիչ մը:

Հակառակ ցեղասպանութեան մանրամասն մշակումին եւ կիրառումին, անգութ ոգիով եւ գազանային մոլուցքով կատարումին, հայութեան վերապրումին փաստն ու իրողութիւնը, ազգային իրաւունքներու կառչումին հաստատակամութիւնը եկան ի չիք դարձնելու Թրքական ամենաթողութեան եւ սանձարձակութեան պատրանքը. «Թանգարանի համար մէկ հայ» Թողելու ճիւաղային նպատակը ի սպառ ջախջախուեցաւ զարթնող, ուռճացող եւ հզօրացող հայութեան դիմաց: Մենք՝ սուգ ու շիւանը վերածեցինք պայքարի, ծնունդն ու բազմացումը փոխարինեցինք մահուան եւ պարտութեան գաղափարին, հայկական բանակն ու զինեալ պայքարը եղան շառաչուն ապտակներ մեր բնաջնջումն ու անհետացումը երազող եօթ գլխանի վիշապներու հասցուած: Ի հեճուկս չարչարանքներու եւ տառապանքներու ամենաահեղ փորձութեանց, հայու տեսակը վերարտադրեց ինքզինք, մնաց կենսունակ եւ վերանորոգ, ընձիւղուեցաւ նոր աւիշով եւ Թարմացած արիւնով:

Կը գտնուինք Հայոց Ցեղասպանութեան հարիւրամեակի սեմին: Վստահաբար, սա վախճանական հանգրուան մը չէ բնաւ. այլ՝ նոր փուլ մը՝ առաւե՛լ կազմակերպուելու, համահայկական ուժերը գերլարելու, պայքարի նոր ոճ եւ մարտավարութիւն որդեգրելու եւ մանաւա՛նդ հաւատքով արիանալու եւ որձութեան զգացումով կռանուելու: Բոլորին յստակ է, Թէ հայկական պահանջատիրութիւնը հետզհետէ կը ստանայ իրաւական, քաղաքական եւ ռազմագիտական լուրջ գործօնի դեր՝ աշխարհաքաղաքական վերիվայրումներու հետեւանքով, Թուրքիան օղակելու միտումով եւ ի պահանջել հարկին՝ Թուրքիան ճաթռտելու նկատառումով:

Արդարեւ, զգաստութեան եւ զգօնութեան ժամանակն է այսօր. ոստխին Թոյլ օղակները գտնելու եւ հարուածելու ճշգրիտ պահն է այժմ: Ներքնապէս խլրտող Թուրքիան, բազում հարցերու մէջ խրած եւ շրջանային հակակրանքի Թիրախ հանդիսացող նէօ-օսմանական պետութիւնը մինչեւ ե՞րբ պիտի խուսափի ցեղասպանութեան փոխհատուցման հաշուեյարդարէն, արդարութեան ահեղ դատաստանէն:

Այս առումով հետաքրքրական եւ ողջունելի է իմանալ այն Թուրք կազմակերպութեանց եւ տարրերու գոյութեան մասին, լսել այնպիսի դողդոջ՝ այլապէս համարձակ ձայներու շուրջ, որոնք տրամադիր են առերեսուելու իրենց սեփական պատմութեան հետ, ճանչնալու ցեղասպանութեան փաստն ու տարողութիւնը, ընդունելու Թրքական եաթաղանին արիւնալի եւ ամօթալի իրողութիւնը, դատափետելու իրենց նախկին վարիչներուն աղէտալի եւ գազանային արարքը եւ հաստատելու հայոց բռնախլեալ իրաւունքներուն իրաւացիութիւնը: Մաղթենք, յուսանք եւ աշխատինք, որ այս հոսանքը ստանայ լայն Թափ եւ ազդեցիկ ուժգնութիւն: Այս ծիրին մէջ, Ս.Դ. Հնչակեան Կուսակցութիւնը կը հաւատայ Թուրք առողջ, շրջահայեաց եւ ձախակողմեան ուժերուն հետ զգուշաւոր գործակցութեան կարեւորութեան: Հարիւրամեակի սեմին, այսօր, կ'ուխտենք ըլլալ հաւատարիմ Մեծ Եղեռնի նահատակներու յիշատակին, չշեղիլ հայ ազատագրական պայքարի ռահվիրաներու լուսաշող ուղիէն եւ շարունակել հայրենասիրութեան մեր երկա՜ր ու փշալի ճանապարհը. եւ այս ուխտը՝ ոչ Թէ արցունքով եւ աղաչանքով, այլ՝ իրաւատէրի վճիռով եւ ոգիով, որովհետեւ՝ մենք չենք աղերսեր, այլ՝ կը պահանջենք:

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ «ԱՐԱՐԱՏ»**

---

սխալները ճանչնալու կարեւորութիւնը: «Այսօր կը կանգնիմ ձեր կողքին, յիշելու համար պատերազմի արհաւիրքը, յարգելու համար ձեր նախահայրերուն յիշատակը»:

Հայկազեան Համալսարանի Նախագահ Վեր. Դոկտ. Փօլ Հայտոսթեան փոխանցեց օրուան պատգամը:

## «…ՏԵՍԱՔ ԶՏԷՐ» (ՅՈՎՀ. 20:25)

Քրիստոսի հրաշալի Յարութենէն յետոյ արտասանուած այս խօսքը իր մէջ կ'ամփոփէ այն գերագոյն ճշմարտութիւնը, որուն զգացողութիւնն ու հաւատքի գիտակցութիւնը ունեցած էին Անոր առաքեալները եւ հաստատակամ յայտարարած էին իրենց պատգամը դիմելով Թովմասին ու ժամանակներու հոլովոյթներուն հետ ծնունդ առած նոր Թովմաններուն.

«…Տեսաք զՏէր»:

Այս բառերուն մէջ կայ կենդանի պատկերը Յարութեան մեր Տիրոջ Յիսուսի Քրիստոսի, որուն հետ հաղորդակցութեան ընդառաջ եկող մարդը իր էութեան մէջ կը զգայ մահուան պարտութիւնը: Քրիստոս Իր յաղթական Յարութեամբ կը յեղաշրջէ մարդկութեան կեանքը դէպի լոյս եւ առաւել կեանք: Քրիստոսի Յարութեան մէջ խտացած է աստուածային յաւերժականութեամբ նուիրականացած զօրութիւն, անսպառ եռանդ: Խոնարհումով ապրուած կեանքերը գիտեն եւ կապրին անկորնչելի արժէքը Յարութեան խորհուրդին, որուն առաջնորդութեամբ ալ միութիւն են հաստատած Աստուծոյ հետ եւ Անոր առաջնորդութեամբ ապրած են հրաշագործուած կեանք: Եթէ մեր նախնիք չունենային Յարութեան խորհուրդով սրբագործուած կեանք, իցիւ թէ մենք այսօր ապրէինք որպէս Նոր Հայաստան, դէպի Երկինք սլացող յաւերժական Սուրբ Էջմիածին եւ կեանքի հորիզոնները վերածէինք արշալոյսներու:

Յարութեան խորհուրդին առջեւ ծնրադիր մեր Սուրբ Եկեղեցւոյ հայրերը իրենց էութեան մէջ արմատացուցած են նորին տեսիլքը. «Քրիստոսի Յարութիւնը պէտք է մեր մէջ վերածուի անսպառ այն հոգեկան ուժին, որ խաւարին մէջ լոյս կը ծագեցնէ, անձկութեան մէջ լոյս կը ներշնչէ, վախին ու կասկածին դիմաց հաւատքով կը զօտեպնդէ, երջանկութեան մէջ համեստութիւն կը խառնէ, անձնական շահին մէջ ուրիշին շահն ալ կը ներառնէ, մէկ խօսքով՝ ամէն բանի մէջ սիրոյ զօրութեամբ մեզ կը տոգորէ եւ անմահութեան տենչով ու տեսիլքով կը վառէ» )Գարեգին Ա.(:

Քրիստոսի Յարութիւնը խաւարին մէջ ծնունդ առնող լոյսն է: Քրիստոսի կեանքը դարձնենք հայելին մեր կեանքին, որպէսզի իրեն հետ դէպի խաչը բարձրացող կեանքը հասցնենք Յարութեան բարձունքին ու մերժենք խաւարները մեր կեանքին:

Քրիստոսի Յարութիւնը անձկութեան մէջ ճառագայթող յոյսն է, որուն արմատը իւրաքանչիւրիս էութեան մէջ խորացած է: Աղօթքի զօրութեամբ ջուր տանք յոյսին, որպէսզի Յոյսին խորհուրդը դարձնենք մեր կեանքը:

Քրիստոսի Յարութիւնը՝ վախին ու կասկածին տուն տուող ալիքները իր մէջ խորտակող սաստն է: Ամէն անգամ, երբ մեր մարդկային էութիւնը հեռու է աստուածայինին տանող ճանապարհէն, ապա մեր հայեացքն ուղղենք դէպի Երկինք, որուն անսահմանութեան մէջ տարածուած է Յարութեան լոյսը մեր Տիրոջ:

Քրիստոսի Յարութիւնը իւրաքանչիւրիս կեանքին մէջ ներթափանցող աստուածային սէրն է, որ կը մերժէ մարդկային ամէն տկարութիւն, որպէսզի մեր քայլերն համընթաց ուղղենք Մեծ Վարդապետին քայլած ճանապարհին:

Քրիստոսի Յարութեան խորհուրդով ապրուած ամէն մի կեանք իր մէջ կը գտնէ Աստուծոյ ներկայութիւնը, իր հոգիին խորքին կը տեսնէ մանրակերտը Եկեղեցւոյ: Եկեղեցին՝ անժամանցելի գերագոյն ճշմարտութիւնն է մարդկութեան պատմութեան ու կեանքին մէջ: Այս սրբութեան հետ մրցակիցներ չեն կրնար ըլլալ: Աստուած եւ աստուածներու թատերաբեմն է կեանքը, որուն պատկերին մէջ դերակատարներն ենք մենք բոլորս: Եթէ երբեք մեր կեանքն Աստուծոյ հետ է, ապա յաւերժի ճամբորդներն ենք ու Քրիստոսի Յարութեան խորհուրդին ճառագայթները կը դարձնենք մեր կեանքերը:

Քրիստոսի Յարութեան ճշմարիտ պատկերն է նաեւ մեր ազգին կեանքը, որ մոխիրներուն մէջէն ապրեցաւ իր Նոր Ծնունդը, քանզի մեր նահատակները իրենց հոգիներուն մէջ ամրօրէն պահեցին Յարութեան խորհուրդը, որպէս «անկէզ մորենին»՝ նոր կեանքի ճանապարհը, ոսկեայ կամուրջ դէպի նորանկախացեալ Հայաստան, որուն նուիրագործուած հողէն դէպի Երկինք բարձրացող Սուրբ Էջմիածինը դարձաւ կրակը այն հերոսներուն, որոնք Միածնաէջ Խորանի կանթեղին լոյսովը ստացան պատգամը Սարդարապատի յաղթանակին ու իրենց արեան կանչը վերածեցին նոր արշալոյսներու Յոյսին նորահաս սերունդներու հոգիներուն մէջ:

«…Տեսաք զՏէր»: Յարութեան խորհուրդը տօնախմբենք, որպէսզի ապրինք նոր կեանքով, նոր յոյսերով, նոր եռանդով ու հաւատքով, որպէսզի դառնանք նոր ժամանակներու առաքեալները մեր ժողովուրդի զաւակաց համար, եւ անոնց հոգիին ու կեանքին մէջ նոր արձագանգ դառնայ Քրիստոսի առաքեալներու պատգամը. «…Տեսաք զՏէր»:

«Քրիստոս Յարեաւ ի մեռելոց»:

«Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի»:

ՅՈՎՆԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ




## ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՄԻՔԱՅԷԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱՏԵԱՆԻ ՍՈՒՐԲ ԶԱՏԿՈՒԱՆ ՊԱՏԳԱՄԸ

Քանի մը օրէն պիտի վերապրինք մեր Քրիստոնէական հաւատքին անսասան հիմնաքար հանդիսացող մեծագոյն ճշմարտութեան տօնական օրերը, մեր Աստուծոյն եւ Փրկչին՝ Յիսուս Քրիստոսի հրաշափառ Յարութեան տօնը, որ լոյսն ու յոյսն է իւրաքանչիւր հաւատացեալի:

Աւագ Հինգշաբթի, խաւարման Գիշերի ժամերգութիւններուն աւարտին, ըստ մեր հայկական ծիսական աւանդութեան, եկեղեցւոյ բոլոր ջահերը կը մարին ի բացառեալ կեդրոնական ճրագէն, որ իր լուսաշող բոցով վառ կը մնայ որպէս խորհրդանիշ մեր Տիրոջ Յիսուսի հսկումին Գեթսեմանէի պարտէզին մէջ, ուր արիւն քրտնելով ինքզինք բոլորանուէր Հօր Աստուծոյ ընծայեց որպէս քաւութեան զոհ՝ ըսելով. «Հա՛յր իմ, եթէ կարելի է՝ այս բաժակը հեռացուր ինձմէ, բայց ո՛չ ինչպէս որ ես կ'ուզեմ, այլ ինչպէս որ դո՛ւն կ'ուզես», (Մատթ. 26, 39): Եւ գիշերուան մութին մէջ, խաւարի իշխանութեան ուժերը՝ առաջնորդուած մատնիչ Յուդայէն ձերբակալեցին զինք, ձաղկեցին, փուշով պսակեցին, խաչի մահուան դատապարտեցին, սպաննեցին, թաղեցին՝ յանձնելով զինք գերեզմանի խաւարին, մտածելով հոն՝ յաւերժօրէն խեղդել եւ մարել Անոր լոյսը: Սակայն, Յիսուս՝ ինչպէս որ հաստատած էր, իր աստուածային զօրութեամբ, երրորդ օրը խորտակեց մահուան կապանքները, տապալեց գերեզմանին վիթխարի քարը եւ իր յարութեամբ բացաւ յաւիտենական կեանքի դռները դառնալով յոյսն ու փառքը իրեն հաւատացող ժողովուրդներուն:

Խաւարի իշխանութեան ուժերը մեր օրերուն ալ կը շարունակեն իրագործել իրենց մահ եւ վիշտ սփռող արարքներն ու խաւարային ծրագիրները, որոնց մաս կը կազմէ նաեւ, Հայոց Ցեղասպաննութեան հարիւրամեակին սեմին՝ մօտաւորապէս ասկէ մէկ ամիս առաջ Քեսապահայութեան ապրած տմարդի ու դաժան հալածանքի ու տեղահանման արհաւիրքը: Ինչքա՜ն վիշտ ու թախիծ յառաջացուց այս զազանաբարոյ քստմնելի ոճիրը Քեսապի խաղաղ բնակիչներուն եւ ողջ հայութեան սրտին մէջ:

Իւրաքանչիւրիս առօրեայ կեանքին մէջն ալ չեն պակսիր դժուարութիւններն ու նեղութիւնները, որոնք յաճախ կեանքը կը դարձնեն մթին եւ անստոյգ: Դժուարութիւններ, որոնք կապ ունին ծանր հիւանդութեան եւ առանձնութեան հետ: Ինչպէս նաեւ տնտեսական ճնշիչ եւ անարդար պայմաններու, ընտանեկան պարագաներու անհաշտ մթնոլորտէն յառաջացած հոգեկան վէրքեր, որոնք իրենց դառն ու կսկծալի հետքերը կը թողուն բազմաթիւ անհատներու կեանքին մէջ:

Այս սուրբ Զատկուայ տօնին, շնորհաւորելով բոլորիդ Յարու-

Շար.ը էջ 18

## ՀԱՅ ԱՒԵՏ. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԳԱՄԸ ՅԱՐՈՒՑԵԱԼ ՔՐԻՍՏՈՍԻ ԿԵՆՍԱՏՈՒ ՀՊՈՒՄԸ

Շուրջ երկու հազար տարիէ ի վեր Քրիստոնեայ Եկեղեցին կը տօնէ Յիսուս Քրիստոսի Յարութիւնը որպէս պատմական անուրանալի իրողութիւն: Խաչեալ Քրիստոսի յարութիւնը առաջին եկեղեցիին քարոզութեան բներգն էր:

Ի հեճուկս ամէն դարու թերահաւատներու կամ անհաւատներու յայտարարութեանց՝ եկեղեցին ամրակուռ մնացած է իր հաւատքին վրայ, թէ առաջին Աւագ Ուրբաթ խաչափայտին վրայ մեռնող Յիսուսը երեք օր ետք մեռելներէն յարութիւն առաւ: Եկեղեցին այս դաւանութեան կառչած կը մնայ այն հիման վրայ, որ եթէ Յիսուսի կեանքը Գողգոթայի բլուրին վրայ վերջ գտնէր, ան սոսկ մարտիրոս մը պիտի ըլլար եւ ոչ թէ մարդկութեան Փրկիչն ու Տէրը: Եթէ Քրիստոս յարութիւն առած չըլլար, կարելի պիտի չըլլա՛ր իր խօսքերուն հաւատալ, քանի որ ինք յայտարարած էր՝ «Ես եմ յարութիւնն ու կեանքը»: Պօղոս առաքեալի վկայութեամբ՝ «Եթէ Քրիստոս յարութիւն առած չէ՝ զուր է մեր քարոզութիւնը... ինքնախաբէութիւն է ձեր հաւատքը, ինչ որ կը նշանակէ թէ մեղքերու մէջ էք... եւ մենք մարդոց ամէնէն խղճալիներն ենք» (Ա. Կորն. 15:14-19):

Քրիստոսի Յարութեան առաջին վկաները եղան իր հետեւորդները: Յարուցեալ Քրիստոսի կենսատու հպումը հիմնովին փոխեց անոնց կեանքն ու աշխարհայեացքը: Թաքստոցներու ետին պահուըտած երկչոտ աշակերտները Յարուցեալ Քրիստոսի յարութեան զօրութիւնով լեցուած՝ Անոր քաջարի վկաները հանդիսացան: Աշակերտներու այդ փորձառութիւնը դարեր շարունակ կրկնուած է մարդոց կեանքին մէջ, որոնք իրենց կարգին զգացեր են Յարուցեալ Քրիստոսի հրաշալի ու կենսատու հպումը իրենց կեանքին մէջ, եւ իրենց ամբողջ կեանքն ու կենցաղը յեղաշրջուած էր:

Այս օրերուն քեսապահայութեան տարհանումը, հայ կազմակերպ համայնքի չէզոքացումը, հայկական կառոյցներու քանդումը եւ մեր գաղթական ժողովուրդի ճակատագիրին անորոշութիւնը՝ տեսակ մը «Աւագ Ուրբաթ» ի տխուր տպաւորութիւնը կ'ուրուագրէն շատերու միտքին մէջ:

Բայց Քեսապի մեր քաջարի հայրենակիցները իրազեկ են Սուրբ Զատկուան մշտանորոգ պատգամին, թէ «Աւագ Ուրբաթ»ին պիտի յաջորդէ Յարութեան յաղթական առաւօտը, կեանքի խաւարամած «գիշեր»էն ետք պիտի ծագի արդարութեան արեգակը:

Մենք կը հաւատանք, որ Քրիստոսի յարութեան կենսատու հպումը իր էութեան մէջ զգացող քեսապցին անպայմանօրէն վկան պիտի դառնայ այն ճշմարտութեան, թէ վերջին յաղթանակը միշտ արդարութեանն է ընդդէմ անարդարութեան, բարիինն է՝ ընդդէմ չարին, լոյսինն է՝ ընդդէմ խաւարին:

Շար.ը էջ 18

# ԿՏՐՈՒԿ ՇՐՋԱԴԱՐՁ

***ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ***

*Անհատներու թէ հաւաքականութիւններու ապրելակերպի երկու մօտեցումներ կան:*

*Կայ անցեալի ժառանգը որպէս հիմք ընդունելով, զայն գերազանցել ջանալու եւ նորը կերտելու մտածելակերպ ու գործելաձեւ: Կայ նաեւ, անցեալի ժառանգով գոհանալու, անոր գովաբանութեամբ կամ ողբումով սահմանափակուելու, զայն ծախսելու մտածելակերպ ու գործելաձեւ:*

*Առաջինը դժուար, բայց կառուցողական գործընթաց է, շինարար հետեւանքներով. մինչ երկրորդը՝ հեշտ, բայց մաշողական է, կործանարար հետեւանքներով:*

*Եղեռնի հարիւրամեակի սեմին, խորհրդածութիւններու այս ծիրէն մեկնած, փորձենք շատ ամփոփ վերլուծականը ընել մեր անցած ուղիին: Եթէ առաջին 50 տարիները մեր ստացած աճաւոր հարուածէն սթափելու ժամանակաշրջան նկատենք, 60-ականներուն ականատես կ'ըլլանք մեր սուգը համազգային տարողութեամբ նշելու հանդիսութեանց եւ յուշարձաններու կառուցման: Բնականաբար այս մէկը իր անդրադարձը կ'ունենար այդ տարիներուն իրենց գիտակցական խմորումը բոլորող սերունդի վրայ, Հայաստանի թէ Սփիւռքի տարածքին: 70-ականները յատկանշուեցան Գուրգէն Եանիկեանի արարքէն ներշնչուած զինեալ պայքարի մեկնարկով եւ անոր իբր հետեւանք՝ Ցեղասպանութեան միջազգային ճանաչման արշաւի ծաւալումով: 80-ականներուն պոռթկաց Ղարաբաղեան պահանջատիրութիւնը, գլխաւորութեամբ 60-ականներուն թրծուած սերունդի ներկայացուցիչներուն: Անոր յաջորդեց 90-ականներուն Հայաստանի անկախացումը եւ Արցախի ազատագրումը: 60-ականներէն մինչեւ 90-ականները, եթէ մէկ կողմէ Հայաստանի նուաճումները շինարար ազդեցութիւն ունեցան մեր համազգային կեանքի յառաջընթացին համար, միւս կողմէ 70-ականներէն սկսած Միջին Արեւելեան հայ համայնքներու քայքայման ընթացքը շատ վնասաբեր եղաւ: Դժբախտաբար վերջին երկու տասնամեակներուն, Հայաստանը եւս մտաւ այդ քայքայման ընթացքին մէջ, սեւ ամպեր կուտակելով մեր ապագայի երկնակամարին վրայ:*

*Սեւ ամպերէն ամենէն մտահոգիչը Հայաստանի բնակչութեան թիւի պակասումն է: 1920-ականներէն մինչեւ 1980-ականները, այդ թիւը ՀՆԳԱՊԱՏԻԿ բազմացած էր, աշխարհացրիւ հայութեան մօտ կէսը ամփոփելով հայրենի հողի վրայ: Անցնող երկու տասնամեակներուն, հնգապատիկ դարձածը ԿԻՍՈՒԵՑԱՒ: Ներկայ տուեալներով, հայութեան հազիւ մէկ երրորդը (ըստ ոմանց՝ քառորդը) կը բնակի հայրենի հողի վրայ, իսկ մեծամասնութիւնը սփռուած է: Յստակ է, որ այս ընթացքի շարունակումը խոցելի կը դարձնէ մեզ բազում վտանգներու: Շատ մտահոգիչ է նաեւ այդ սփռուած մեծամասնութեան սպառնացող այլասերման աճագնացող վտանգը: Եթէ Խորհրդային Հայաստանի «Երկաթեայ Վարագոյրի ետի խորհրդաւորութիւնը» որոշ չափով Սփիւռքի հայապահպանման ջանքերուն օգտին կը ծառայեցուէր, անկախացած Հայաստանի բացայայտուած իրավիճակը աւելիով կը դժուարացնէ հոսանքն ի վեր թիավարելու մեր մղձաւանջը եւ նորահաս սերունդներուն մէջ հայ ինքնութիւնը ամրակայելու դժուարին առաքելութիւնը: Յստակ է, որ զոհի ու վրէժխնդրութեան զգացումներու սերմանումը նորահաս սերունդներու մէջ, ո՛չ միայն չնպաստեր հայակերտման ջանքերուն, այլ նոյնիսկ կ'արգելակէ սերունդներու առողջ յառաջխաղացման գործընթացը: Յստակ է, որ միջազգային ընտանիքէն Ցեղասպանութեան ճանաչում մուրալու նիւթական թէ բարոյական մեր ներդրումները չեն նպաստէր մեր ազգային ընտանիքի վիճակի եւ մեր նորահաս սերունդներու ապագայի բարելաւման: Մեր ազգային օրակարգը ՊԷՏՔ ՉԷ՞ այլեւս յատկանշուի Ցեղասպանոթեան հետ առնչուած նիւթերու առաջնահերթութեամբ: Ցեղասպանութիւնը, որ դարձաւ 20րդ դարու հայ ինքնութեան գլխաւոր բնորոշիչը, ՊԷՏՔ Է՛ փոխարինուի 21րդ դարու նոր բնորոշիչով: 20րդ դարը ՀԱՅԱՊԱՀՊԱՆՄԱՆ դար էր: 21րդը պէտք է ըլլայ ՀԱՅԱԿԵՐՏՄԱՆ դար: Ժամանակն է գիտակցելու, որ հսկառակ Ցեղասպանութեան աճաւորութեան եւ անցնող հարիւրամեակի վրայ անոր թողած ազդեցութեան եւ հետեւանքներուն, մենք հազարամեակներու հարուստ անցեալ մը ունինք, որուն ընկալումն ու իւրացումը աւելի ոգեւորիչ պէտք է ըլլայ ու դրականօրէն ներշնչէ մեր նորահաս սերունդները: Յստակ պէտք է ըլլայ սակայն, որ հազարամեակներու այդ հարուստ ժառանգը մեր նորահաս սերունդներուն քարոզի նման տալը պիտի չի ծառայէ իր նպատակին , եթէ չենք կրող անոր օգուտը ձեռնհասօրէն շաղկապել իր առօրեայի օգուտին, իր ապագայի յառաջխաղացքին:*

*Շատ մտահոգիչ է նաեւ, բացուող աշխարհին դիմաց մեր յամեցող տոհմային մտածելակերպը, որուն որպէս արդիւնք ունեցանք օլիգարխային Հայաստան մը եւ ոչ թէ՝ ժողովրդավար Հայաստան: Այս առնչութեամբ Սփիւռքն ալ, հոն տիրապետող հատուածային մտածելակերպի դրսեւորումով, ետ չի մնար Հայաստանէն: Ասիկա պատճառ կը դառնայ, որ մեր ազգը թարմացնող ու նոր աւիւն հայթայթող ուժերը, իմա՝ նորահաս սերունդները, կորսնցնենք օտարին: Յստակ է, որ համաշխարհայնացման բովին մէջ, մենք պէտք չէ շարունակենք մեր ազգայինը «կէթօյացնել», այլ պէտք է ջանանք զայն դարձնել համամարդկայինի մէկ կենսունակ մասնիկը: Ինքնաճանաչման ճամբով ինքնավստահութիւն ամբարելով, մենք հանգիստ պէտք է զգանք բացուելու աշխարհին ու մեր ներդրումը բերելու մեր շրջապատի յառաջխաղացքին: Այնպէս ինչպէս ըրաւ Մեսրոպ Մաշտոց, չի բաւականանալով միայն հայերէն տառերու գիւտով, այլ տառեր ստեղծելով նաեւ Հայաստանի դրացի Վրացիներուն եւ Աղուաններուն համար:*

*Մէկ խօսքով՝ մտածելակերպի ու գործելաձեւի ԿՏՐՈՒԿ ՇՐՋԱԴԱՐՁ է պէտք, կասեցնելու քայքայման տանող մեր ներկայ ընթացքը: Այս հանգիստ բայց կործանարար ընթացքը պէտք է ԱՆՀԱՆԳՍՏԱՑՆԵԼ, նոր ուղիներու որոնումով եւ նոր հեռանկարներու պատկերացումով: Հրաշք չենք ակնկալեր: Պէտք չէ՛ ակնկալենք: Ո՛չ ալ յանկարծակի փոխակերպում մը: Այլ՝ հեռուի տեսլականի պատկերացում ու փոքր քայլերով անոր մօտենալու հետեւողական եւ վճռական ոգի, երկու-երեք յաջորդական սերունդներու գործօն մասնակցութեամբ: Պէտք է սկսինք մենք մեզմէ, ԻՆՔՆԱՃԱՆԱՉՄԱՆ անկեղծ ու անխնայ փնտռտուքով: Հեռո՛ւ ձեւականութիւններէ եւ լոզունգային ամուլ կոչերէ: Մեր պատմութեան հարուստ անցեալէն պիտի վեր հանենք, մեզ որպէս մարդ եւ որպէս հայ արժեւորող ու հպարտութիւն առթող դրուագներ, ու լծուինք Սօսեաց անտառին նուիրուած Անուշաւանի նման՝ «գործով հզօր եւ խօսքով հանճարեղ» անհատներու եւ սերունդներու պատրաստութեան: Դո՛ւրս պիտի գանք քլիշէ դարձած «հայեցի դաստիարակութիւն» եզրի սահմանափակումներէն, որովհետեւ, ի՞նչ օգուտ ունի «հայեցի դաստիարակութիւն»ը, եթէ այն միաժամանակ չի պատրաստէր մանուկները յաջող ապագայի մը համար ալ: Մանաւանդ նորարարութիւններով գգլխիչ ընթացող ա՛յս դարաշրջանին: Տաղանդները չեն պակսիր մեզի: Պակսողը՝ զանոնք այս նպատակին համար հաւաքագրելու եւ այս առաքելութեան մէջ ներգրաւելու նախաձեռնութիւնն է: Պակսողը՝ տեսլականի մը, գաղափարի մը ուրուագծումն ու զայն իրականացնելու համար, մասնագիտական մակարդակի վրայ կազմակերպուած եւ համադրուած աշխատանքն է: Պակսողը՝ տոհմային, հատուածային շահեր հետապնդելու մտածելակերպի թօթափումն է, յօգուտ ազգային շահի: Թող այս*

*Շար.ը էջ 18*





# ՀԱՅ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ

Գրեթէ հարիւր տարի խօսում ենք Ցեղասպանութեանը զոհ գնացած մտաւորականների, հիմնականում՝ գրող-բանաստեղծների մասին, իսկ արուեստագէտների, երաժիշտների մասին գրեթէ չենք յիշում, բացառեալ Կոմիտասի: Իսկ թէ որքա՜ն երաժիշտներ են կոտորուել, աշխարհով մէկ ցրիւ եկել՝ միով բանիւ ճոխացնելով տուեալ երկրի երաժշտական մշակոյթը գրեթէ չենք խօսում այդ մասին:

Եւ այսպէս, Ցեղասպանութեան բութ սուրը չի խնայել նաեւ անթիւ երաժիշտների, որոնց մի մասին յաջողուել է հանգրուանել օտար երկրներում եւ հեռուից-հեռու սիրել Հայրենիքը ու կապուել նրա հետ:

Բարեբախտաբար, վերջին չորս-հինգ տասնամեակների ընթացքում Սփիւռքի եւ Հայաստանի երաժիշտների անմիջական կապերի շնորհիւ, մեր երաժշտական արուեստը դարձել է մի ամրակուռ զանգուած, որի սփռած ցոլքերը Քանատայից մինչեւ Աւստրալիա, Միացեալ Նահանգներից մինչեւ Եւրոպա եւ Միջին Արեւելք շլացնում են օտարներին:

Օտարները վաղուց չէ, որ գիտեն Արարատի եւ նրա փէշերին ծուարած մեր երկրի մասին, որի երաժիշտները Սփիւռքի իրենց արուեստակից ընկերների հետ, տարիների հոլովոյթում կարող էին իրենց արուեստով է՛լ աւելի առաջ տանել հողագնդի երաժշտական մշակոյթը, եթէ ապրէին համատեղ, նոյն երկրի երդիկի տակ:

Սակայն, մենք խանգարում էինք Թուրքերին, մեր առաջընթացը գիտութեան, արուեստների բազմաթիւ ճիւղերում՝ նրանց հանգիստ չէր տալիս: Կառավարութեան ղեկավար մարմիններում էլ էին աթոռներ «գրաւել» հայերը, ուրեմն՝ նրանց տգէտ մտայնութեամբ, պէտք էր մէկընդմիշտ ազատուել հայերից:

Ինչ էլ որ արեցին նրանք, միեւնոյնն է, որքան էլ զարմանալի, չնայած բազում արգելքների եւ խոչընդոտների, Եղեռնի տարիներին ձեւաւորուեց մեր դասական գրականութիւնն ու արուեստը: Բոլորովին այլ հարց է, թէ ինչ առաջընթաց կ՚ունենայինք այսօր, եթէ Թուրքերը չկոտրէին մեր ժողովրդի ողնաշարը՝ մտաւորականութեանը, եւ մենք ի՞նչ տեղ կը գրաւէինք համաշխարհային մշակոյթի այսօրուայ ասպարէզում:

20րդ դարի առաջին երկու տասնամեակներում ձեւաւորուեց ողջ հայ երաժշտութիւնը՝ իր բազմաժանր, բազմաճիւղ կողմերով: Այս շրջանում էր, որ Կոմիտասը ստեղծեց ազգային երաժշտութեան ոճ՝ յենուելով հայ անաղարտ գեղջուկ երգի վրայ: Բարեբախտաբար, Եղեռնին նախորդող տարիներին էր Կոմիտասը ձեւաւորել հայ դասական մասնագիտական երաժշտութեան իր՝ միանգամայն ընդունելի, ուսանելի թեզը, հակառակ պարագային, դժուար է ասել, թէ ի՞նչ ճանապարհով կը գնար մեր երաժշտութիւնը, եթէ չունենար Կոմիտասեան հանճարը:

Ցեղասպանութեան տարիներին հայ երաժշտութիւնը նշանաւորուեց մէկ այլ խոշորագոյն կոմպոզիտորի՝ Ալեքսանդր Սպենդիարեանի գործունէութեամբ, մի կոմպոզիտոր, որին յաջողուեց Կոմիտասի հետ մէկտեղ, հայ երաժշտութիւնը դուրս բերել միջազգային ասպարէզ:

Ինչպէս 19րդ դարի երկրորդ կէսին, այնպէս էլ 20րդ դարի առաջին երկու տասնամեակներում, հայ կոմպոզիտորներն ու երաժիշտ-կատարողները իրենց գործունէութիւնը ծաւալեցին հիմնականում Հայաստանից դուրս. Թիֆլիս, Պաքու, Մոսկուա, Պետերբուրգ եւ Պոլիս քաղաքներում: Այդ քաղաքներում էլ դրսեւորուեց նրանց տաղանդը:

Նրանց ստեղծած բազմաթիւ երաժշտական միութիւններն ու կազմակերպութիւնները փաստօրէն եղան այն օճախները, որոնց մէջ պատրաստուեց երաժիշտ-կատարողների, երգահանների, երաժշտագէտների մի ամբողջ սերունդ:

Մշակութային կենտրոններ ստեղծուեցին Ֆրանսայում, Եգիպտոսում, Լիբանանում, Հիւսիսային եւ Հարաւային Ամերիկայի բազմաթիւ երկրներում եւ քաղաքներում, ինչպէս նաեւ Եւրոպայի Պալքանեան երկրներում:

Ահաւոր Ջարդն ու կոտորածը արմատախիլ արեց Թուրքիայի հայ մշակոյթի փայլատակող Կ. Պոլիս եւ Իզմիր քաղաքների հայ մշակութային կեանքն ու գործունէութիւնը:

Եղեռնին զոհ գնացած հայ երաժիշտներին ու մտաւորականներին փոխարինելու եկած նոր սերունդը ստիպուած եղաւ փախուստ տալ Թուրքիայից ու ապաստան գտնել բովանդակ աշխարհի տարբեր անկիւններում:

Մինչ Եղեռնը, հայ երաժշտութիւնը զգալի զարթօնք ապրեց Թուրքիայում՝ Հիւրիէթի հռչակումից յետոյ, մինչեւ Առաջին Համաշխարհային պատերազմը: Եւրոպայից Կ. Պոլիս տեղափոխուած Կոմիտասը իր ձեռքը վերցրեց երաժշտական կեանքի ղեկավարութիւնը: Այդ տարիներին լոյս տեսան բազմաթիւ երգարաններ, որոնցից յիշատակութեան են արժանի Զարդարեան եղբայրների «Ձայնագրուած Հայկական Երգարանը», Հմայեակ Արամեանցի «Հայուն Երգարանը» եւ այլն:

Կոմիտասի անմիջական խորհրդով ստեղծուեցին «Քնար» եւ «Մասիս» երգչախմբերը, իսկ իր՝ երեք հարիւր անդամներով համալրուած «Գուսան» երգչախումբը եղաւ ու մնաց որպէս աննախընթաց երեւոյթ ողջ հայկական կատարողական արուեստի պատմութեան մէջ: Երաժշտականկատարողական փայլուն դրսեւորումներ հանդիսացան թաւջութակահար Տիգրան Ալիքսանեանի, ջութակահարներ՝ Հայկ Գուտենեանի, Դաւիթ Դաւթեանի եւ այլոց համերգները:

Պոլսի երաժշտական փայլուն կեանքը, թւում էր, ոչնչով չէր կարող խաթարուել: Սակայն այն, ինչ երեսուն տարուայ ընթացքում Սուլթան Համիտին չէր յաջողուել իրականացնել, նրա արժանի յաջորդներին յաջողուեց իրականացնել ընդամէնը մի քանի ամսում:

Թուրքերի արիւնախում շրթունքների զոհը առաջին հերթին դարձաւ Պոլսոյ մտաւորականութիւնը եւ նրա հետ՝ անմահ Կոմիտասը, որը, թէեւ միջնորդութեամբ վերադարձուեց աքսորավայրից, բայց իր ժողովրդի ֆիզիքական բնաջնջմանը վկայ եղող հանճարեղ երաժիշտը կորցրեց հոգեկան հաւասարակշռութիւնը, որի պատճառով հայ ժողովուրդը մէկընդմիշտ զրկուեց նրա հանճարեղ մտքի հետագայ փայլատակումներից:

Ինչպէս գրում է երաժշտագէտ Մաթեւոս Մուրատեանը, «Եղեռնը վերջնականապէս փլուզման ենթարկեց պոլսահայ երաժշտական փառահեղ կառոյցը եւ դժբախտաբար, արեւմտահայ երաժշտական կեանքը այլեւս չկարողացաւ շարունակել Կոմիտասի եւ Տիգրան Չուխաճեանի աւանդոյթները: Աւելին, արեւմտահայ իրականութիւնը այլեւս ի վիճակի չեղաւ եւ առաջ չքաշեց նրանց նման տաղանդաւոր մի կոմպոզիտորի, որը կարողանար նոր պայմաններում շարունակել արեւմտահայ երաժշտական ստեղծագործութեան զարգացումը»:

Եղեռնից յետոյ, Կոմիտասի հինգ սաները՝ Բարսեղ Կանաչեանը, Միհրան Թումաճեանը, Վարդան Սարգսեանը, Վաղարշակ Սրուանձտեանը եւ Հայկ Սեմերճեանը իրենց երաժշտական մասնագիտական ուսուցումը շարունակեցին Փարիզում եւ իրենց գործունէութիւնը մէկընդմիշտ ծաւալեցին Թուրքիայի սահմաններից դուրս, օտար ափերում:

Ցեղասպանութեան տարիներին երեւան եկած կոմիտասեան հանճարի ստեղծագործութիւնը, սակայն, եղաւ այն պարարտ ենթահողը, որի վրայ զարգացաւ վերջին հարիւր տարուայ հայկական մասնագիտական երաժշտութիւնը:

Կոմիտասից յետոյ, հայ ժողովրդական եւ գուսանական երգերի ձայնագրութեամբ զբաղուեցին Արշակ Բրուտեանը, Ստեփան Դեմուրեանը, Սպիրիդոն եւ Ռոմանոս Մելիքեանները, Անուշաւան Տէր-Ղեւոնդեանը, Արմէն Տիգրանեանը, Անտոն Մայիլեանը եւ ուրիշներ:

Անցեալ դարի առաջին երկու տասնամեակում շարունակուեց նաեւ հոգեւոր երգերի հաւաքման ու մշակման գործը: Նախկինից մնացած Եղիա Տնտեսեանի եւ Նիկողոս Թաշճեանի մշակած հոգեւոր երգերի ժողովածուների օգնութեամբ, եւ նոյնատիպ երգերի նորովի ուսումնասիրման շնորհիւ, Մակար Եկմալեանն ու Կոմիտասը ստեղծեցին հայկական պատարագի երգեցողութեան բոլորովին նոր տարբերակներ, որոնք մտան ու հաստատապէս տեղաւորուեցին հայ առաքելական եւ կաթողիկէ եկեղեցիների արարողութեանց մէջ:

Եղեռնի տարիներին, հայ երաժիշտների ուշադրութեան կենտրոնում էր նաեւ հայկական քաղաքային ժողովրդական երգը:

Քաղաքային երգը մեզանում ձեւաւորուել է 19րդ դարում՝ հիմնականում տաղային արուեստի, գուսանական երաժշտութեան, հարեւան ժողովուրդների երգ-երաժշտութեան միաձուլման շնորհիւ: Անցեալ դարասկզբին արդէն կային, նոյնիսկ այսօր էլ կատարուող, սիրուած երգեր, որպիսիք են «Մայր Արաքսի ափերով», «Ծիծեռնակ», «Սիրուհիս», «Լուսնակ գիշեր» երգերը:

Քիչ չեն նաեւ այն երգերը, որոնք ստեղծուել են ճանաչուած բանաստեղծների խօսքերով: Դրանք, անցնելով մշակման երկարատեւ շրջան, դարձել են ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆԱՑԱԾ «ոչ թէ՝ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ) երգեր, ինչպէս սովորաբար յորջորջւում է,- ՀԵՆ. Ա.): Յիշենք Աւ. Իսահակեանի խօսքերով ստեղծուած «Որսկան ախպեր», «Դարդս լացէք», «Մաճկալ» երգերը, ինչպէս նաեւ «Երազ» երգը՝ Սմբատ Շահազիզի խօսքերով, «Արազն եկաւ», «Արի իմ սոխակ» երգերը՝ ըստ Յովհաննիսեանի եւ Պատկանեանի խօսքերի:

Շար.ը էջ 20



# Massis Weekly

Volume 34, No. 15 Saturday, April 26, 2014

## Armenia Mark 99th Anniversary of the Genocide



YEREVAN -- Tens of thousands of people joined by Armenia's top political and spiritual leaders visited the Tsitsernakabert memorial in Yerevan on Thursday to mark the 99th anniversary of the start of the Armenian Genocide in Ottoman Turkey.

An incessant stream of mourners marched to the hilltop memorial and laid flowers by its eternal fire throughout the day in the annual remembrance of 1.5 million Armenians massacred during World War I.

As always, the silent procession began after a prayer service led by Catholicos Karekin II, the supreme head of the Armenian Apostolic Church, in the presence of President Serzh Sarkisian and other top state officials.

"Today we bow to the memory of the innocent victims of the Armenian Genocide," Sarkisian said in a written address to the nation issued on the occasion.

"They were killed simply because they were Armenians," he said. "The crime designed minutely and in advance pursued a clear goal: to take possession of the home country, the property and the millennium-old heritage by exterminating the native people

Continued on page 4

## President Barack Obama's Annual "Meds Yeghern" Statement



President Barack Obama

WASHINGTON, DC -- The White House has released President Barack Obama's annual statement on the Armenian Day of Remembrance which once again avoided using the word "genocide," failing to keep a campaign pledge he made in 2008.

**The Statement by US President Barack Obama on Armenian Remembrance Day**

Today we commemorate the Meds Yeghern and honor those who perished in one of the worst atrocities of the 20th century. We recall the horror of what happened ninety-nine years ago, when 1.5 million Armenians were massacred or marched to their deaths in the final days of the Ottoman Empire, and we grieve for the lives lost and the suffering endured by those men, women, and children. We are joined in solemn commemoration by millions in the United States and across the world. In so doing, we remind ourselves of our shared commitment to ensure that such dark chapters of human history are never again repeated.

I have consistently stated my own view of what occurred in 1915, and my view has not changed. A full, frank, and just acknowledgement of the facts is in all of our interests. Peoples and nations grow stronger, and build a foundation for a more just and tolerant future, by acknowledging and reckoning with painful elements of the past. We continue to learn this lesson in the United States, as we strive to reconcile some of the darkest moments in our own history. We recognize and commend the growing number of courageous Armenians and Turks who have already taken this path, and encourage more to do so, with the backing of their governments, and mine. And we recall with pride the humanitarian efforts undertaken by the American Committee for Syrian and Armenian Relief, funded by donations from Americans, which saved the lives of countless Armenians and others from vulnerable communities displaced in 1915.

As we honor through remembrance those Armenian lives that were unjustly taken in 1915, we are inspired by the extraordinary courage and great resiliency of the Armenian people in

Continued on page 2

## Armenian Genocide Commemorated in Istanbul




ISTANBUL -- Members of the Human Rights Association Istanbul Branch on Thursday held a memorial ceremony at the city's Haydarpasa railway station, where more than 600 Armenian notables and intellectuals were gathered on April 24, 1915 to be sent on death marches. Guests from Armenia and various Armenian Diaspora communities took part in the commemorations in Istanbul.

Those who gathered at the station held the photographs of these intellectuals and a banner that read, "We commemorate the victims of the Armenian Genocide," in Armenian, Turkish, and English, reported Objektifhaber website of Turkey.

The participants in the remembrance event placed carnations on the banner, and after the ceremony, threw these carnations into the sea.

On April 23, a candlelight vigil took place in the Sisli district of Istanbul to commemorate and honor the victims of the Armenian Genocide.

Following the silent vigil, the participants walked through the neighborhood, where ethnic minorities, including Armenians, Greeks and Jews had lived, changing the names of the streets. As Armenian music played from loudspeakers, the organizers passed out booklets to passersby.

## ABDEM: We are Here to Share the Pain of the Armenian Nation



**ABDEM members hold press conference in Yerevan**

YEREVAN (Alisa Gevorgyan, Public Radio of Armenia) -- Members of the European Peace and Democracy Assembly (Avrupa Baris ve Demokrasi Meclisi – ABDEM) have visited the Tsitsernakaberd Memorial on April 24 to pay tribute to the memory of the Armenian Genocide victims.

"It's our pain and shame that we have been silent and have failed to respond to the denial of the Armenian Genocide both in Turkey and around the world. On April 24 at the Genocide Memorial we should demand from the Turkish government to recognize the Armenian Genocide and assume the whole burden of responsibility. We demand justice for all victims of the

Continued on page 4

## Erdogan's Condolences Message Fails to Acknowledge the Armenian Genocide

ANKARA — Turkish Prime Minister Recep Tayyip Erdogan offered on Wednesday first-ever condolences to the descendants of the victims of the Armenians Genocide representing the first such overt comment ever publicly stated by a Turkish leader.

In an April 23 statement released in nine languages, including Armenian, Erdogan said, "The incidents of the First World War are our shared pain."

Erdogan said he hoped "the peoples of an ancient and unique geography, who share similar customs and manners will be able to talk to each other about the past with maturity."

Erdogan added that "we wish that the Armenians who lost their lives in the context of the early 20th century rest in peace."

But while acknowledging that April 24 "carries a particular significance" for the Armenians, Erdogan implicitly stood by Ankara's denial of a premeditated government effort to wipe out the Armenian population of Ottoman Turkey. He said that many Turkish, Kurdish and Arab subjects of the crumbling empire also died during the war.

It is believed to be the first time a Turkish prime minister has offered such explicit condolences.

Full text of English translation of Erdogan's statement:

"The 24th of April carries a particular significance for our Armenian citizens and for all Armenians around the world, and provides a valuable opportunity to share opinions freely on a historical matter.

It is indisputable that the last years of the Ottoman Empire were a difficult period, full of suffering for Turkish, Kurdish, Arab, Armenian and millions of other Ottoman citizens, regardless of their religion or ethnic origin.

Any conscientious, fair and humanistic approach to these issues requires an understanding of all the sufferings endured in this period, without discriminating as to religion or ethnicity.

Certainly, neither constructing hierarchies of pain nor comparing and contrasting suffering carries any meaning for those who experienced this pain themselves.

As a Turkish proverb goes, "fire burns the place where it falls."

It is a duty of humanity to acknowledge that Armenians remember the suffering experienced in that period, just like every other citizen of the Ottoman Empire.

In Turkey, expressing different opinions and thoughts freely on the events of 1915 is the requirement of a pluralistic perspective as well as of a culture of democracy and modernity.

Some may perceive this climate of freedom in Turkey as an opportunity to express accusatory, offensive and even provocative assertions and allegations.

Even so, if this will enable us to better understand historical issues with their legal aspects and to transform resentment to friendship again, it is natural to approach different discourses with empathy and tolerance and expect a similar attitude from all sides.

The Republic of Turkey will continue to approach every idea with dignity in line with the universal values of law.

Nevertheless, using the events of 1915 as an excuse for hostility against Turkey and turning this issue into a matter of political conflict is inadmissible.

The incidents of the First World War are our shared pain. To evaluate this painful period of history through a perspective of just memory is a humane and scholarly responsibility.

Millions of people of all religions and ethnicities lost their lives in the First World War. Having experienced events which had inhumane consequences – such as relocation – during the First World War, should not prevent Turks and Armenians from establishing compassion and mutually humane attitudes among towards one another.

In today's world, deriving enmity from history and creating new antagonisms are neither acceptable nor useful for building a common future.

The spirit of the age necessitates dialogue despite differences, understanding by heeding others, evaluating means for compromise, denouncing hatred, and praising respect and tolerance.

With this understanding, we, as the Turkish Republic, have called for the establishment of a joint historical commission in order to study the events of 1915 in a scholarly manner. This call remains valid. Scholarly research to be carried out by Turkish, Armenian and international historians would play a significant role in shedding light on the events of 1915 and an accurate understanding of history.

It is with this understanding that we have opened our archives to all researchers. Today, hundreds of thousands of documents in our archives are at the service of historians.

Looking to the future with confidence, Turkey has always supported scholarly and comprehensive studies for an accurate understanding of history. The people of Anatolia, who lived together for centuries regardless of their different ethnic and religious origins, have established common values in every field from art to diplomacy, from state administration to commerce. Today they continue to have the same ability to create a new future.

It is our hope and belief that the peoples of an ancient and unique geography, who share similar customs and manners will be able to talk to each other about the past with maturity and to remember together their losses in a decent manner. And it is with this hope and belief that we wish that the Armenians who lost their lives in the context of the early twentieth century rest in peace, and we convey our condolences to their grandchildren.

Regardless of their ethnic or religious origins, we pay tribute, with compassion and respect, to all Ottoman citizens who lost their lives in the same period and under similar conditions."

## City of Los Angeles Commemorates Armenian Genocide




**Councilmember Mitch O'Farrell addressing the Los Angeles City Council**

LOS ANGLES, CA -- In commemoration of the 99th anniversary of the Armenian Genocide, the Armenian Council of America joined about 40 members from various Armenian political, cultural and religious organizations for the annual City of Los Angeles Armenian Genocide commemoration at the City Council chambers in City Hall.

In attendance were representatives from the office of the Consul General of Armenia, as well as the Diocese and Prelacy, Armenian Assembly of America, along with ACA Board Members Jirair Tossounian and Krikor Moloyan and dozens of community leaders, activists, clergymen and philanthropists.

"As a native Angeleno, I'm honored that the LA City Council pays tribute to the victims and survivors of the Armenian Genocide each and every year through these annual ceremonies," said Tossounian. "As we approach the centennial commemoration of the Genocide, I'd like to thank the City of LA for their continued efforts in publicizing this event as more and more people who have not had the opportunity to learn about the Genocide are educated about this tragedy promoting a community of peace and humanity."

A slide show was presented highlighting the survivors of the Genocide who settled in the United States and the relief efforts taken by the U.S., particularly in city of Los Angeles to help the victims of the Armenian Genocide.

Among the Near Eastern Relief efforts discussed was a campaign by child actor Jackie Coogan, where he led an effort to enlist the children of America to help the children of Armenia. Also a part of the Near East Relief was the Golden Dinner Rule of the entertainment community in Hollywood where lavish dinners were skipped in order to raise funds for the Armenians who were being persecuted during the Genocide. "These were all philanthropic efforts to save a nation … thanks to the Near East Relief," said Councilmember Paul Krekorian. "As we recognize and remember the Genocide, it's important to recognize the victory of the Armenian Genocide," he added.

Representing the Little Armenia community of East Hollywood, Councilmember Mitch O'Farrell shared his personal experience as a descendant of a Native American tribe who were uprooted and violently displaced from their native homeland. "We have an obligation to do all we can that tragedies don't happen again," said O'Farrell. "I want to commend the Armenian community for keeping the memory alive."

Genocide survivors Joseph and Knar Manjikian donated six volumes of memoirs from survivors as a part of the Genocide Library, which they published, to the Los Angeles City Library. Joseph Manjikian shared his experience as a Genocide survivor and reiterated the importance of preventing future genocides by acknowledging the past.

Councilmember Blumenfield echoed the sentiments of Councilmember O'Ferrill and talked about his experience on a recent trip to Armenia and what a big impression it left on him as Councilmember Paul Koretz spoke about the ongoing denial of the Genocide stating that there isn't the same anger projected towards Germany because the next generations have acknowledged the Holocaust. "It's hard for me to understand why Turkey has not taken those steps," said Koretz. "It's important to continue to fight to have the Genocide acknowledged by the entire world, including Turkey so this tragedy is not repeated."

Encouraging the Armenian community to continue educating the public about the Genocide, Councilmember Jose Huizar thanked those in attendance for providing an opportunity to teach others about the tragedy as Councilmember Nury Martinez announced that she is proud to represent the growing Armenian community in her district in Sun valley.

## President Barack Obama's Annual Statement

**Continued from page 1**

the face of such tremendous adversity and suffering. I applaud the countless contributions that Armenian-Americans have made to American society, culture, and communities. We share a common commitment to supporting the Armenian people as they work to build a democratic, peaceful, and prosperous nation.

Today, our thoughts and prayers are with Armenians everywhere, as we recall the horror of the Meds Yeghern, honor the memory of those lost, and reaffirm our enduring commitment to the people of Armenia and to the principle that such atrocities must always be remembered if we are to prevent them from occurring ever again.

# Abrupt Change of Course

**By Harut Der-Tavitian**

On a personal or communal level there are two ways of conducting our lives: to be aware of our heritage and strive to build upon it by contributing to its growth or by being content with what we've inherited and spend it. The first is difficult but it's a fulfilling and constructive path, while the second is the road to attrition.

On the eve of the centennial of the Genocide of the Armenians, let's try and analyze briefly the path we have taken. If in the first 50 years following the Genocide we went through a catharsis, the '60s witnessed the first nationwide commemorations and the erection of monuments, dedicated to the victims of Genocide. The period had a profound influence on the generation that was going through the developmental stage of its identity.

The '70s reflected Kurken Yanikian's act: the pursuit of our cause through armed struggle and the spearheading of the Genocide recognition campaigns around the world.

Led by the generation that came of age in the '60s, the '80s were highlighted by the demand for the separation of Nagorno- Karabakh from Azerbaijan and its unification with the Republic of Armenia.

The '90s saw the expiry of the Soviet Union, the subsequent independence of Armenia and the liberation of Nagorno-Karabakh (Artsakh).

While from the '60s to the '90s developments in Armenia had a positive impact on our nation-building, the turmoil in the Middle East had a negative effect on that same process. In the past two decades, developments in Armenia have turned negative, too.

The most worrisome aspect in Armenia is the depopulation of the country. From the 1920s to the 1980s, the population of Armenia had quintupled, encompassing almost half of all Armenians in the world. In the past twenty years Armenia's population has shrunk by 50%. Now only a third (according to some estimates, only a fourth) of all Armenians resides in their homeland, while the majority is dispersed around the world. It's evident that Armenia and the Armenian nation are exposed to serious dangers.

The threat of assimilation of this dispersed majority is also worrisome. If the mystery of Soviet Armenia behind the Iron Curtain somewhat abetted the national preservation efforts, the naked reality is that independent Armenia has hamstrung Diaspora's efforts to inculcate the Armenian identity among its youth.

The victimhood mentality or the instilling of vengeful feelings in our youth is not contributing to the preservation of their Armenian identity. On the contrary, it is curtailing their healthy progress. Efforts for the international recognition of the Genocide of Armenians are no longer helping our "National Cause" and the process of providing a better future to our youth. Henceforth, Genocide should no longer be the top priority on our national agenda. It had a dominant impact in shaping Armenian identity in the 20th century, but it has to give way to more constructive factors now.

The 20th century witnessed our struggle to maintain our Armenian identity. We are now losing that struggle. It's mandatory that the 21st century be characterized by revitalization and not just the preservation of that identity. It is high time we realized that despite the catastrophic impact of the Genocide on our nation-building, our rich history of several millennia should be deployed for bigger and more positive impetus on our new generations. It should also be clear that conveying this rich history should not be delivered as if were a sermon, but be weaved into the young generations' lives, helping them build a better future.

Another worrisome fact is the continued dominance of clannish mentality in our communities. As a result, we have created an oligarchic regime in Armenia, rather than a democratic one. The Diaspora is not different from Armenia in this respect. Because of the corrosive clannish mentality, we have lost our budding talents to other nations. At a time when a new world order is shaping up, rather than maintaining a clannish and ghetto mentality which will surely sideline us from the world stage and into oblivion, we have to weave our rich Armenian heritage into the fabric of humankind and make it a vital part of overall humanity. This requires self-awareness and self-confidence. Blessed with this cultural amplitude, our youth should feel at ease opening to the world and contributing to its progress, without fear of losing its identity. Just like Mesrob Mashtots, in the 5th century, when not content with inventing the Armenian alphabet, he invented the Georgian and Albanian alphabets, thus contributing to the advancement of that region.

To halt the downhill slide, we have to make an ABRUPT CHANGE OF COURSE. We have to take command of our nation's ship which now is being tossed by destructive waves. We have to explore new paths and new visions. We should expect neither miracles nor immediate positive outcomes. Rather, we should endeavor to create a new vision and a plan, and work consistently and vehemently towards its realization, in the span of two or three generations.

We should start from within, through honest and critical self-exploration that will lead to a higher standard of self- awareness. We should neither be bogged down by formalities, nor give lip service to anyone. We should explore and bring to light timeless values from our rich history and show the young the wealth they have inherited including values that will help them become better human beings and better Armenians--just like Anoushavan, some 4,000 years ago, who at the age of 12, was mentored to become an individual "strong in deed and eloquent in speech". We should break away from cliché and undefined terminologies such as "Armenian pedagogy". For what good Armenian education is if it does not prepare our youth for a better and secure future, especially in this turbulent era of globalization.

We do not lack talented Armenians. What we lack is a plan to bring

Continued on page 4

# Suffolk University: Partner in Armenian Genocide Denial?

**By Heidi Boghosian**
**Executive Director of the National Lawyer's Guild (NLG)**

Students at Suffolk University Law School have launched an online petition urging the school's president to withdraw its invitation to Armenian genocide denier Abraham Foxman to speak at their commencement and receive an honorary degree. Foxman, the Anti-Defamation League director, drew harsh public criticism in 2007 for opposing a congressional resolution acknowledging the 1915 extermination of approximately 1.5 million Armenians. Since the 15th century, Armenians had been treated as second-class citizens under Ottoman rule. In honoring Foxman, Suffolk University sends a message that politics are more important than acknowledging crimes against humanity.

The denial of genocide is an integral, and final, part of the genocidal process, as Genocide Watch founder Gregory Stanton has written. Despite a well-documented body of eyewitness accounts and other evidence chronicling the 20th century's very first genocide (scholar and lawyer Raphael Lemkin coined the word genocide in 1943 with the extermination of the Armenians in mind), the Turkish government continues to mount a campaign of denial through inaccurate scholarship, propaganda, aggressive lobbying, and even a law which forbids mention of the word genocide. In 2005, Nobel Prize winner Orhan Pamuk was prosecuted for "insulting Turkishness," as was Armenian-Turkish journalist Hrant Dink who was subsequently assassinated in 2007 by a young Turkish nationalist. U.S. political and partisan allegiances with Turkey enable a range of repugnant human rights transgressions, old and new.

My grandmother Baidzar was born in Giresun, a village on the Black Sea, to parents who owned almond and filbert orchards and were active in working for protection of the Armenian minority. Baidzar remembered that men would come to their house in the middle of the night and have secret, whispered meetings upstairs, because it was against the law for minorities to assemble. The father of the poet Silva Gaboudegian was one of those men. Many years and many worlds later, an older cousin would tell my grandmother that those men were members of the Armenian Revolutionary Federation. Baidzar remembered her mother falling to her knees crying before two officers, a Turk and a German, who came to their home on horseback, begging them to spare her family. Baidzar later watched her parents and siblings being slaughtered before escaping to an orphanage and making a treacherous passage to the United States as a mail order bride.

Around the world, on April 15, just weeks before Suffolk's commencement, and 99 years after the mass murders, families with stories just like my grandmother's will mark the day of observance of the genocide. April 15 is widely considered to be the starting date of a systematic and well-documented plan to eliminate the Armenians. On that day in 1915, the Interior Minister of the Ottoman Empire, Talaat Pasha, ordered the arrest and hangings of Armenian intellectuals and community leaders in Constantinople. The killings were gruesome and included beheadings of groups of babies, dismemberments, mass burnings and drownings, use of toxic gas, lethal injections of morphine or with the blood of typhoid fever patients.

Although there has been much academic recognition of the Armenian

Continued on page 4

# Letter to the Editor:

## Is U.S. Senator Edward Markey of Massachusetts truly a friend of the Armenian American community?

Suffolk Law School in Boston has invited Markey to speak and receive an award at its commencement on May 17.

The problem is that Senator Markey will sit alongside Abraham Foxman, director of the Armenian Genocide-denying Anti-Defamation League. Foxman will address the law school's graduates and receive an honorary law degree, even though his statement of August 21, 2007 twisted the facts of the Armenian Genocide so that the latter could not legally qualify as genocide under the official United Nations Genocide law of 1948.

Honoring Foxman makes a mockery of the principles for which a law school should stand. One wonders if Suffolk has invited Foxman as revenge against Armenian Americans and others because the Massachusetts Governor's Council recently rejected attorney Joseph Berman – an ADL National Commissioner – to be a judge.

The National Lawyers Guild student chapter at Suffolk University and a thousand others have demanded that Suffolk President James McCarthy withdraw his invitation to Foxman. Their reasons include Foxman's anti-Armenian bias and his hypocritical opposition to the U.S. Congress's Armenian Genocide Resolution.

Markey's sharing the stage with Foxman would be an insult to international law. Then again, Markey has never criticized Foxman and the ADL's genocide denials. Markey's commitment to genocide recognition and prevention is in serious doubt.

Senator Markey should tell Suffolk's president that he will not attend the commencement unless the invitation to Foxman is withdrawn. I suggest readers call Markey's office in Boston (617-565-8519) or Washington, DC (202-224-2742), or email him at http://www.markey.senate.gov/contact. Please say that sharing the stage with Abe Foxman is unacceptable.

Sincerely,
Berge Jololian
Watertown, MA

# Only a Handful of Survivors Left as 100th Anniversary Approaches



**AH2: Armenian Genocide survivors Perouz Kalousdian and Azniv Guiragossian, holding copies of "The National Geographic Magazine on Armenia and Armenians 1915-1919," and Hasan Cemal's book "1915: Armenian Genocide."**

**By Taleen Babayan**

Azniv Guiragossian sat quietly in a wheelchair between her daughter Arpi and son Shahen in the living room of the New York Armenian Home on a recent warm spring afternoon in Flushing, Queens. Dressed in a patterned blouse and a long black skirt, her tinsel colored hair tied back in a braid, Azniv turned to her son and graced his cheek with her red painted nails as she whispered, "How lucky you are that you were raised by your mother."

Although the words, spoken in Armenian, were made as an impromptu remark from a mother to a son, that simple phrase portrayed the ache still felt by Armenian Genocide survivor Guiragossian, a pain that has lasted almost a century.

Only one year old when she lost both her parents, her father's death resulting from the shock of a death sentence and her mother's demise on the marches through Der Zor, Guiragossian was kidnapped by a Turkish family until her relatives were able to find her. Unable to care for her, however, they placed her and her sister in an orphanage in Aleppo.

"She never had her mother's love," said Nardone. "She was starving for her love."

"She would always say how hungry and cold she was," added Shahen.

Through an arranged marriage, Guiragossian married an Armenian choral director and teacher who later became a priest. Following a move to Beirut, the family of six settled in New York City in 1950.

"My life was very bad," said Azniv, 99, who was born in Urfa. "I was on the streets. But I stayed strong."

Perouz Kalousdian is another Armenian Genocide survivor who was robbed of a childhood and saw the destruction of her family at a young age when Turkish soldiers tied all the males in her family two by two and threw them over the Euphrates River.

"They took my family," said Kalousdian, born in 1909 in Harput. "They separated us and took them away. I never saw them again."

Kalousdian, six years old at the time, recalls being carried on her mother's back during the death marches. Surviving the atrocities on the deportations, she and her mother arrived in Aleppo, Syria, where they stayed before leaving for the United States where they reunited with her father, who had fled the Genocide.

A third survivor who resides at the Armenian Home is Arsalos Dadir, who was born in 1913 in Shabin Karahisar. Her father and uncle were killed by the Young Turks, along with others in their village who were all tied up and shot. She remembers seeing hundreds of bodies piled on top of one another. Her family lost all of their wealth and land, but was able to settle in Constantinople where Dadir married and raised two children, moving to the U.S. later in life.

The New York Armenian Home, founded by Sarah Sanossian in 1948, has long served as a residence for survivors of the Armenian Genocide. An Armenian-only, private, non-funded home for the elderly, led by Executive Director Aggie Ellian, provide around-the-clock care for residents in a culturally rich setting. The Armenian Home is the annual setting for the Armenian Genocide Media Day, organized by the Knights of Vartan, where local Armenian and non-Armenian media interview and record survivors accounts and testimonies from the Armenian Genocide of 1915.

The 99th anniversary commemoration of the Armenian Genocide, sponsored by the Knights and Daughters of Vartan, will be held in Times Square (43rd St. and Broadway) on Sunday, April 27, from 2-4 p.m.

# We are Here to Share the Pain of the Armenian Nation

**Continued from page 1**

Genocide," ABDEM members told reporters in Yerevan.

"We are here to share the pain of the Armenian nation and support it in the struggle for justice. Turkey should face its history and recognize the Armenian Genocide. Otherwise, the democratic perspective of Turkey will never become a reality," President of the organization, member of the Kurdish liberation movement Rozhda Yuldirim said.

The European Peace and Democracy Assembly (ABDEM) was founded in Brussels in 2013. It has more than one million members in different countries of the world. Among them there are Kurds, Greeks, Circassians, Alawites, Assyrians and Armenians – representatives of the nations subjected to Turkey's policy of racist pressure and annihilation that have become a minority in the country over time.

According to the members of the Assembly, the nations that suffered from genocide are considered "suspicious foreigners" among the Turkish society. Kurds are seen as a threat to the territorial integrity of the Republic of Turkey, and Alawites are considered a "perversion" in Sunni Islam. There are different reasons for those not complying with the notion of the "Turkish tribe" to be considered enemies in the country.

"Alawites comprise 1/3 of the 75 million population of Turkey, about 25 thousand Alawites live in the country, and about 1.5 million live in Europe. We recognize and condemn the Armenian Genocide and demand that Turkey accept its crime. It should fulfill all requirements Armenians will present as compensation," representatives of Turkey's Alawite community Alekbaf Pektash said.

# Armenia Mark 99th Anniversary of the Genocide

**Continued from page 1**

living there. By this they committed a monstrous crime seeking to once and forever annihilate Armenians as a political factor."

"In contrast to the past, we are ready to confront such calamities both psychologically and in terms of an organization degree especially in our homeland. Nowhere in the world is as safe for an Armenian as it is under the auspices of his own state," added the Armenian leader.

Sarkisian asserted at the same time that the Armenian genocide remains "alive" because of its "utter denial" by Turkey, the successor state to the Ottoman Empire. "We are convinced that the denial of a crime constitutes the direct continuation of that very crime," he said. "Only recognition and condemnation can prevent the repeat of such crimes in the future."

A delegation of US Congressmen visited the Tsitsernakaberd Memorial to pay tribute to the memory of the Armenian Genocide victims.

"The reason our delegation is here is to recognize the Armenian Genocide. We are here for that reason 99 years after the tragedy," Chairman of the Foreign Affairs Committee of the House of Represent

# Abrupt Change of Course

**Continued from page 3**

these talents together, to formalize the national vision and launch it. What we lack is a disposition to overlook our self-interests and see the bigger picture. What we lack is a unity of purpose. Let this article be a call for action in that direction. We have taken a small initial step in that direction by reserving the rights to the name "ArmenianIdentity.com". Our goal is to create that site and utilize it for the dissemination of ideas and the discussion of issues similar to the ones expressed above. We have discussed these themes with several academicians who had expressed readiness to help make our vision a reality. We hope this idea finds fertile ground and can be developed into a full-fledged website with the help of experts in different fields of academia and in IT.

Let's conclude these thoughts by citing another symbolic step we took recently. In 1829, at the age of 20, Khachatur Abovian reached the summit of Ararat. Surely this achievement must have had a big impact on his development, thinking, character, and course of life. Several years ago we decided to follow in Abovian's footsteps. Last year, seven of us, all middle-aged friends, achieved our goal in the company of six young people in their 20s. We are hopeful that our collective achievement will have a similar impact on their development and in shaping their mentality, identity and character. We also hope this example will encourage others to follow suit.

Harut Der-Tavitian can be reached at Harut@excelhye.com

# Partner in Armenian Genocide Denial?

**Continued from page 3**

genocide, this has rarely been followed by governmental recognition. Turkey swiftly condemned a U.S. Senate committee resolution adopted on April 10, 2014 by the Senate Committee on Foreign Relations labeling as genocide the massacre of Armenians by Ottoman forces and warned Congress against taking steps that would tarnish Turkish-American ties. Similar resolutions under past presidential administrations have also failed.

The Turkish people have been taught for decades that there was no genocide, with the result that most believe their country is being treated unfairly when genocide resolutions are raised. Continued failure to acknowledge the genocide in our history books is a disservice not only to survivors of the genocide, but also to those Turks who tried to stop it then and who face imprisonment today for publicly acknowledging the genocide.

Suffolk University should listen to its students. It has the chance to take a step forward in rectifying decades of injustice by reversing its decision to honor Abraham Foxman with an honorary law degree at its 2014 commencement. Tolerance of those who deny the Armenian genocide may be politically expedient, but it is nonetheless morally indefensible.

# ՅԻՇՈՂՈՒԹՅԻՒՆ

*ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐԵԱՆ*

*Ապրիլն իր գարնանային աւետաբեր կեանքով, հայի համար նաեւ 1915 թ. Հայոց ցեղասպանութեան յիշողութեան գարթօնքի ամիս է: Յիշողութեան կծիկը քանդուելով ի յայտ է գալիս հայ ժողովրդի դէմ գործուած բազմաթիւ անարդարութիւններ, յար եւ նման 1915 թ. Հայոց ցեղասպանութեանը, որոնց մեղսակից են գերտէրութիւնները:*

*Այս տարի 1915 թ. Հայոց ցեղասպանութեան 99-րդ տարելիցն է, որը, ինչպէս 100-ամեայ տարելիցը, վճռական տարի է հայ ժողովրդի համար՝ արտայայտելու իր ցասումն ու ընդվզումը գերպետութիւնների պոռնկական քաղաքականութեան հանդէպ, որոնք մասնատեցին հայի բնօրրանները իրենց քաղաքական ու տնտեսական շահերի համար: Հայ ժողովուրդը լինելով փոքրաթիւ եւ չունենալով մեծ ռազմական ուժ, չէր կարող պաշտպանել իր հայրենիքը յարձակուող հսկայ բանակներից, այդուհանդերձ միշտ պայքարել է իր անկախութեան համար, սակայն այդ պայքարում էլ նրան խանգարել են գերպետութիւնները...: Վերջիններս մեզ շահագործելով միշտ խաբել են, վերջում էլ համագործակցել մեր թշնամու հետ: Պատմութեան խորքը չքրքրենք, միայն մի հայեացք նետենք 19-20-րդ դարերի իրադարձութիւններին.*

*1894-1896 թթ. Արեւմտահայաստանում՝ Սասունում, Մուշում, Վասպուրականում եւ այլ վայրերում տեղի ունեցած սարսափելի կոտորածներին զոհ գնաց 300 հազար հայ, 1909 թ. Կիլիկիայի (Ատանայի) ջարդերին զոհ գնաց 30 հազար հայ՝ գերպետութիւնների հաւատարմատարների (դեսպան, հիւպատոս եւ այլն) ականատեսութեամբ, որոնց կառավարութիւնները ո՛չ միայն չմիջամտեցին կանգնեցնելու այդ կոտորածները, այլ օգնեցին Թուրքիային կամ չէզոք դիրք գրաւեցին՝ քաջալերելով նրան աւելի դաժան միջոցներով կոտորել հայերին: Այդպէս վարուեց նաեւ Ֆրանսան Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ: Նա խոստացաւ ինքնավարութիւն տալ Կիլիկիային, սակայն Արարայի ճակատամարտում Հայկական լեգէոնի փառահեղ յաղթանակից յետոյ գերմանա-թուրքական բանակի դէմ, Կիլիկիայում դրժեց իր խոստումը եւ օգնեց թրքական բանկին՝ կոտորելով ու զինաթափ անելով Հայկական լեգէոնի զինուորներին...: 1988 թ. փետրուարին Ատրպէյճանի Սումգայիթ քաղաքում ատրպէյճանցի ժողովուրդը երեք օր դաժան դատաստանի ենթարկեց հայերին՝ գիշատչական վայրագութեամբ տանջանքների ենթարկելով ու յօշոտելով նրանց, որին հետեւեց Պաքուի, Կիրովապատի (Գանձակ) եւ այլ քաղաքների հայերի կոտորածները: Ըստ Խորհրդային Միութեան ժամանակի լրատուութեան, որը միշտ թաքցնում էր իրականութիւնը, Սումկայիթում 20 մարդ զոհուեց եւ 100-ը վիրաւորուեց, որը չի համապատասխանում իրականութեանը..., Սումկայիթում հայերի նկատմամբ նոր ցեղասպանութիւն կատարուեց: Ատրպէյճանում կատարուած այդ կոտորածների հանդէպ Խորհրդային Միութեան վերաբերմունքը զայրացրեց ու զարմացրեց հայերիս եւ միջազգային հանրութեանը, որովհետեւ ժամանակին չմիջամտեց դադարեցնելու կոտորածները, թերացաւ կատարելու իր պարտականութիւնը՝ ամրապնդելու իր կազմի մէջ մտնող «եղբայրական» ժողովուրդների համերաշխութիւնը: Նա լռելեայն թոյլ տուեց, որ Խորհրդային Ատրպէյճանի ղեկավարութիւնը ծրագրուած կոտորած իրականացնի Ատրպէյճանում ապրող իր հայ քաղաքացիների նկատմամբ: Սակայն 1988 թ. իրեն պարտադրուած արցախեան պատերազմում, հայը հերոսական պայքարով փայլուն յաղթանակ տարաւ Ատրպէյճանի տարբեր ազգերից (ատրպէյճանցի, չեչեն, աղուան, թուրք, եւ այլն) բաղկացած ստուար բանակի դէմ եւ նրան ստիպեց զինադադար խնդրել: Ատրպէյճանը երբեք չի պահպանում զինադադարը, անընդհատ խախտում է այն եւ օրըստօրէ հզօրացնելով իր բանակը, յոխորտումսպառնում է Ղարաբաղը ուժով միացնելու Ատրպէյճանին...:*

*1915 թ. Հայոց ցեղասպանութիւնից յետոյ, Կիլիկիայի հրաշքով փրկուած հայերը վերադարձան եւ սկսեցին վերականգնել իրենց քանդուած տներն ու տնտեսութիւնը: Կիլիկիայի Սանջաքի՝ Իսկենդերունի եւ Պէյլանի հայաշատ շրջանների բնակչութիւնը շարունակում էր իր պապենական կեանքը, ինչպէս նաեւ Քեսապը՝ իր զուտ հայկական բնակչութեամբ: Յոյսով էինք, որ նրանք կը պահպանեն իրենց գոյութիւնը: Սակայն 1939 թ. Անգլիայի դրդմամբ Ֆրանսան Սանջաքը յանձնեց Թուրքիային (այժմ՝ Հաթայի նահանգ), եւ այնտեղի հայութիւնը հեռացաւ դէպի Լիբանան, մասամբ էլ՝ Սիրիա՝ կորցնելով իր բնօրրանի վերջին մասնիկը: Մուսա Տաղում մնաց միայն հայկական Վագըֆ գիւղը: Յաջողուեց փրկել Քեսապը, որը մտաւ Սիրիայի կազմի մէջ ու խաղաղ պայմաններում սկսեց բարգաւաճել ու զարգանալ:*

*Սակայն աշխարհի թոյլ պետութիւնները միշտ ենթակայ են գերտէրութիւնների քմահաճոյքին, որոնք տնօրինում են նրանց ճակատագիրը: Հրեաները իշխելով Ամերիկայում, իրենց կամքն են թե-լադրում Սպիտակ տան՝ որոշումներ ընդունելու ի օգուտ Իսրայէլի: Նրանց դրդմամբ Ամերիկան վերացրեց Սատտամ Հիւսէյնի իշխանութիւնը Պաղտատում, նպատակ ունենալով հաստատել Իսրայէլի գերիշխանութիւնը (հեգեմոնիան) Մերձաւոր Արեւելքում, բայց այդ նպատակի իրականացմանը խանգարում էր նաեւ Սիրիան: Ամերիկայի յաջորդ ծրագիրը եղաւ վերացնել Սիրիան «յեղափոխութեամբ»՝ Բաբելոնի խառնիճաղանճ լեգուներով մոլեռանդ խմբաւորումներով, որոնց իր արբանեակներով երեք տարի է մատակարարում է ռազմամթերք եւ անհրաժեշտ այլ ապրանքներ ու նիւթեր, որպէսզի տապալի Ասատի իշխանութիւնը, Սիրիան ենթարկի իրեն եւ Մերձաւոր Արեւելքի ղեկավարման սանձը յանձնի Իսրայէլին: Այդ ընթացքում Թուրքիան օգտուելով Ամերիկայի կողմից իրեն թոյլատրուած կանաչ լոյսից, միջազգային օրէնքը խախտելով, իր սահմանից Քեսապ ուղարկեց վերոնշեալ խմբաւորումների (Ալքայիտայի անդամներ, ատրպէյճանցի, աղուան, թուրք եւ այլն)՝ նրանց օգնելով ռազմամթերքով, զէնքով ու ուտելիքի պաշարով, որոնք գրաւեցին անզէն, անպաշտպան խաղաղ կեանքով ապրող Քեսապը, որի բնակչութիւնը մի կերպ ազատուեց Թուրքիայի միջամտութեամբ կազմակերպուած նոր կոտորածներից: Նրանք գրաւելով Քեսապը, սկսեցին թալանել հայերի ունեցուածք-*

*Շար.ը էջ 19*



# ԵՈԶԿԱՏ - ՅՈՒՇԵՐ ԵՒ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

## Ցեղասպանութեան Հարիւր Ամեակի սեմին եւ Մեծ Հօրս անմեռ յիշատակին

«Եթէ մարդիկ լռեն մեր արդար եւ անժամանցելի՛ դատին դիմաց, մեր քարերը՝ իրե՛նք պիտի բարձրացնեն իրենց բողոքը»... Ի.Ա.



Եոզկաթ

**ԼԵՆԱ Թ. ՄԱՆՈՒԿԵԱՆ**

Մեծ հօրս համար «Եոզկաթ»ը (Պուրուն Գըշլա) աշխարհի ամենագեղեցիկ քաղաքն էր, իսկ «Եոզկաթ»ցի ըլլալն ալ՝ հպարտութիւն:

Միշտ տպաւորիչ էր բոլորիս համար թէ ինչպէս մեծ հայրս այդքան շատ կը սիրէր Հայ Գիրքը եւ մշակոյթը եւ հայոց պատմութիւնը: Ուրախալի իրականութիւններ, որոնց յետին կային՝ աւելի խորունկ եւ դառն իրականութիւններ: Անոր հայրը՝ Յարութիւն Թաշճեան Պուրուն Գըշլայի մէջ եղած էր հայ լեզուի ուսուցիչ, ապա Արամեան Վարժարանի Տնօրէն եւ 1915-ին զոհուած , պաշտօնի գլուխ, Թուրք ահաբեկիչներու ձեռքով:

Եոզկատ քաղաքը կը գտնուի Փոքր Ասիոյ Կեդրոնական տարածութիւններուն վրայ, Կեսարիան ունենալով իր մէկ անկիւնը: Այնտեղ կը բնակէին 15,000 հայեր: Գեղեցիկ էր, բարեզարդ ու շէն քաղաք մը, որովհետեւ ճարտարապետները՝ շինարարի դարաւոր հմտութիւնը ցոլացնող նրբաճաշակ հայ վարպետներն էին:

Եոզկատցի հայը կրօնասէր էր եւ աւանդապահ, ջերմ ազգասէր էր եւ սիրտը կը վառէր հայութեան դառն ճակատագրին կրակով: Ազգային ազատագրական ցանկութիւնը եւ մղումները, եոզկատցիի սրտին մէջ թաքնուած մեծ կիրք մըն էր, բայց շատ զգոյշ կերպով, որովհետեւ ան ստիպուած էր զուսպ ըլլալ, ամէն կողմէ պաշարուած ըլլալով մոլեռանդ եւ գազանաբարոյ Թուրք մեծամասնութեամբ մը եւ առ ահի կը զգուշանար ցուցադրական արարքներէ եւ կ՚ապրէր սովորական ապրուստի մտահոգութիւններով: Բայց Իթթիհատը անդադար կը թունաւորէր զինք եւ գաղտնաբար ատելութիւն կը հրահրէր հայ ժողովուրդին հանդէպ եւ կը պատրաստուէր ճակատագրական օրուան:

Ստորեւ կարեւոր բաժիններ Մեծ հօրս՝ Գարեգին Թաշճեանի յուշերէն - Եոզկատի Պուրուն Գըշլա գիւղաքաղաքի ջարդի եւ տեղահանութեան մասին:

«Պուրուն Գըշլա եղած է զուտ հայաբնակ գիւղաքաղաք մը:

1878-ին, ռուս-թրքական պատերազմէն ետք, Թուրք կառավարութիւնը, հայերը փոքրամասնութեան դիրքին մէջ ձգելու եւ նիւթապէս զանոնք ընկճելու նպատակով, Թուրք եւ չէրքէզ ցեղախումբեր եւ գաղթականներ բերած եւ հաստատած է անոր շուրջ, յատկապէս անոր Արեւմտեան շրջանի տարածութիւններուն վրայ, դառնալով իսկական պատուհաս՝ գիւղաքաղաքի ազգաբնակչութեան, իրենց կազմակերպած գիշերային թալաններով եւ արշաւանքներով:

Պուրուն Գըշլայի մէջ կը գտնուէր կղմինտրածածկ եկեղեցի մը՝ Սբ. Աստուածածին անուան տակ եւ Արամեան Ազգային վարժարանը, որուն տնօրէնն էր Մինաս Պետրոսեան «Էֆէնտի», որ կարող դաստիարակ մը եւ բեմբասաց մըն էր: Մինաս Պետրոսեան 1908-ին կը տեղափոխուի Կեսարիա, ուր՝ ուսուցչական իր պաշտօնի առընթեր, կը դառնայ Ս.Դ. Հնչակեան կուսակցութեան գործիչ եւ առայդ՝ կը մասնակցի Պոլսոյ մէջ տեղի ունեցած Պատգամաւորական ժողովին:

Մինաս Պետրոսեան (Մեծ հօրս քեռին) եւ Արամ Պետրոսեան եղած են Պուրուն Գըշլայի ականաւոր դէմքերէն: Մինաս Պետրոսեան՝ յայտնի մտաւորական եւ լայն հմտութեան տէր Հնչակեան կուսակցական, 1915-ին կախաղան հանուած է գազան Թուրքերու կողմէ, Հնչակեան իր ընկերներուն հետ:

Արամ Պետրոսեան, աւարտելէ ետք տեղւոյն Արամեան Ազգային Վարժարանը, կը յաճախէ կեսարիոյ Ազգային Բարձրագոյն Վարժարանը: 1915-ին ան կ՚աքսորուի Տէր Զօր, ուրկէ վերադարձին, իր ականատեսի տպաւորութիւնները կը հրատարակէ հայ մամուլին մէջ: Զինադադարին կը վերադառնայ Կիլիկիա եւ կ՚աշխատակցի նոր լոյս տեսնող «Տաւրոս» թերթին:

Կիլիկիոյ պարպումէն ետք կ՚անցնի Եգիպտոս. 1926-ին կու գայ Պէյրութ եւ կը գրէ «Հաճնոյ Ինքնապաշտպանութեան հերոսամարտը եւ Անկումը»՝ Արամ Ասպետ ծածկանունով՝ կրակէ բառերով նկարագրելով իննամսեայ Հաճնոյ ինքնապաշտպանութիւնը եւ քաջորդիներու սխրագործութիւնները:

Յուլիս 1915-ին, Պուրուն Գըշլա կը պաշարուի չորս կողմէն, Թուրք զինուորներու եւ չէթէներու՝ շուրջ քսան հազարնոց խուժանի մը կողմէ, զինուած հրացաններով, կացիններով, բիրերով եւ այլ գործիքներով: Թուրք Հրամանատար Խուլուսի Պէյ, տեղւոյն հիւրանոցի կտուրին դրօշակ մը տնկել կու տայ եւ եկեղեցիի գմբէթին վրայ մունետիկ մը բարձրացնելով ՝ կանչել կու տայ.

- Ո՛վ հայեր, եթէ 24 ժամուան մէջ իսլամութիւնը ընդունիք, պիտի ապրիք:

Հայերը գիտնալով որ ասիկա խաղ մըն է, կը փորձեն ճողոպրիլ մահուան ճիրաններէն ու կ՚ուղարկեն նախ ծերունիներ եւ երէցներ, սակայն բոլորն ալ կը ձերբակալուին եւ կը բանտարկուին եկեղեցիին մէջ: Հրամանատար Խուլուսի կը հրամայէ խուզարկել բոլոր տուները եւ ձերբակալել 15 տարեկանէն վեր եղող բոլոր այր մարդիկը:

Այս չարչարալից խուզարկութիւնները կը շարունակուին երեք օր, որոնց ընթացքին Թուրքերը կը յաջողին կալանաւորել հազիւ 120 այր մարդ:

Այս 120 հայերը եկեղեցիէն դուրս հանելով, անոնց ձեռքերը կապուած վիճակի մէջ կը քշեն դէպի «Պողազլեան»...: Հինգ քիլոմեթր հեռաւորութեան վրայ կային լքուած ջաղացքներ. Խուլուսին կը հրամայէ հոն տանիլ զոհերը եւ փամփուշտ խնայելու համար, ջաղացքները փլել կու տայ զոհերուն վրայ: Թուրքերը կը թալանեն շրջանի բոլոր տուները եւ եկեղեցին: Պուրուն Գըշլան երկար ամիս-

Շար.ը էջ 18

# 99 ՏԱՐԻՆԵՐ ԱՆՑԱՆ...

**Ն. ՏԷՐԵԱՆ**

99 տարիներ են անցել այն սեւ ու չարաղէտ թուականից, երբ թշնամին որոշեց գործադրել իր չարանենգ ծրագրերը, որոնք մշակուած էին շատ վաղուց, եւ գործադրուեց:

Այսօր բազում տասնամեակներ անց, ոստխը իր վարքով, նկարագրով եւ գերոճրային արարքներով մնացել ու մնում է նոյն մարդասպանը:

Վկայ՝ Սումգայիթեան վայրագութիւնները:

Վկայ ամենավերջին խօսուն փաստը՝ հայ երիտասարդ սպայի գազանաբարոյ կացնահարումը, որը կատարուեց Բուդապեշտում, քաղաքակիրթ մարդկութեան զարմացկոտ աչքերի առաջ...

Վկայ՝ անզուգական հայորդի, մեծանուն լրագրող, հայ դատի պաշտպան Հրանդ Տինքի սպանութիւնը իր իսկ խմբագրատան առջեւ:

***

Մէկ դար պայքարելուց, բողոքելուց, բազմահազարանոց ցոյցեր կազմակերպելուց, յուշարձաններ կառուցելուց յետոյ, մենք ի՞նչ շահեցինք ի նպաստ մեր արդար եւ անիրաւուած Դատին: Ի՞նչ հատուցում ստացանք երկու միլիոն զոհերի դիմաց: Մի քանի տասնեակ պետութիւնները ճանաչեցին Ցեղասպանութիւնը եւ որոշ երկրների խորհրդարաններում երբեմն խօսում են ի նպաստ մեզ, սակայն ցարդ որեւէ գործնական քայլ առնուած չէ դատապարտելու կատարուած ահաւոր սպանդը, որպէսզի մասամբ թեթեւացնելու մեր վիշտը:

Կայ դեռ հակառակը:

Գերտէրութիւնները պաշտպանել եւ պաշտպանում են մեր երդուեալ թշնամուն, որ մինչեւ այսօր էլ փորձում է ճնշում բանեցնել մեր հայրենիքի վրայ:

Այդ են վկայում ամենօրեայ յոխորտանքները, սպառնալիքները եւ շրջափակումը...

Միշտ պիտի ի մտի ունենալ մեր հայրենասէր, իմաստուն հոգեւորական Խրիմեան Հայրիկի Երկաթէ շերեփը... Դրանով է միայն մեր փրկութիւնը:



# ՀԵՏԱՊՆԴՈՒՄ ԱՆՏԵՂԻՏԱԼԻ ՈԳՈՎ...

*Ռ. ԿՈՐԻՒՆ*

*Մեր անմեղ նահատակների 99-րդ տարին ենք ոգեկոչում, մէկ տարի եւս հարիւրամեակը կը բոլորուի: Անցել են այդ տարիները մխալով ի տես չիրականացած արդար պահանջները: Հայաստանի անկախացումից յետոյ Հայաստան-Սփիւռք պահանջատիրութեան գործընթացը առաւել պաշտօնական իմաստ ստացաւ, կոչ արուեց Թուրքիային ճանաչել Ցեղասպանութիւնը, բայց Թուրք իշխանաւորները մեծ պետութիւններին թիկնած, քամակը պինդ նրանց զէնքերով զինուած, ուրանում եւ ժխտում են Ցեղասպանութիւնը:*

*Վերջերս Հայոց Ցեղասպանութեան գլխաւոր կազմակերպիչներից մէկի՝ Էնվեր փաշայի Թոռը՝ Օսման Մայաթեփէք Ցեղասպանութիւնը որակում է՝ «...ամբողջութեամբ հէքիաթ... Ռուսաստանի եւ Անգլիայի դրդմամբ է տեղի ունեցել եւ այդ բախումների ընթացքում թէ՛ հայկական, թէ՛ օսմանական կողմերում էլ ողբերգական իրադարձութիւններ են տեղի ունեցել,,,»: «Ալիք» Փետր. 4, 2014 թիւ 26,(21851) : Ով գիտէ, մասնաւորաբար Գերմանիայի անունը չի յիշւում՝ մեղսակիցներից մէկը: Այո՛, ողբերգական իրադարձութիւններ, բայց ոչ թէ ճակատ - ճակատի դէմ կռւում, այլ ձեր կողմից կազմակերպուած անզէն ժողովրդի կոտորած, չէք համարձակւում ասել՝ մենք հայերին էթնիկ մաքրագործումների ենք ենթարկել, իրենց տեղահան արել, ջարդել, նրանց ունեցուածքը թալանել, պատմական յուշարձանները աւերել, վերացրել եւ հողերին տէր դարձել, ամօ՞թ էք զգում ասելու... բա էն օրերին մանուկից սկսած մինչեւ տատիկն ու պապիկն վայրենաբար յօշոտում էիք, չէիք իմանո՞ւմ որ նրանց մազապուրծ փրկուած ժառանգները, սերունդները, ազգակիցներն ու հայ ժողովուրդը պահանջելու են ձեր գազանային արարքների դատապարտում եւ հատուցում:*

*Գերմեծերի քաղաքականութիւնը հայերի նկատմամբ սխալ է ցեղասպանութեան կապակցութեամբ, Թրքութեանը զօրավիգ կանգնելով հետագային լուրջ եւ աննպաստ իրադարձութիւնների դէմ յանդիման են դուրս գալու թէ՛ ռուսները եւ թէ՛ արեւմուտքը, կարիք է փոփոխութիւն ի շահ իրենց ապագայի քաղաքականութեան: Ասում են՝ պատմութիւնը շարունակ կրկնւում է, ուստի պատմութիւնը յուշում է յոյների սխալ քաղաքականութեան հետեւանքը, Հայաստանին տկարացնելով եւ առանձին թողնելով, մեծաքանակ զոհ տուին եւ երկիրն իրենց ձեռքից ելաւ: Ժամանակն եկել է, որ գերմեծերը միջամտեն եւ ստիպեն Թուրքիային ճանաչի հայոց Ցեղասպանութիւնը:*

*Թուրք իշխանաւորները միշտ էլ վարպետ են եղել խաբեբայութեան, կեղծիքի, ստախօսութեան մէջ, Նրանք անագորուն մարդիկ են, խիղճ ու գութը մոռացած, գորշ գայլերից սերած, գորշ գայլերի կուսակցութիւն ունեն, որը յայտնի է իրենց մոլեռանդ եւ հայատեաց գործելակերպով: Բարեբախտաբար Թուրք ժողովուրդը իր որոշ արդարամիտ եւ մարդասէր մտաւորականների շնորհիւ տասնամեակներ տեղեկացւում է քօղարկուած մասսայական ջարդերի-կոտորածների մասին, այսպիսով իրազեկուած զօրավիգ են կանգնում հայ ժողովրդի պահանջներին իրենց կեանքը վտանգի ենթարկելով: Հրանդ Դինքի ողբերգական սպանութեան յաջորդող տարիներին Թուրք առաջադէմ խմբակցութիւնները իրենց թերթերով, գրութիւններով, գրքերով, ցոյցերով ու բողոքներով յայտնել եւ յայտնում են իրենց զօրակցութիւնը հայ ժողովրդի Ցեղասպանութեան ճանաչման գործում: Նրանք Հրանդ Դինքին վերացնելուց յետոյ այժմ Սեւան Նշանեանին են ուզում գլուխն ուտել, նրանց որակական բնազդն է հայ երեւելիներին աչքով աչք չեն ուզում տեսնել, կարիքի դէպքում չողոքորթում են, իրենց նպատակին հասնելով վերացնում են նրանց, ինչպէս արեցին Գրիգոր Զոհրաբին, Ռուբէն Սեւակին եւ շատ-շատ՝ տաղանդաւորներին: Հայն էլ միամիտ, անկեղծ ու անդավաճան ծառայում է առանց նկատի առնելու իր հայութեան շահն ու պահանջը, այո՛, այսպէս ենք մենք, օտարների մօտ դառնում ենք նուիրեալ ծառայողներ, իսկ մեր հայի դիմաց անհանդուրժող, ոչ թէ մէկս միւսի յաջողութեան ու բարգաւաճման զօրավիգ: Օտարամոլութիւնը մի ախտ է, մտել է մեր մէջ եւ ցեցի պէս եղծում է մեր ազգային արժէքները: Թող մարդասիրութիւնը չշփոթենք օտարամոլութեան հետ:*

*Օտարամոլ եւ անհեռատես հայը միշտ տառապանքի է ենթարկուել, անցեալի փաստեր շատ կան, իսկ մեր օրերինը ահաւասիկ Հայաստանի եւ սփիւռքի հայութեան ազգային մշակոյթի վիճակը, Քեսաբի եւ Հալէպի արհաւիրքները, արդէն երկու տարուց աւելի է Սուրիայում կռիւներ են գնում, իսկ մեր ջոջերը խօսքից այն կողմ չեն անցել: Մեզ ասէք, տեսնենք, կուսակցութիւնը ո՞ր օրուայ համար է, վստահօրէն՝ թէ՛ խաղաղ եւ թէ՛ խառն ժամանակների համար, խաղաղը՝ կազմակերպուելու, իսկ խառն՝ օգնութեան հասնելու համար: Միջին Արեւելքը հայութեան համար դառնում է վտանգաւոր, անհրաժեշտ է լուրջ մտածել եւ հեռատես լինել:*

*Ցեղասպանութիւնը ներկայացնող անհամար գրքեր են գրուել տարբեր լեզուներով վաւերական փաստերի հիման վրայ, սրտցաւ աշխատանքի շնորհիւ գոյութիւն ունի Հայաստանի՝ «Ցեղասպանութեան Թանգարան»-ը ղեկավարութեամբ դոկտոր Հայկ Դեմոյեանի իր կարեւոր ծառայութիւններով հարստացել է թանգարանը հազարաւոր յիշատակ-փաստավաւերական նիւթերով:*

*Վաղ ժամանակներից են մշակուել հայերի զանգուածային ջարդերի ծրագրերը, որոնք իրագործուեցին 1894-96 եւ 1909 թ., իսկ մեծ մասշտապով շարունակուեցին 1915 թուականին ու դրանից յետոյ: «Ցիշենք, թէ 1924 թ. Կարաբեքիր փաշայի հետ ունեցած հանդիպման ժամանակ ինչ էր ասել Ստալինը. «Այն ինչ չհասցրիք անել դուք, կանեն հայոց լեռները» (**ՄԵՐ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՄԵՐԱՆԸ** / Ռուզան **ԱՍԱՏՐԵԱՆ**,15/07/2013, Գրական Թերթ): Ինչ էր նրա միտքը՝ հայոց լեռներ ասելով, թերեւս հայերը զուրկ տափարակ դաշտերից չոր քարին կը նստեն, շատ ճիշտ է խոստովանել ջիվաղը, քանի որ Հայաստանի լաւագոյն տարածքները ռուսների կողմից, հայերի հաշուին, գիջեց թուրքերին եւ վրացիներին եւ մեզ թողեց քարաստան Հայաստանը:*

*Սարսափելի ջարդերի հետեւանքով ամբողջ մի ժողովրդի կեանքը կործանուեց իր իսկ դարաւոր բնօրրանից տեղահանուելով եւ կոտորածի ենթարկուելով: Թուրք մարդասպան ասկեարները նոյնիսկ թոյլ չէին տալիս մայրերն իրենց սպանուած զաւակներին թաղեն: Գրիգոր Ջանիկեան՝ «Ուժանիւթ» վէպի մէջ գրում է՝ «...ոմանք փորձում էին սարսափից կարծրացած, քարացած կածանը եղունգներով փորել, զաւակներին թաղել, զինուոր-ոստիկանները թոյլ չէին տալիս ասելով,՝-մեր սուրբ հողը ձեր լեշերով մի՛ պղծէք» : Անխիղճնե՛ր, երբուանից այդ հողերը ձերն եղան, ընիկ տիրոջ մաքրամաքուր արիւնը հեղելով պիղծ էք համարում անմեղ ու արդար յօշոտուած մանուկների մարմինները իրենց իսկ պապենական հողում թաղուելո՞ւ: Պիղծը դուք էք ձեր մեծ ու պզտիկով, որ վայրենաբար միջին արեւելեան տափաստաններից եկած բարբարոս արարքներով ու բնիկների կոտորածներով տէր կանգնեցին հայ ժողովրդի պապենական հողերին: Այդ հողերը հայ քրիստոնեաների արեամբ սրբագործուած հողեր են, պիղծը դուք էք, որ ձեր արարքներով մաքրամաքուր օդն ու ջուրը, հողն ու գետինը պղծեցիք, դուք երբեք ու երբեք արժանի չէք այդ հողերին:*

*Պատմութեան բաւիղներում շարունակ հայ ժողովուրդը տառապանքների է ենթարկուել, մեղսակից է նաեւ մեր ժողովուրդը, ազգային ռազմավարութեան գաղափարախօսութեան պակասը մեզ էս օրն է գցել, երբ մի քիչ դժուարութեան է հանդիպել տուն տեղ թողել, յանձնել է օտարներին եւ երկրից հեռացել: Ինչ է նշանակում այս ճակատագրական տարիներին մտաւորականը, գրողը, բանաստեղծը, արուեստագէտը արտագաղթեն, սրանք սիւներն են երկրի, ժողովրդի մտքի, հոգուղեցոյցը, նեղ օրերի ռահվիրանը, եթէ այսպէս շարունակուի մեծ աղէտի դէմ յանդիման ենք կանգնելու: Տեսէք պատերազմներից յետոյ Գերմանիան եւ ճապոնիան ոնց կառուցեցին իրենց պետականութիւնը՝ պետական այրերի եւ ժողովրդի ճիգերով, զրկանքներով եւ քրտնաթոր աշխատանքի շնորհիւ՝ «Իսկ մենք արձակեցինք ազահութեան ու արժեզրկումների սահմանները: Այս ամէնի մէջ ամենացաւալին խաղաղ օրերին իր հայրենիքից հեռացող հայն է: Նա այսօր հեռանում է սեփական ազգի օտարների վերաբերմունքից, որոնք ակամայ, իրենց անձնական շահերից ելնելով, գործիք են դարձել միջազգային կառավարող ուժերին»: **ՄԵՐ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՄԵՐԱՆԸ** / Ռուզան **ԱՍԱՏՐԵԱՆ** 15/07/2013, Գրական Թերթ:*

*Հայաստանից հայը գաղթում է լաւ ապրելու համար, դա ամէն մարդու իրաւունքն է իր կարողութիւնների եւ ընդունակութիւնների համապատասխան կեանք ապրելու, սակայն հայի պարագան տարբեր է, երկիրը դժուար ժամանակներում է գտնւում, գոյութեանը վտանգ է սպառնում, սերունդ հասցնելու կարիքն է զգացւում: Բոլոր երկրների պարագայում էլ պատահել են ճգնաժամային տարիներ, մէկ սերունդ, երկու սերունդ ապրել են նեղ պայմաններում, նրանք զրկանքներով, մաքառումներով եւ չարչարանքներով ապահով երկիր են կառուցել իրենց զաւակների համար: Այդքան ասում են հայը խելացի է, հայի գենը տարբեր ուշիմութեամբ ու ձիրքով է օժտուած, հայը աշխատասէր է, հայը հայրենասէր եւ ազգասէր է, ուր է այդ խելացութիւնը, աշխատանքը, երկիրը դատարկելով թողնում ենք անպաշտպան, պատրաստ ատրպէյջանի եւ Թուրքիայի համար իրենց նպատակները իրագործելու: Հայրենի իշխանաւորներ յո՜*

*Շար.ը էջ 19*

ՄԻՈՒԹԻՒՆԸ ԶՕՐՈՒԹԻՒՆ Է

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ

Հովանաւորութեամբ՝

**Արեւմտեան Ամերիկայի Շրջանակային Յանձնաժողովի**

Կազմակերպութեամբ՝

**Ասպետներու Համախմբումին և Լոս Անճելըս-Սան Ֆերնանտօ Հովիտի Մասնաճիւղին**

**ՀԲԸՄ-ի Հիմնադրութեան 108-րդ Տարեդարձի Տօնակատարութիւն**

Օրուան բանախօս՝ **Հրաչ Սէփէթճեան**

Ելոյթ կ'ունենան՝

Երգիչներ՝ **Գասպին Գօզմանեան, Ռուբէն Թեւունց,** Զուռնաչար **Արմէն Մովսիսեան**

և

Մանուկեան-Տէմիրճեան Վարժարանի Նուագախումբը

Կիրակի, 27 Ապրիլ, 2014, կ.ե. ժամը 5-ին

**ՀԲԸՄ Մանուկեան-Տէմիրճեան Վարժարանի**

**Աղաճանեան սրահին մէջ**

6844 Oakdale Avenue, Canoga Park, CA 91306

Հիւրասիրութիւն ձեռնարկէն ետք

**ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ**

# ԿՈԶՄՈ ԿՈԶՄՈՅԵԱՆ-100
## ...ԵՐԲ ԿԵԱՆՔԸ ԱՊՐՈՒՄ ԵՍ ՊԱՏՈՒԱԽՆԴՐՕՐԷՆ ՈՒ ՆՈՒԻՐՈՒՄՈՎ

*ՄԵԼԱՆԻԱ ԲԱԴԱԼԵԱՆ*

*Որեւէ ժամանակաշրջան իր գաղափարաբանութեամբ ստեղծում է մարդկային հաւաքական դիմանկար, այսինքն՝ մենք անխուսափելիօրէն կրում ենք դրոշմը ժամանակի ամէն փոփոխութեան: Որքան էլ՝ իւրաքանչիւրիս անհատականութեան անխուսափելիութեանը, հասարակարգի գաղափարախօսութիւնն է, այնուամենայնիւ, թելադրողը ձեւաւորուած ընդհանուր աշխարհայեացքի եւ մտածողութեան: Եթէ ամէն դարաշրջան կարիք ունի եւ ստեղծում է իր ժամանակի հերոսին, Անհատին, որ թթուածնային անհրաժեշտութեան պէս է մարդկութեան համար, ապա հասարակական լիարժէք ընթացքը կարիք ունի մարդկային այն տեսակին, այն շերտերին, որոնք ապրում են կեանքը ընտրած գործին, մասնագիտութեանը, մերձաւորներին ու միջավայրին, հանրային երեւոյթներին նուիրումով, երբեմն՝ աննկատ նուիրումով: Նրանք իրենց ժամանակի խոնարհ հերոսներն են:*

*Այդպէս է ապրել իր կեանքը Կոզմօ Կոզմոյեանը՝ մտաւորականը, պատմաբանը, կրթական գործիչը. երեսուն եւ աւելի աշխատանքային տարիներ նա ամէն օր նոյն պատասխանատուութեամբ ու պարտաճանաչութեամբ քայլերն ուղղել է Ակադեմիայի պատմութեան ինստիտուտ: Այդ ընթացքում ստեղծել է երկրի տնտեսական զարգացման կարեւոր բնագաւառներից մէկի՝ Խորհրդային Հայաստանի արդիւնաբերական կեանքի ամբողջական տարեգրութիւնը:*

*Ռուբէն Կոզմոյեանի աշխատասենեակում եմ. գրասեղանին դրուած են Կոզմօ Կոզմոյեանի հեղինակած գրքերը՝ «Քաղաքների զարգացումը Սովետական Հայաստանում», «Վերելքի ճանապարհ», «Լենինական», «Ալավերդի», «Կիրովական» եւ այլ: Այդ տարիներին երկրում բացուած արդիւնաբերական իւրաքանչիւր նոր կառոյց՝ գործարան թէ փաբրիկա, եղել է նրա ուշադրութեան կենտրոնում, ուսումնասիրութեան նիւթ դարձել, վաւերացուել տասնեակ աշխատութիւններում: Նա եղել է Խորհրդային Հայաստանի ինդուստրացման՝ երկրի համար դրա աննախադէպ վերելքի շրջանի ականատեսը, տարեգրողն ու պատմագրողը, ներկայացրել ոլորտի ձեւաւորման, զարգացման, կայացման դժուարութիւնները, յաջողութիւններն ու ձեռքբերումները, նաեւ պետական – կուսակցական գործիչների ներդրումները, նրանց մասնակցութիւնը արդիւնաբերական գործի զարգացմանը: Ժամանակի հեռաւորութիւնից, երբ այդ կառոյցներից շատերն այլեւս չեն գործում, Կ. Կոզմոյեանի աշխատութիւններն իրենց պատմական նշանակութեամբ աւելի են արժեւորւում:*

*Սեղանին դրուած են նաեւ Խորհրդային երկրի 40-60-ականների մթնոլորտն արտայայտող լուսանկարներ – Կ. Կոզմոյեանի ուսումնառութեան տարիների՝ այդ շրջանի մարդկանց հաւաքական նկարագրի բնորոշ պատկերներ: Այս լուսանկարներով եւ Ռուբէն Կոզմոյեանի յիշողութիւններով փորձում եմ նախ ճանաչել, ապա ներկայացնել կեանքը կրթական ու գիտական գործունէութեանը նուիրած մտաւորականի, մարդու կերպարը:*

*Կոզմօ Կոզմոյեանը ծնուել է 1914 թուականին, Ապրիլի 17-ին, Թուրքիայի Սեբաստիա նահանգի Դաւրա գիւղում: 20-ականներին Բաթումիով ներգաղթել է Արեւելեան Հայաստան, սովորել է Լենինականի Ա. Մռավեանի անուան մանկավարժական տեխնիկումում, ապա Երեւանի պետհամալսարանի պատմութեան ֆակուլտետում: Աշխատանքային գործունէութիւնը սկսել է մանկավարժութեամբ՝ Հայաստանի տարբեր շրջաններում, պատերազմի տարիներին՝ 1941-1944-ին եղել է Էջմիածնի շրջանի ժողկրթբաժնի վարիչը, ապա տեղափոխուել է Երեւան, աշխատել որպէս տեսուչ՝ ՀՍՍՀ Լուսաւորութեան մինիստրութիւնում, 1945-ից երեք տարի ղեկավարել է Երեւանի կոպերատիւ տեխնիկումը:*

*1948-ից սկսւում է աշխատանքային գործունէութեան նոր՝ ակադեմիական շրջանը, ՀՍՍՀ ԳԱ պատմութեան ինստիտուտում: Ակադեմիան հրատարակչական մշակուած տարեկան պլան ունէր՝ իրագործման յստակ ծաւալների ու ժամկէտների շրջանակներում: Կոզմօ Կոզմոյեանը, շնորհիւ բնատուր աշխատասիրութեան, բարեխղճութեան ու պարտաճանաչութեան, մշտապէս կարողացել է պահպանել սահմանուած չափանիշները, ինչը աննկատ չէր կարող անցնել ղեկավարութեան կողմից: Նա համարւում էր ակադեմիայի լաւագոյն աշխատակիցներից մէկը: «Ակադեմիան եթէ նման արդիւնաւէտ աշխատակիցներ շատ ունենար, կը դառնար Միութեան առաջատարներից», ասել է Վիկտոր Համբարձումեանը, միաժամանակ նկատել, որ ներկան պատմութեան հեռաւորութիւնից աւելի լաւ է երեւում, եւ որ Կոզմօ Կոզմոյեանի գործերը գնահատելու ժամանակը դեռ գալու է:*

***

*Միջավայրի ազդեցութիւնն առհասարակ մարդկային նկարագրի ձեւաւորման հիմնական գործօններից է, սակայն ընտանեկան մթնոլորտը ամենահիմնականն է: Հանապազօրեայ հացը ազնիւ աշխատանքով վաստակող, պարզ արհեստաւորի ընտանիքում մեծանալով՝ նա բնականաբար չէր կարող կրողն ու շարունակողը չլինել այդ նոյն արժէքների:*

*Ծննդավայրից յիշողութիւններ շատ չեն եղել, բայց եղածը՝ այնքան ուշարժան, որ չնայած տարիներ են անցել, ընտանիքում չեն մոռացւում. «Իր ծննդավայրից յիշում էր միայն մի դրուագ, որ խաղալիս է լինում ցորենի արտում, ձիով իրեն է մօտեցել թուրք գիւղապետը, արտից դուրս հանել ու ասել, որ դա հաց է, բարիք է, որ արտից դուրս խաղայ: Աւելի ուշ ցաւով իմացել է, որ այդ գիւղապետին թուրք իշխանաւորները կախել են՝ հայերի փախուստը գիւղից դէպի Սամսուն կազմակերպելու համար»:*

*Բնութեանն ու արեւին հաւատացող, հայրենի հողին կապուած մարդիկ էին Դաւրա գիւղի բնակիչները, ցորենի արտն էր նրանց յոյսն ու մխիթարութիւնը, նրանք հիմնականում ջրաղացպաններ են եղել, ջրաղացպան էր նաեւ իր հայրը՝ Սենեքերիմը, ու հացը պաշտամունք էր Կոզմոյեանների տանը:*

*«Մի օր համալսարանից դուրս եկա / Աբովեան փողոցի սեւ շէնքը, Ղուկասեանի այգով տուն էի գնում: Այգու մուտքը փայտեայ կամար ունէր,- յիշում է որդին, – տեսայ մի մարդ կռացաւ ու ինչ-որ բան դրեց փայտին: Մօտեցայ: Մի կտոր սեւ հաց էր: Այգուց դուրս գալուց նկատեցի այդ մարդուն: Հայրս էր...»:*

*Ստամբուլի Կեդրոնական վարժարանի սան է եղել Կոզմօ Կոզմոյեանը, նրա անունը որդին արխիւներում գտել է հօր մահից շատ տարիներ անց, տպաւորուել անուան դիմաց եղած գրութեամբ. «Հասցէ՝ եկեղեցի, նիւթական միջոցները՝ եկեղեցի, անհրաժեշտութեան դէպքում ում դիմել՝ եկեղեցուն»: «Սրանից աւելի՝ գաղթակա՞ն, ասում ու շարունակում է: Համալսարանի պատմութեան ֆակուլտետում ուսանելիս, դասախօսութեան ժամանակ Աճառեանը, որ վատ տեսողութիւն է ունեցել, մի անգամ անցնելով Կոզմոյի կողքից, կանգնել ու հարցրել է՝ «Տղաս, դու Գաֆաֆեանի աշակերտն ե՞ս եղել»: Բացառիկ գեղեցիկ ձեռագիր է ունեցել, դա է եղել պատճառը, որ համալսարանի արհկոմը նրան դասախօսութիւնները արտագրելու յանձնարարութիւն է տուել, ռոտապրինտով դրանք բազմացնելու եւ ուսանողներին բաժանելու նպատակով: «Տարիներ անց, – յիշում է Ռուբէն Կոզմոյեանը,- հայրական տան բազմոցի փոս ընկած տեղը ցոյց էին տալիս ու ասում՝ հայրդ այնքան էր նստել, որ բազմոցը մաշուել էր»: Եւ ինքն էլ այդպէս է յիշում նրան՝ մինչեւ ուշ երեկոյ լուսամփոփի մօտ կռթնած, գրելիս:*

*Էջմիածնում աշխատելիս, երբ ժողկրթութեան բաժնի վարիչն էր, յաճախ իր կառքով շրջայցի էր գնում գիւղական դպրոցները: Մի օր, ուշ գիշերին տուն դառնալիս դալանում քնած անօթեւան երեխաների է հանդիպում, նրանց բերում է տուն, խնամում, կերակրում, ընտանիքի անդամներին գտնելուց յետոյ էլ երկար ժամանակ շարունակում է հոգ տանել.- պատերազմի դժուար տարիներն էին: Իսկ դրանից առաջ խորհրդային հասարակութիւնը դժոխային փորձութեան շրջան էր ապրել, երբ երկրով մէկ մոլեգնում էին ստալինեան ռեպրեսիաները, մարդկանց փոխյարաբերութիւնները մղձաւանջի էին վերածուել: Վախը սողոսկել էր ամէն տուն, սեփական տան պատերից ներս էլ մարդիկ պաշտպանուած չէին կասկածամտութիւնից ու քսու մատնութիւններից. «Պատերն էլ ականջ ունեն», ասում էին շշուկով: Թանձր վախ ու անվստահութիւն կար ամէն տեղ: Փողոցում լսուող մեքենայի ամէն ձայնից կուչ էին գալիս, խառնւում, թէ՝ ուր որ է, մէկին կը տանեն:*

*«1946-ին եղաւ ստալինեան հերթական աքսորը. Կոզմոյեանին, մի ռուս զինուորականի ու մի չեկիստի «բաժին» էր հասել Նալբանդեան փողոցի մի հասցէ: Տունը կիսանկուղային է եղել: Գիշերով, ժամը 1-ին «տրոյկան» յայտնուել է նշուած տանը: Տէրերը անակնկալի են եկել, վախեցել: Կոզմոն նկատել է, որ տանտէրերը միմեանց հետ ինչ-որ հայեացքներ են փոխանակում, դանդաղում են ու տուեալ վիճակին ոչ ադեկվատ վարք ունեն: Նա պահ է գտնում ու տանտիրուհուն ասում, եթէ թաքցրած բան ունէք, վերցրէք, մի վախեցէք: Տանտիրուհին հայեացքով խորդանոցն է ցոյց տալիս: Հայրս բռնում է տղամարդու թեւից ու կոպտօրէն խորդանոց հրում, ասելով որ շատ են դանդաղում:*

*Թէ ինչ էին վերցրել տանտէրերը խորդանոցից, յայտնի չէ, միայն, եթէ չեմ սխալւում 1955-ին, երբ այդ աքսորեալները հօրս գտան, մի մեծ տորթ էին մեզ բերել, որի վրայի կարմիր վարդի վրայ աչքս մնաց, որովհետեւ ամառ էր, մենք սառնարան չունէինք, ես էլ քնել էի, իսկ առաւօտեան տորթը թթուել էր:*

*Էջմիածնում աշխատելիս, մի*

*Շար.ը էջ 19*


ԼՈՍԱՆՃԵԼԸՍԱՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՄԲ

ԿԼՈՐ ՍԵՂԱՆ

ՆԻՒԹ՝

ՀԱՅԵՐԷՆԸ ԵՒ ՀԱՅԵՑԻ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ՝

ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Կը մասնակցին՝

*Յակոբ Պալեան* – Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութիւն

*Յարութ Տէր Դաւիթեան* - Նոր Սերունդ Մշակութային Միութիւն

*Օշին Քէշիշեան* - Թէքէեան Մշակութային Միութիւն

*Հրաչ Սեփեթճեան* – Հայ Բարեգործական Ընդհանուր Միութիւն

*Մինաս Գոճայեան* - ՀԱԱ Լեզուի Հաստատութեան Արեւմտահայերէնի Բաժին

*Վարդգէս Վարդանեան* - «Մեսրոպեան Ուխտ»

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 26 Ապրիլ 2014-ին, երեկոյեան ժամը 7-ին, ԼԱՐՔ Երաժշտական ընկերութեան սրահը, 543 Arden Ave., Glendale, 91203:

*Մուտքը՝ ազատ* *Հիւրասիրութիւն*

## ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԻ ՍԵՄԻՆ

# ՈՒԼՆԻԱՅԷՆ ԵՐՈՒՍԱՂԷՄ ՀԵՐՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ԿԵԱՆՔԸ

## Բարթողիմէոս Ծ. Վարդապետ Թագաճեան (1850-1937)

*ԴՈԿՏ. ԶԱՒԷՆ Ա. ՔՀՆՅ. ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ*

*Երուսաղէմի երջանկայիշատակ Թորգոմ Պատրիարք Գուշակեան իր դամբանականին մէջ 1937 թուին կ'ըսէր. «Բարթողիմէոս Ծայրագոյն Վարդապետ Թագաճեան քաջ էր, ազնիւ՝ հոգիով, ազնուական՝ վարքով, խորշանք ունէր գռեհկութենէն ու չէր գիտեր նուաստանալ»: Պատրիարքին մէկ այլ վկայութեամբ, երբ Բարթողիմէոս Ծ. Վարդապետ կը պատարագէր «երկրի վրայ չէր կարծես, ու կը վերանար երբ սկիհը ունէր ի ձեռին»: 87 ամեայ ծերունին երբ կը վախճանէր Երուսաղէմի հայոց վանքի իր խուցին մէջ 1937 թուի Վարդանանց տօնի նախօրէին, Մարտ 10-ին, կ'իյնար բարձրանալով որպէս Հերոս Վարդապետը եւ Ուլնիոյ (Ֆռնուզի) Ս. Կարապետ վանքին նախկին անվեհեր վանահայրը:*

*Բարթողիմէոս Ծ. Վրդ. Թագաճեան հերոսի համբաւ շահած էր, երբ Երուսաղէմ կը հասնէր 1923-ի Մարտ ամսուն, եւ առանց վանքի միաբանութեան շարքին անցնելու կը ծառայէր Աթոռին 14 տարիներ: Ծնած էր ան 1850 թուին Զէյթունի շրջանի Եէնիճեգալէ գիւղը եւ մկրտուած Մինաս անունով: Վարդապետը կանուխէն որբանալով կը յանձնուէր Ուլնիոյ Ս. Կարապետ եւ Ս. Ստեփանոս Ուլնեցի վանքերուն միաբան՝ Յովհաննէս վարդապետի հոգածութեան: Կ'աշկերտէր Ուլնիոյ առաջնորդ Նիկողոս Խուխուռունի Դաւթեան Եպիսկոպոսին, եւ անկէ կարգով կը ստանար եկեղեցական աստիճանները, վարդապետ ձեռնադրուելով 1888-ին երբ կը ստանար Տէր Բարթողիմէոս անունը:*

*Իր Երուսաղէմ կեցութեան վերջին տարիներուն Վարդապետը գրեց իր «Ինքնակենսագրութիւն»ը ու հրատարակեց զայն 1933 թուին Սրբոց Յակոբեանց Վանքի տպարանէն Զէյթունի Հայրենակցական Միութեան հովանաւորութեամբ, ուրկէ մենք եւս քաղեցինք իր մասին շահեկան սոյն տեղեկութիւնները որպէս խօսուն արձագանք գալիք ցեղասպանութեան որ պատահեցաւ իր օրերուն, երբ ինք եւս Տ.Տ. Սահակ Բ. Խապայեան Կիլիկիոյ Կաթողիկոսին հետ միասին Կիլիկիայէն Երուսաղէմ աքսորուեցաւ:*

*Իր երիտասարդութեան Բարթողիմէոս Վարդապետ իր անհանգիստ եւ անհամբեր խառնուածքով միշտ պաշտպաներ էր իր հինաւուրց վանքը Ֆռնուզի մէջ եւ իր հայրենի գիւղը թրքական յարձակումներուն դէմ որպէս անվախ ձիաւոր՝ հրացանը (զոր կը կոչէր 'հրաձայն') ուսին: Պատանի տարիքին տեսեր էր Սսեցի Կիրակոս Գ. եւ Մկրտիչ Ա. Քէֆսիզեան կաթողիկոսները Հաճնոյ մէջ, ուր գացեր էր Նիկողոս եպիսկոպոսին հետ որպէս գաւազանակիր: 1886 թուին Սիսի մէջ ներկայ եղած էր Միւռոն-օրհնէքին:*

*Իր յախուռն բնաւորութեան պատճառով 1890 թուին, 50 ընկերներով, Թուրքեր բոլորը միասին Հալէպի կեդրոնական բանտ դրին, ուր կային նաեւ Նիկողոս Եպիսկոպոս, Կարապետ Եպիսկոպոս եւ գրագէտ Սմբատ Բիւրատ: Սակայն իր հերոսի համբաւը աւելի յայտնի դարձած է 1895-ի համիտեան ջարդերու ժամանակ, երբ ինքն էր Զէյթունի դիմադրութեան գլխաւոր կռուողը:*

*1895 Հոկտեմբեր 12-ին Բարթողիմէոս Վարդապետ հայ զինուորներով պաշարեց Զէյթունի թրքական զօրանոցը եւ բանակցութեան առաջարկ ներկայացուց Թուրքերուն: Վարդապետը, վեղարը գլխուն, Ս. Ստեփանոս Ուլնեցիի խաչը կուրծքին, սուրը բարձրացուցած, Թուրքերէն պահանջեց որ զինաթափ ըլլան, ստիպելով որ իր սուրին տակէն անցնէին «խոնարհութիւն ընելով խաչին առջեւ»: Հայ զինուորներ գրաւեցին զօրանոցը եւ Բարթողիմէոս Վարդապետ ազատեց 150 հայ բանտարկեալները: Թուրքեր չհամարձակեցան Զէյթուն մտնել մինչեւ որ հաշտութիւն կնքուեցաւ:*

*Վարդապետը ուզեց իսկոյն Սիս եւ Ատանա երթալ «բոլոր Կիլիկիան ոտքի հանելու համար» եւ զանոնք Թուրքերու իշխանութենէն ազատելու համար, սակայն իր այդ բուռն փափաքը չիրականացաւ Զէյթունի հայ իշխաններու արգելքին դիմաց: Սակայն Թագաճեան Վարդապետ հանգիստ չէր նստեր, այլ իր թափառումները Ֆռնուզէն Սիս, Սիսէն Կ.Պոլիս, Եգիպտոս եւ Պուլկարիա, եւ կրկին վերադարձը Ֆռնուզի վանք, ցոյց կուտան իր խստապահանջ պարտքն ու պատիւը օգնելու իր ժողովուրդին՝ միշտ գրկանքով եւ աղօթքով:*

*Բարթողիմէոս Ծ. Վրդ. Թագաճեան ճանչցուեցաւ որպէս «Վեղարաւոր Հերոսը», որ եղաւ նաեւ իրեն սրտակից բարեկամ Սմբատ Բիւրատի գիրքին տիտղոսը: Անցաւ ընդ սուր եւ ընդ հուր, մնաց անվախ՝ ճաշակելով նոյնիսկ Ա. աշխարհամարտի եւ հայոց կրած ցեղասպանութեան դառն տարիներու տաժանքը՝ միանալով 1916-ին Կիլիկիոյ Սահակ Բ. Կաթողիկոսի աքսորեալ հոգեւորականներու խումբին դէպի Երուսաղէմ:*

*Այս բոլորէն ետք հայրենասէր հոգեւորականը վերադարձաւ Կիլիկիա, ուր գտաւ իր սիրելի Նիկողոս ծերունի Եպիսկոպոսը վախճանած, վանքը անտերունչ, ու ինք եւս իր կարգին 70 տարիքը անց վերջնականապէս Երուսաղէմ Սրբոց Յակոբեանց վանք քաշուեցաւ 1923 թուականէն սկսեալ: Իր աւանդներն էին երկու մասունքներ, Ս. Ստեփանոս Ուլնեցիի լանջախաչը որ կը պարունակէր Սուրբին մասունքը, եւ ձեռագիր Աւետարան մը զոր ծախու առեր էր պատերազմի օրերուն: Զանոնք յանձնած էր վանքի ձեռագրատան այն պայմանով որ «երբոր բացուին դռներն յուսոյ» եւ հայեր վերադառնան Կիլիկիա, Լանջախաչն ու Աւետարանը միասին տանին Ուլնիոյ (Ֆռնուզի) վանքը:*

*Թագաճեան Վարդապետի վախճանումէն տարի մը առաջ, 1936-ին, Կիլիկիոյ Տ.Տ. Սահակ Բ. Խապայեան Կաթողիկոսը, իր տարեկիցն ու բախտակիցը, Երուսաղէմ այցի կ'երթար վերջին անգամն ըլլալով, ուր կը հանդիպէր իր վաղեմի բարեկամին՝ Տ. Բարթողիմէոս Թագաճեան Ծ. Վարդապետին: Վարդապետը չէր թաքցներ իր սաստն ու զայրոյթը, ինչպէս կ'ըսեն ականատեսներ, եւ բարձրաձայն ի լուր ներկաներուն կը մեղադրէր Կաթողիկոսը որ իր ժողովուրդին հրահանգած էր զէնքերը վար առնել եւ չդիմադրել թշնամիին: Իմաստուն Կաթողիկոսին եւ քաջ հերոսին վերջին հանդիպումն էր այդ: Սահակ Բ. Կաթողիկոս վախճանեցաւ Անթիլիասի իր Աթոռանիստ կաթողիկոսարանին մէջ 1939 թուին:*

*937-ի Վարդանանց տօնին օրը կատարուած է Բարթողիմէոս Ծ. Վրդ. Թագաճեանի վերջին օծումը՝ ձեռամբ Թորգոմ Պատրիարք Գուշակեանի, եւ Վեղարաւոր Վարդապետին մարմինը հանգչած է Ս. Փրկիչ վանքի գերեզմանատան մէջ՝ Արարատի կամաւորներու յուշարձանին կից:*

## ՄԵԾԵՐԸ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

*- Տեղահանութեան իսկական նպատակը թալանն ու ոչնչացումն էր: Իրականում դա բնաջնջման մի նոր եղանակ էր: Երբ թուրքական իշխանութիւնները հրաման էին տալիս, փաստօրէն, նրանք ամբողջ մի ԱԶԳԻ մահավճիռն էին արձակում:*

*ՀԵՆՐԻ ՄՈՐԳԵՆԹԱՈՒ*
*ԱՄՆ-ի դեսպան Թուրքիայում 1919 թ.*

*- Արեւմտահայերի բռնագաղթը այլ բան չէր քան քօղարկուած սպանդ: Չկայ աշխարհում որեւէ լեզու այնքան հարուստ եւ այնքան գունեղ, որով հնարաւոր լինէր նկարագրել նման սարսափները:*

*ԺԱԿ ԴԸ ՄՈՐԳԱՆ*
*Ֆրանսացի գիտնական 1917 թ.*

*- Հայաստանը վերջին շունչն է փչում, բայց նա կը վերածնուի: Այն մի փոքր արիւնը, որ դեռ նրան մնում է թանկագին արիւն է, որից ծնուելու է մի հերոսական սերունդ: Մի ժողովուրդ, որը չի ցանկանում մեռնել՝ չի մեռնում:*

*ԱՆԱՏՈԼ ՖՐԱՆՍ*
*Ֆրանսացի գրող, 1916 թ.*

*ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ՝*
*ՍԱՀԱԿԵԱՆ Լ. ՄԿՐՏԻՉԵԱՆ ԳՈԼԷՃԻ ՍԱՆՈՒՑ ՄԻՈՒԹԵԱՆ*

*ԸՆԿԵՐԱ-ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԱՒԱՔ*
*ՍԱՀԱԿԵԱՆ ԳՈԼԷՃԻ ՕՐՈՒԱՆ ԱՌԹԻՒ*
*«ԵԿԷՔ ՎԵՐԱՊՐԻՆՔ ՄԵՐ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՕՐԵՐԸ»*

*ՄԱՅԻՍ 16, 2014, ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 8:00-ին*

*«ՍՈՂԱՆԱԼԵԱՆ» ՍՐԱՀ*
*1060 N. ALLEN AVE. PASADENA, CAL.91104*

*ՃՈԽ ՀԻՒՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ*

*ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ*

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ
-----------------------------
**Yes, I wish to subscribe to Massis Weekly**
**Enclosed a check for (one year)**
*** $50,00 * $100,00 (first class) for USA**
**$ 100,00 (Air Mail) for Canada.**
**$ 250,00 (Air Mail) Overseas.**
**Name:** -----------------------------------------
**Address:** -----------------------------------------
**City:** --------- **State:**--------- **Zip Code:**------
**Country:** -------------
**Tel :**------------------------ **Fax :** --------------------------

Վերջին Լուրերու Համար
Հայ news.am

## ՄԻՇՏ ԽՈՒՆԿ ԵՒ ԽՈՅԱՆՔ ԴԷՊԻ ԼԻՆԵԼԻՈՒԹԻՒՆ

*Շարունակուած էջ 1-էն*

Ազնաւուր, հայոց դէմ իրագործուած Ցեղասպանութեան նուիրուած «Ils Sont tombes» վերնագրուած զգայացունց երգին մէջ:

Այսօր կանգնած ենք Ցեղասպանութեան 99-րդ տարելիցին սեմին:

Ցեղասպանութեան հեղինակ Օսմանեան կայսրութեան հաւատաւոր ժառանգորդ արդի Թուրքիան, տակաւին կ՛ուրանայ, կը խեղաթիւրէ հայ ժողովուրդի եւ համայն մարդկութեան դէմ իր գործած աշխարհի պատմութեան մէջ իր նմանը չունեցող հրէշագործութիւնը: Ան կը մեղանչէ հակառակ ԱՄՆի դեսպան Հենրի Մորկէնթաուններու, գերմանացի Օհաննէս Լեփսիուսներու, Քարլ Լիբկնեխտերու, Ռուս ազգի զաւակ՝ Վալերի Բրիւսովներու, նորվեկիացի Ֆրիտյոֆ Նանսեններու, Ֆրանսացի Անաթոլ Ֆրանսներու եւ բիւրաւոր ականատես հեղինակութիւններու վկայութիւններուն, անվիճելի փաստարկութիւններուն եւ պատմական հաստատումներուն:

Թուրքիա, ոչ միայն կ՛ուրանայ իր յանցագործութիւնը, ընդհակառակը՝ իրեն դէմ կատարուած ցեղասպանական ամբաստանութեան տակ կ՛առնէ հայ ժողովուրդը: Ան կ՛աշխատի տարհամոզել միջազգային հանրային կարծիքը, թէ հայն է ցեղասպանը եւ ոչ թէ «մարդասէր» թուրք ժողովուրդը... եւ աւելին՝ առանց խպնելու, զանիկա խորհրդանշող յուշակոթող կը բարձրացնէ իր ցամաքամասին վրայ...:

Թուրքիա, ոչ միայն կ՛ուրանայ իր գործած եղեռնագործութիւնը, այլ նաեւ՝ հաւատարիմ իր կործանարար բնութագրին, այլազան եղանակներով մէկ մէկ կը շարունակէ Ցեղասպանութիւնը հայոց դէմ, այսօր 99 տարիներէ ի վեր:

Այդ կը վկայեն Հրանդ Տինքի անարգ սպանութիւնը: Իր սահմաններէն ներս ապրող փոքրամասնութիւնները ճնշող 301 համարակալուած Օրէնքը: Հայաստանի Հանրապետութեան սահմաններու շրջափակումը, այսօր աւելի քան երկու տասնամեակէ աւելի: Այս կը վկայէ ընթացիկ տարուան Մարտ 22-ին Թուրքիոյ հովանիին տակ կատարուած ոմբակոծումները հայաբնակ գիւղաքաղաք պատմական Քեսապի վրայ: Քեսապի թալանումը, բռնագրաւումը ու հայաթափումը դէպի Լաթաքիա...:

X

Մենք կը հաւատանք, որ արդարութիւնը անպայման պիտի յաղթանակէ ուշ կամ կանուխ: Ապացոյցն այն է, որ մեծ թիւ սկսած է կազմել աշխարհով մէկ, այն յառաջադէմ բոլոր երկիրները, որոնք, հակառակ Թուրքիոյ զգուշացումներուն եւ սպառնալիքներուն, ճանչցան Օսմանեան Երիտ. թուրքերու կողմէ արեւմտահայաստանի հայ ազգաբնակչութեան դէմ կատարուած Ցեղասպանութիւնը: Անոնք պատգամեցին արդի Թուրքիոյ՝ դէմ առ դէմ գալ իր պատմութեան հետ: Արեւմտահայաստանի հայ ազգաբնակչութեան դէմ, Օսմանեան Թուրքիոյ կողմէ իրագործուած Ցեղասպանութիւնը ճանչցողներու շարքին են՝ Գերմանիան, Սպանիան, Վատիկանը, Քանատան, Լիբանանը, Իտալիան, Յունաստանը, Եւրոմիութիւնը, Կիպրոսը, Շուէտը, Պելճիքան, Լեհաստանը, Ֆրանսան, Արժանթինը, Ռուսաստանը, Որուկուէյը, Զուիցերեան եւ ուրիշներ: Տարակոյս չի կայ, որ անոնք դեռեւս պիտի դատապարտեն եւ հատուցում պիտի պահանջեն:

Մենք կը հաւատանք, որ Թուրքիա պիտի դադրեցնէ հայոց Ցեղասպանութիւնը ուրանալու իր յամառութիւնը: Ան պիտի ճանչնայ, դատապարտէ եւ հատուցէ զայն: Կարելի չէ թաղել ճշմարտութիւնը: Կարելի չէ անժամանցելիօրէն ուրանալ պատմական իրողութիւնները: Կարելի չէ արեան կանչը լռեցնել յաւիտենապէս: Այո, կը հաւատանք, որ մեր Ապրիլեան անթաղ նահատակներու արեան կանչը պիտի յաղթանակէ ուշ կամ կանուխ, յանուն ճշմարտութեան, արդարութեան եւ աշխարհի խաղաղութեան:

## ԿՏՐՈՒԿ ՇՐՋԱԴԱՐՁ

*Շարունակուած էջ 7-էն*

*յօդուածը բաց կոչ մը ըլլայ յօգուտ այդ նախաձեռնութեան մեկնարկին: Մենք այդ ուղղութեամբ փոքր քայլ մը առինք, ապահովելով ArmenianIdentity.com կայքէջի իրաւունքը: Մեր նպատակն է զայն ծառայեցնել վերը նշուած մտքերու տարածման, մեր նորահաս սերունդներուն ինքնաճանաչման գործընթացի զարգացման ու «գործով հզօր եւ խօսքով հանճարեղ» անձնաւորութեանց կերտման: Այս գաղափարը մենք քննարկած էինք կարգ մը ակադեմականներու հետ, որոնք պատրաստակամութիւն յայտնած էին իրենց ներդրումը բերելու գործի յաջողութեան: Կը մնայ զարգացնել գաղափարը եւ գտնել համացանցի հմուտ անձինք, զայն լաւագոյնս ներկայացնելու համար մեր ժողովուրդին: Յուսալից ենք, որ այս գծով ալ կը գտնենք իրենց ներդրումը բերողներ:*

*Աւարտելու համար նշենք երկրորդ փոքր քայլ մը, որ աւելի խորհրդանշական է: 1829ին, քանամեայ Խաչատուր Աբովեանը հասաւ Արարատի կատարին: Վստահաբար այս յաջողութիւնը մեծ ազդեցութիւն ունեցաւ անոր մտածելակերպի զարգացման ու ապագայ գործունէութեան վրայ: Քանի մը տարիներ առաջ, նպատակադրեցինք հետեւիլ Աբովեանի օրինակին: Անցեալ տարի, եօթը ընկերներով, բոլորս ալ միջին տարիքի, հասանք մեր նպատակին, մեզ հետ ունենալով Աբովեանի տարիքի վեց երիտասարդներ: Յոյսով ենք, որ այս յաջողութիւնը անոնց մտածելակերպի զարգացման ու ինքնութեան ամրակայման վրայ մեծ ազդեցութիւն կ՛ունենայ, բարի օրինակ հանդիսանալով նաեւ իրենց տարեկիցներուն:*

*Յ.Գ. Մեզի հետ կարելի է կապ հաստատել Harut@excelhye.com հասցէով:*

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

## ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ

*Շարունակուած էջ 6-էն*

*Թեան տօնը, կ՛ուզեմ արտայայտել զօրակցութիւնս բոլոր անոնց, որոնք կը հեծեն դժուարութիւններու եւ նեղութիւններու բեռին տակ, յատկապէս մեր սիրելի Քեսապահայ ընտանիքներուն: Յարուցեալ Քրիստոսը, որուն վրայ դրած ենք մեր ամբողջ վստահութիւնն ու յոյսը բոլորիս կ՛ըսէ. «Աշխարհի մէջ նեղութիւն պիտի ունենաք, բայց քաջալերուեցէք, որովհետեւ ես յաղթեցի աշխարհին», (Յովհ. 16, 33). «Ինծի եկէք դուք ամէնքդ, որ յոգնած էք ու բեռնաւորուած, եւ ես հանգիստ պիտի տամ ձեզի: Ձեր վրայ առէք իմ լուծս... որովհետեւ իմ լուծս քաղցր է եւ բեռս թեթեւ», (Մատթ. 11, 28-30):*

*Սիրելիներս, նոյնիսկ այս դժնդակ օրերուն մենք ուրախութեամբ կը տօնենք Զատկուան տօնը: Այս օրերուս՝ առաւել եւս անխախտելի յոյսով է որ կ՛ուզենք տօնել Յիսուսի Յարութիւնը, որ յաջորդեց անոր խաչելութեան եւ մահուան: Զատիկը՝ յաւիտենական կեանքի աղբիւրն է, որ լուսաշող ու պայծառ արեգակի նման ծագեցաւ մահուան ու գերեզմանի խաւարէն: Լուսաւորեց իրարայաջորդ սերունդները եւ ամրացուց հաւատքը:*

*Այս հաւատքով զօրացած կը շնորհաւորեմ բոլորիդ Սուրբ Զատիկը՝ մաղթելով որ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի յարութեան խորհուրդը օրէ օր աւելի խոր կերպով թափանցէ իւրաքանչիւրիդ կեանքին ու ապրելակերպին մէջ այս աշխարհի վրայ եւ ուղղէ ձեր ամենօրեայ փոքր եւ մեծ քայլերը դէպի յաւիտենական անմահ կեանքը, զոր միայն ինք՝ Յարուցեալը կրնայ լիովին պարգեւել: Ամէն:*

*ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՑ*

*ՕՐՀՆԵԱԼ Է ՅԱՐՈՒԹԻՒՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ*

**ՄԻՔԱՅԷԼ ԵՊՍ. ՄՈՒՐԱՏԵԱՆ**
*Առաջնորդ Հիւսիսային Ամերիկայի*
*Տիրամայր Նարեկի*
*Հայ Կաթողիկէ Թեմին*

## ՀԱՅ ԱՒԵՏ. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ

*Շարունակուած էջ 6-էն*

*Արդարեւ, այս Սուրբ Զատկուայ եղանակին Յիսուս Քրիստոսի յարութիւնը անգամ մը եւս մեր մէջ կ՛արմատացնէ այն հաւատքը, որ կարգ մը աստուածատուր սկզբունքներ որչափ ալ անտեսուին, անարգուին, կոխկրտուին եւ թաղուին՝ ի սպառ չեն կորսուիր, այլ ի վերջոյ կը յաղթանակեն: Թող խաւարամիտ, նենգամիտ եւ անիրաւ մարդիկ ուրանան, հալածեն եւ թաղեն լոյսը, ճշմարտութիւնը, արդարութիւնն ու սէրը, բայց, վաղ թէ ուշ, այս յաւիտենական իրականութիւնները պիտի յաղթանակեն: Թող կեղծաւոր, անգութ եւ անիրաւ փարիսեցիները, քահանայապետերն ու կուսակալները գրպարտեն, հալածեն, խաչեն եւ թաղեն Տէր Յիսուսը, բայց Աստուած մէկդի պիտի գլորէ գերեզմանաքարը ու պիտի յարուցանէ զայն:*

*Այս հաւատքով զինուած՝ քրիստոնեան իր կեանքի պայքարին մէջ երբեք չի վհատիր՝ գիտնալով, որ հզօր Աստուած իր գահուն վրայ նստած կը շարունակէ գահակալել եւ պիտի չարտօնէ, որ մեղաւոր մարդիկ ի սպառ յաղթանակեն: Վերջին խօսքը Յարուցեալ եւ Յաղթական Տիրոջն է: Անոնք որոնք իրն են, կրնան հաւատքով եւ յոյսով ապրիլ եւ յաղթականօրէն գոչել. «Քրիստոս յարեաւ ի մեռելոց. օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի»:*

**ՎԵՐ. ԴՈԿՏ. ՎԱՀԱՆ Յ. ԹՈՒԹԻԿԵԱՆ**
*Գործադիր Տնօրէն Հայ*
*Աւետարանական*
*Համաշխարհային Խորհուրդի*

## ԵՈԶԿԱՏ - ՅՈՒՇԵՐ ԵՒ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

*Շարունակուած էջ 14-էն*

*ներ կ՛ապրի՝ զուլումի, աւերի եւ սարսափի մէջ:*

*Այսպէս, արիւնահեղութենէ ընկճուած եւ անյոյս հայերը, իրենց առտնին գոյքերը հաւաքելով սայլերու վրայ կը բեռցնեն եւ ահ ու դողի մէջ կը չուարին:*

*Հայ գիւղաքաղաքին բոլոր այրերը կը բնաջնջուին, իսկ մնացեալները՝ կիներ եւ մանուկներ, կը յափշտակուին Թուրքերու կողմէ:*

*Այսպէսով, Եոզկատ գաւառի մեծ գիւղաքաղաքներէն մէկը՝ Պուլրուն Գըշլան կ՛ամայանայ:*

*1916-ի երկրորդ Ջարդէն ետք, Պուլրուն Գըշլան լրիւ կը դատարկուի եւ կառավարութեան հրահանգով հոն կը տեղաւորուին արեւելեան նահանգներէն խուճապահար փախուստի մատնուած Թուրք գաղթականներ:*

***

*Յեղասպան Թուրքը աւերեց Հայ Եոզկատն ու իր հայ գիւղերը, արմատախիլ ընելով անոնց հողերը, դար ու դար չէնցնող հայութիւնը, աւերելով տուն եւ գործատեղի, արտ ու պարտէզ, եկեղեցի եւ դպրոց: Սակայն ինչ փոյթ, երբ ոչ մէկ հայ եւ կամ Եոզկատահայ չի կրնար մոռնալ եւ պիտի չմոռնայ՝ հօրէ ի որդի եւ թոռնէ ի ծոռ, թէ հայուն դէմ կազմակերպուած ոճիրներուն մեծագոյնը գործադրուեցաւ նաեւ այնտեղ՝ Եոզկատի տարածքին...*

*Ահաւասիկ, անժխտելի փաստերով լեցուն՝ տարագիր հայուն պատմութենէն մասնիկ մը:*

*Ահաւասիկ հարիւր տարիներ առաջ հայը ոչնչացնելու դաւադրութիւնն ու ծրագիրը ...*

*Եւ այդ բոլորէն ետք արհամարհող, ստախօս եւ անպատիժ մնացած Թուրքը ...*

*Տաք է արիւնը մեր նահատակներուն, թէկուզ 99 տարի ետք, եւ ողջ է անոնց կտակը:*

*Մեր մեծ հայրերու եւ մեծ մայրերու յիշատակը միշտ վառ կը մնայ, ոչ թէ պատմութեան էջերուն մէկ անկիւնը, այլ մեր հոգիներուն, մեր ներկային եւ մեր պահանջատիրական ուղիի ամէն մէկ զգաստ եւ արթուն զարկին ու վազքին հետ:*

*Խունկ եւ աղօթք անոնց յիշատակին ....*

## ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

*Ցաւով տեղեկացանք Գառնիկ Թառանեանի մահը, որ տեղի ունեցած է Երեւանի մէջ:*

*Այս առթիւ «Մասիս» շաբաթաթերթին ու անոր շրջանակը իրենց խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի բոլոր հարազատներուն եւ յատկապէս Տէր Եւ Տիկին Ֆրունզէ Թառանեաններուն:*

## ՅԻՇՈՂՈՒԹՅԻՒՆ

*Շարունակուած էջ 13-էն*

*ներն ու տանել վաճառել Թուրքիայում:*

*Մինչեւ հիմա բազմաթիւ պետութիւններ ճանաչել են 1915 թ. Թուրքիայի կողմից կատարուած Հայոց ցեղասպանութիւնը: Միջազգային հասարակութիւնը եւ Թուրքիայի զգաստ ժողովուրդը կոչ են անում Թուրքիային նոյնպէս ճանաչել այն, իսկ նա, յանձին Ամերիկայի, ունենալով հզօր պաշտպան, ժխտողական քաղաքականութիւն է վարում ու նոր ծրագրեր է մշակում հայերի նկատմամբ նոր ցեղասպանութիւն իրագործելու Քեսապում:*

*Հայաստանը եւ սփիւռքը, միասնական ճակատով, օգտագործում են իրենց բոլոր կապերը միջազգային հասարակութեան, ատեանների եւ պետութիւնների հետ, դիմելով նաեւ ՄԱԿ-ին՝ վերջ տալու Թուրքիայի ոտնձգութիւններին, որպէսզի նա ահաբեկիչներին թոյլ չտայ իր սահմանով անարգել մտնելու Սիրիայի տարածքը եւ Քեսապի հայութեանը դնելու նոր ցեղասպանութեան վտանգի տակ՝ պահանջելով ազատել Քեսապը ահաբեկիչներից:*

*Հայութիւնը կազմակերպում եւ օգնութեան ձեռք է մեկնում Քեսապից տեղահանուած ու Լաթաքիայում պատսպարուած Քեսապի բնակչութեանը, որոնք անհամբեր սպասում են վերադառնալու Քեսապ:*

*«Ձկայ չարիք, առանց բարիքի»: Շատ պետութիւնների մէջ ունենալով հայկական գաղութներ, առաջադէմ հայ քաղաքական ուժերն ու գործիչները բարեկամական կապեր են հաստատել նրանց իշխանութիւնների հետ: Օգտագործելով այդ կապերը, Հայաստանի հանրապետութիւնը պէտք է էլ աւելի աշխուժացնի ջանքերի գործադրումը, Քեսապի անդորրը վերականգնելու համար:*

*Մենք գնահատում ենք Ռուսաստանի Դաշնութեան արտաքին գործերի նախարարութեան յայտարարութիւնը եւս՝ Քեսապի հարցը ՄԱԿ-ի ապահովութեան խորհրդում քննարկելու մասին, նրա հայութեան դէմ կատարուած յարձակումներին տալով սկզբունքային գնահատական: Դժբախտաբար, ՄԱԿ-ի Ապահովութեան խորհրդում նոյնպէս գործում է արեւմտեան պետութիւնների շահերի գործօնը (Ամերիկայի ղեկավարութեամբ), որի արդիւնքում մերժուեց Քեսապի հարցը մտցնել օրակարգ:*

*Քեսապի դէպքերը ցոյց տուին, որ 1915 թ. Հայոց ցեղասպանութիւնից 100 տարի յետոյ, Թուրքիան չի փոխուել, նոյն վայրագ պետութիւնն է մնացել եւ առիթը բաց չի թողնում հայ ժողովրդի նկատմամբ նոր ցեղասպանութիւն գործադրելու, ուստի պէտք է միշտ զգօն ու պատրաստ լինենք այն դիմակայելու համար, ինչպէս Արցախում: Արցախեան յաղթանակների փառքը պէտք է միշտ վառ պահել եւ պատրաստ լինել թշնամու կողմից անակնկալները չէզոքացնելու...:*

*Հայոց ցեղասպանութեան 100-ամեայ տարելիցի շեմին ենք, եւ մեր ամէն կարելին պէտք է անենք, որպէսզի Թուրքիան ճանաչի Հայոց ցեղասպանութիւնը եւ հատուցի հայութեան հասցրած վնասների համար՝ վերադարձնելով նաեւ նրա բնօրրանները...:*

*1915-ի Հայոց ցեղասպանութեան 99-րդ տարելիցի առթիւ խոնարհւում ենք, Սումկայիթի, Պաքուի, Կիրովապատի եւ Ատրպէյճանի այլ քաղաքների անմեղ զոհերի, եւ 1988 թ. Արցախի ազատագրական պայքարում հերոսի մահով ընկած նահատակների յիշատակի առջեւ:*

VA Print Media
Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles
Նոր Գիրքերու Տպագրութեան եւ
Հին Գիրքերու Նորոգութեան Համար
Հեռաձայնել՝ ՎԱՀԷ ԱՃԱՊԱՀԵԱՆԻՆ

Vahe Atchabahian
1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104
Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com

## ՀԵՏԱՊՆԴՈՒՄ ԱՆՏԵՂԻՏԱԼԻ ՈԳՈՎ...

*Շարունակուած էջ 15-էն*

*երթա՛ք, էս ինչ էք անում, ինչպէս երեւում է, դուք թուրքերի եւ օտարների կամակատար մարդիկն էք, դռները բացել եւ ժողովրդին դուրս էք անում, արտագաղթի դռները փակէք եւ ժողովրդի մտքին եղէք:*

*Ապրիլների (ոչ թէ միայն Ապրիլին, այլ տարին բոլոր) պատգամն է՝ միասնական ճիգ ու ջանք մեր բիւրաւոր նահատակների երազանքների իրականացման ճամբին՝ հայութեան համախմբում հայրենիքում, Սփիւռք-Հայաստան միասնական կամուրջի պահպանում եւ սերտացում ու հայրենիքի հզօրացման միատեղ նուիրաբերում, պահանջատիրութեան ալիքի առաւել ուժեղացում: Այս Ապրիլեան դառն ու ողբալի օրերին պահանջում ենք՝ հայրենի իշխանաւորները սրտցաւ գտնուեն իրենց երկրի եւ ժողովրդի նկատմամբ, թալանչիների ձեռքերը կտրեն, ապահովութեան եւ արդարութեան պայմաններ ստեղծեն, չարագործներին խստիւս պատժել, սոցիալական եւ բարոյական ոլորտներում ստեղծեն տանելի եւ բարւոք վիճակ ժողովրդի համար: Քաղաքական ոլորտներում հակընդդէմ բեւեռների միջեւ հաւասարակշռուած քաղաքականութիւն:*

*Մարդս առանց հայրենիքի նմանում է՝ ծիտը փշին, անապահով եւ գաղթականի կեանք:*

## ԿՈՉՄՕ ԿՈՉՄՈՅԵԱՆ-100

*Շարունակուած էջ 16-էն*

*ուսուցչուհի փոքրիկ կճուճ բերեց, տուեց հօրաքրոջս ու ասաց՝ սա «ՏՊՈՐՏՍ» ընկեր Կոզմոյանին: Հօրաքրոջս հետ մածունի սերը ճաշակեցինք: Հայրս երբ տուն եկաւ ու իմացաւ, պնդեց որ կճուճը ետ գնայ: Անել վիճակում հօրաքոյրս լաց եղաւ ու խոստովանեց, թէ սերը կերել ենք, սակայն Կոզմոյի որոշումը նոյնը մնաց: Կճուճը տիրոջը գնաց առանց սերի...»:*

*Կեանքային այսպիսի դրուագները խճանկարի պէս են, երբ հաւաքում, ճիշտ տեղն ես դնում, կարելի է պատկերացնել, ինչու չէ նաեւ ամբողջացնել կեանքի ազնիւ ճանապարհ անցած, մտաւորական աշխատանքի կէսդարեայ կենսագրութիւն ձեւաւորած հայ մարդու դիմանկարը, որն իր դաւանած արժէքները՝ կեանքը բարոյական ճշմարտութիւնների վրայ կառուցելու սկզբունքը, փոխանցել է նաեւ ընտանիքի անդամներին: Այդպէս եմ ճանաչում նրա երկու զաւակներին՝ Ռուբէն Կոզմոյեանին՝ խորհրդային շրջանում դիւանագէտ աշխատած, կեանքի հարուստ փորձով, բնոյթով մեղմ, նկարագրով բարեկիրթ ու զուսպ մարդուն, յար եւ նման իր յուշագրութիւններին - սակաւ բառերի, սեղմ տողերի բովանդակային խորքով ու զգացականութեամբ հաղորդական եւ Արմանուշ Կոզմոյեանին՝ բացառիկ զարգացած մտաւորական, սկզբունքային ինտելեկտուալ կին, միաժամանակ՝ շատ զգայուն ու նուրբ էութիւն, արեւելագիտութեան դոկտոր, պրոֆեսոր: Վահագն Կոզմոյեանին չեմ ճանաչել, բայց մեր զրոյցից փոքր ինչ տեղեկանալով ընտանիքի պատմութեանը, իմացայ, որ հայրը շատ երջանիկ է եղել, երբ կրտսեր որդին նախընտրել է տեխնիկական կրթութիւնը, կիբեռնետիկի մասնագիտութեամբ:*

*Ռուբէն Կոզմոյեանի յիշողութիւնները/այդպէս են եւ հուշագրութիւնները/ ինձ յիշեցնում են կտաւի թափանցիկ մակերեսներ, ջրաներկի բաց գոյներով վրձնած: Այդպէս նա նաեւ մօր դիմանկարն է ստեղծում. «Մայրս մահացաւ 92 տարեկանում, իմ կեանքից հեռացաւ իմ հանրագիտարանը: Եթէ անհամեստ արտայայտուեմ եւ ասեմ, որ ինչ-որ էրուդիցիա ունեմ՝ պարտական եմ մօրս աւելի, քան իմ կարդացածին կամ կեանքի փորձին: Նա, իմ այն հասակում եւ այնպէս է ինձ տուել «Իլիականն» ու «Ոդիսականը», հայ եւ ռուս գրականութիւնը, որ ուղղակի արեանս մէջ է մտել: Բացառիկ յիշողութեան, բացառիկ ճաշակի տէր մեկը. յաճախ տանելով օպերային թատրոն՝ դիտումները սկսելով «Անուշից», նա էր, որ իմ մէջ ներարկեց արուեստի, դասական երաժշտութեան հանդէպ սէրը»:*

***

*Չարենցի «Ժամանակի շունչը դարձիր»-ը այդ շրջանի համար ոչ թէ եւ ոչ միայն բանաստեղծական ու պատեթիկ էր, այլ՝ դրամատիկ ու ողբերգական, երբ իրականութիւնը շատ չանցած բացեց ծանր ճշմարտութիւններ: Սակայն շատերը, ստալինյան ռեպրեսիաններին ականատես լինելով անգամ, չկարողացան հաւատալ դրանց. այդպիսին էր խորհրդային գաղափարախօսութեան ազդեցութեան ուժը: Այդպէս է մտածել նաեւ Կոզմօ Կոզմոյեանը. նա անկեղծօրէն է վստահել երկրին ու կուսակցութեանը եւ մինչեւ վերջ էլ հաւատացած է եղել, թէ ժողովուրդների հայրը իրականութեանը տեղեակ չի եղել, թէ ինֆորմացիան իրեն ճիշտ չեն տեղ հասցրել, խեղաթիւրել են:*

*Սիրել է Չարենցին ու նրա պոէզիան շատ բարձր գնահատել, «Անսանձ մարդ էր, մի բան պիտի բերեր գլխին», - տխրել է՝ օբիեկտիւ տեսնելով իրականութիւնը: Ցաւ է ապրել, ծանր տարել, երբ արգելել են բանաստեղծի գրքերը: Հետագայում իմացել են, որ նա իր տանը թաքուն պահել էր «Գիրք ճանապարհին»...*

*Նա եղել է այն մարդկանցից, ովքեր ամենաանյոյս ժամանակներում անգամ կարողանում են ապրելու կամք դրսեւորել, ելքեր փնտռել, իսկ նրանցից ոմանք ընտրում են նուիրումի դժուարին ճանապարհը՝ լինի աշխատանքային, գիտական, ստեղծագործական, թէ մէկ այլ, եւ ամենակարեւորը՝ կարողանում են պահպանել հաւատարմութիւնը դաւանած իտէալներին, աշխատանքին:*

*Չնայած ժամանակի մռայլ իրականութեանն ու ծանր փորձութիւններին՝ Կոզմօ Կոզմոյեանը ապրել ու աշխատել է պատուախնդրօրէն՝ արդարութեան, բարեմտութեան ու բարեխղճութեան հաւատամքով, մարդկային իր համակրելի-մեղմ նկարագրի վստահութիւնը ներշնչել միջավայրին, ընկերներին, զաւակներին:*

# ՀԱՅ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԸ

*Շարունակուածէջ 8-էն*

*Յիշեալ երգերը, այլ երգերի եւ պարեղանակների հետ մէկտեղ հրատարակուել են տարբեր ժողովածուներում, ու, հետագայում, որպէս երաժշտական գոհարներ, օգտագործուել են կոմպոզիտորների կողմից:*

*Քննարկուող ժամանակաշրջանում, հայ ժողովրդի պղումների, մաքառումների, վշտի, ցաւի ու տառապանքի երգիչները, բնականաբար, պիտի լինէին նրանք, ովքեր աւելի մօտ էին կանգնած իրեն: Նրանք էին գուսաններն ու աշուղները, որոնց արուեստը հասաւ աննախադէպ բարձունքի:*

*Ահա աշուղների փաղանգը, որոնց արուեստը այսօր էլ հմայում է մեզ իր կատարելութեամբ, Ջիւանի, Խայեաթ, Մահուբի Գէորգ, Աշխոյժ եւ, իհարկէ՝ Շերամ:*

*Այս փաղանգի մէջ ամենափայլուն աստղը, անշուշտ, Ջիւանին է: Նա առաջինն էր, որ վճռական հետեւողականութեամբ մաքրեց աշուղական երգերի լեզուն եւ իր երգերն ու բանաստեղծութիւնները գրեց մաքուր, գրական հայերէնով:*

*Եղեռնի տարիների գուսանական երաժշտութեան գագաթը Շերամն է: Ժամանակին «Ուստա Գոքոր» անունով յայտնի այս գուսանը յիսուն տարի շարունակ ստեղծագործել է ու երգել:*

***

*Ինչպէս նախապէս նշեցինք, Մեծ Եղեռնի պատճառով հայ արուեստագէտների մի ստուար քանակութիւն յայտնուեց օտար երկրներում, ու նրանց արուեստը կամայ թէ ակամայ դուրս ելաւ ազգային նեղ շրջանակներից ու դարձաւ համաշխարհային երեւոյթ:*

*Եղեռնի տարիներին հայ եւ օտարազգի նուաճումները կենդանացնող արտիստների են եղել Յովհաննէս Նալպանտեանը, Դաւիթ Դաւթեանը, Արմենակ Շահմուրատեանը, Բաբայեան քոյրերը, Տիրան Ալիքսանեանը եւ շատ ուրիշներ:*

*Ջութակահար Յովհաննէս Նալպանտեանի անունը այսօր էլ կարելի է կարդալ Պետերբուրգի երաժշտանոցի մարմարեայ յուշատախտակի վրայ:*

*Հայ իրականութեան մէջ, առաջին դաշնամուրային զուգանուագի հեղինակներն են Ելենա եւ Եւգենիա Ադամեան քոյրերը, որոնց կատարումները միջազգային մամուլը ժամանակին որակել է որպէս «կրկնակի հնչողութիւն ունեցող մէկ գործիքի» հնչողութիւն:*

*Բնիկ պոլսեցի, դաշնակահար Վահրամ Սվաճեանի կատարողական արուեստի մասին Փարիզի թերթերից մէկը գրել է. «Կոշտ դաշնակը հրաշալի քնար մը կը դառնայ իր մատներուն տակ»:*

*Արտիստական փայլուն կեանք է ունեցել դիրիժոր-խմբավար Ալեքսանդր Ասլանեանը: Նրա ղեկավարած նուագախմբի հետ ելոյթներ են ունեցել Սպենդիարեանը, Գլազունովը, աշխարհահռչակ Ջութակահար Եաշա Հայֆեցը, Իսայի Դոբրովէյնը եւ ուրիշներ: Հետագայում, նիւեորքաբնակ Ասլանեանը աշխատել է Մետրոպոլիտեն օպերային թատրոնում: Նրա ղեկավարած համերգներում մշտապէս հնչել են հայ կոմպոզիտորների ստեղծագործութիւններ, ի մասնաւորի Սպենդիարեանի սիմֆոնիկ գործերը:*

*Առանձին հետաքրքրութեան նիւթ կը լինի անդրադառնալը 20րդ դարի մեծագոյն դիրիժորխմբավարներից մէկի Կոնստանդին Սարաջեւի արուեստին, որը խմորուած է հայկական, եւրոպական եւ ռուսական երաժշտականկատարողական փայլուն դրսեւորումներով:*

*Շարունակելու 19րդ դարի օպերային շողշողուն աստղ Նադեժդա Պապայեանի կատարողական աւանդոյթները, իրենց արուեստով աշխարհին զարմացրին երգչուհիներ՝ օրիորդ Մարգարիտ Բաբայեանը եւ Լիւսի Սեւումեանը:*

*Բնիկ Շիրակի ծնունդ Լիւսի Սեւումեանը արտիստական գործունէութիւնը սկսել է որպէս դրամատիկ թատրոնի դերասանուհի եւ 1914-20 թուականներին, Վահրամ Փափազեանի գլխաւորած խմբում խաղացել է Օֆելիա («Համլետ»), Դեզդեմոնա («Օթելլօ»):*

*Ցեղասպանութեան տարիներին նշանաւորուեց հայազգի նշանաւոր երգիչներ Տիգրան Նալբանդեանի եւ Արմենակ Շահմուրատեանի արուեստը:*

*Տիգրան Նալբանդեանը հռչակուել է որպէս դասական ռոմանսի, հայկական ժողովրդական, գուսանական երգերի լաւագոյն մեկնաբան: Բնիկ մշեցի, «Տարօնի սոխակ» անունով հռչակուած երգիչ Արմենակ Շահմուրատեանը հիմնականում յայտնի է ժողովրդական երգերի, եւ մասնաւորապէս Կոմիտասի երգերի անզուգական կատարող:*

*Անցեալ դարի առաջին երկու տասնամեակում իրենց շարժուն գործունէութիւնը ծաւալեցին նաեւ ժողովրդական գործիքների վրայ նուագող մենակատարները: Թառահարներ Ներսէս Ղօրղանեանը, Աղամալ Մելիք-Աղամալեանը, Բալա Մելիքեանը, քամանչահար Սաշա Օգանեզաշվիլին եւ ուրիշներ, ոչ միայն տաղանդաւոր, վիրտուոզ մենակատարներ էին, այլեւ եղան արեւելեան երաժշտախմբերի ստեղծողներ, եւ իրենց արուեստով մի քանի տասնեակ շարունակ գերեցին ողջ Անդրկովկասի եւ Ռուսաստանի հայաշատ քաղաքների երաժշտասէրներին:*

*Հայ երաժշտութեան պատմութեան մէջ հիմնական բեկումը կապուած է Կոմիտասի անուան հետ: Կոմիտասն իր երգերով, մասնաւորապէս խմբերգերով, հայ երաժշտութեան մէջ ստեղծեց բազմաձայն (պոլիֆոնիկ) հնչողութեան միաժամայն զուտ ազգային դպրոց: Նրա ստեղծած երգերն ու խմբերգերը իրենց ձեւի ու բովանդակութեան առումով դարձան ուղենիշ յետագայ ստեղծագործողների համար:*

*Քննարկուող ժամանակաշրջանում վերջնականապէս ձեւաւորեց հայ դասական ռոմանսը, որի դրօշակակիրներն էին Ռոմանոս Մելիքեանը, Ալեքսանդր Սպենդիարեանը, Արմէն Տիգրանեանը, Եղիշէ Պաղտասարեանը, Անտոն Մայիլեանը եւ ուրիշներ:*

*Նոյն ժամանակաշրջանը նշանաւորուեց նաեւ ազգային-հայրենասիրական երգերի զգալի աճով: Այդ երգերի զգալի մասը այսօր էլ, հիմնականում որպէս անհեղինակ գործեր, մեծ տարածում ունեն ժողովրդի մէջ:*

*Մեր օրերում «Յեղափոխական» պիտակի տակ երեւան եկած այդ երգերը, հիմնականում ժողովրդական երգեր են: Հայրենասիրական այդ երգերը իրենց գեղարուեստական բարձր արժանիքների պատճառով, չափազանց ազգային են եւ հայկական երգի ժառանգութեան մէջ կարեւոր մասն են կազմում:*

*Ազգային-հայրենասիրական երգերի ստեղծման, մշակման գործում հսկայական դեր ունի կոմպոզիտոր Գրիգոր Սիւնին:*

*Անցեալ դարասկզբին գործիքային երաժշտութեան մէջ նոր խօսք ասացին Սարգիս Բարխուդարեանը եւ Նիկողայոս Տիգրանեանը:*

*Ազգային օպերա ստեղծելու գաղափարը մեր կոմպոզիտորների երեւակայութեան մէջ երեւան է եկել դեռ 19րդ դարի կէսերին: Հայկական առաջին օպերան՝ «Արշակ Երկրորդ»ը իր վրայ էր կրում եւրոպական, մասնաւորապէս իտալական օպերայի ազդեցութիւնը: Արեւելեան Հայաստանում ազգային օպերա գրելու առաջին փորձն արեց Կարա Մուրզան «Շուշան» օպերայով, որը, դժբախտաբար անաւարտ է մնացել:*

*Հայկական ազգային առաջին օպերան՝ «Անուշ»ը ստեղծուեց անցեալ դարի առաջին տասնամեակում, եւ նրա առաջին բեմադրութիւնը կայացաւ 1912 թուականին՝ Ալեքսանդրապոլում (Գիւմրի): Հայկական օպերային արուեստի այդ գլուխ-գործոցը, նշանաւոր երգիչ Շարա Տալեանի բնութագրմամբ՝ ծնուեց «ցնցոտիների մէջ», դարձաւ ու մնաց մեր օպերային արուեստի իրական մարգարիտը:*

*Կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարեանը իր պատմա-հայրենասիրական «Ալմաստ» օպերան նոյնպէս ստեղծեց Եղեռնի տարիներին 1916-20 թ.թ.:*

*Սիմֆոնիկ երաժշտութեան բնագաւառում, Սպենդիարեանի կողքին, յաջող փորձեր ունեցան կոմպոզիտորներ Անուշաւան Տէր-Ղեւոնդեանն ու Սպիրիդոն Մելիքեանը:*

*Եւ այսպէս.*

*Հայ երաժշտութեան ստեղծագործական, երաժշտա-կատարողական արուեստի բնագաւառը 20րդ դարի առաջին երկու տասնամեակում, ահեղագորդ եղեռնի տարիներին, նշանաւորուեց միջազգային համբաւի տիրացած հայ կոմպոզիտորների, երգիչ-երգչուհիների, դաշնակահարների, ջութակահարների, դիրիժորների, խմբավարների, ժողովրդական երաժշտական գործիքներ նուագողների մի հսկայական խմբի երեւան գալով:*

*Սակայն Համաշխարհային Առաջին պատերազմը, սոցիալ-քաղաքական անբարենպաստ պայմանները, եւ, իհարկէ, անպատմելի Մեծ Եղեռնը, ինքնուրոյն պետականութեան եւ նիւթական կայուն հէնքի բացակայութիւնը՝ հնարաւորութիւն չտուեցին հայ ժողովրդին ստեղծելու բարձրագոյն երաժշտանոց, երաժշտական դպրոցներ, օպերային թատրոն, համերգային ընկերութիւն:*

*Ահա այդ պատճառով էլ, ինչպէս նախկինում, այնպէս էլ անցեալ դարասկզբին, մեր երաժիշտների գործունէութիւնը հիմնականում ծաւալուեց Մայր Հայրենիքից դուրս, օտար հորիզոնականների կենտրոններում ու բեմահարթակների վրայ:*

*Ինչպէս գրում է երաժշտագէտ Մաթեւոս Մուրատեանը՝ «Հակառակ իրենց կամքի ու նպատակադրման, նրանք ստիպուած էին ծառայելու օտարներին: Եւ նրանք, օտար երկինքների տակ, հասնելով փառքի գագաթնակէտին, իրենց ազգանուններով էին միայն բարձրացնում այն ժողովրդին, որը ծնել ու սնել է նրանց եւ որին ծառայելու փափաքը մշտապէս մխում էր նրանց հայրենասէր սրտերում...»:*

HayastanInfo.net

